В отличие от экспериментаторов, психодинамисты и трансперсоналисты сделали огромный шаг в исследовании пост- и внеопытной реальности, доказав, как говорит В. Виндельбанд, что «весь фундамент нашей душевной жизни состоит из бессознательных процессов, от взаимных отношений которых всецело зависит содержание нашего сознания на данный момент. Самое понятие этих бессознательных процессов исключает возможность их восприятия; мы можем заключать о их наличности лишь по тому воздействию, которое они оказывают на сознание, и наше знание о них необходимо ограничено этими проявлениями» [26]. Но они, собственно,

добывают внеопытное средствами подсознания, поэтому их знание ограничено им. Но чувственный опыт можно переступить не только в измененном состоянии сознания, как это делают трансперсоналисты, а также можно знать о том, что находится по ту сторону этого опыта не только «по тому воздействию, которое он оказывают на сознание», опять же «ограничивая наше знание», но также опытно, но без ограничений.

Но для этого необходимо соответствующее мышление. Тот же В. Виндельбанд различает произвольное и непроизвольное мышление, оба из которых «частные случаи общей зависимости мышления от воли, и если первый тип сводится исключительно к преобладанию сознательных волевых влечений над бессознательными», то второй находится под воздействием бессознательной воли [27]. При этом, в содержание произвольного мышления включено также чувство, в том числе «сложное и содержательнее из всех чувств – чувство «Я». К чему в конечном счете сводится такое мышление? Произвольное мышление оказывается на собственной высоте «лишь в том случае, когда оно примыкает к чувству «Я», пропитанному моральными убеждениями, и когда воля, управляющая представлениями, в последнем счете служит нравственным целям. ... «Стремление же истине образует лучшую силу произвольного мышления». [28]. Следовательно, главным условием истинного мышления является мыслящий, который в своем индивидуальном «Я» находит моральные убеждения и стремление к истине. Можно сказать и противоположное: в этическом важно не чувство, подобно мистическому трансперсонального переживания, не нагруженная бессознательными мотивами или отвлеченными этическими принципами воля, а мыслительный процесс, содержащий своеобразно направленные как на чувство, так и волю.

В таком мышлении заключена не меньшая объективность, чем в восприятии посредством органов чувств. У. Джеймс говорил о важности функции *не-воспринимаемого* (non-perceptual) опыта, содержащегося в мышлении. Трудность признания его как равноценного, наряду с восприятиями, объективного мира заключается в том, что мыслимый мир, «подобно миру восприятий, сначала открывается нам как хаос», что «мы привыкли видеть в восприятиях единственную подлинную реальность», поэтому «склонны упустить объективность, заключенную в не-воспринимаемом опыте самом по себе». Далее он утверждает: мыслимый «невоспринимаемый опыт может проявляться как объект или поле объектов», т.е. как объективный мир. «Я позволю себе, – говорит У. Джеймс, – привести прекрасно выведенные об этом слова Мюнстерберга: "В мышлении я только думаю о своих объектах, но они выступают в мыслях моих совершенно так же, как и воспринимаемые объекты, так что генезис постижения их совершенно безразличен, нет основания думать, что объект, существующий

только в мысли, скрыт внутри мыслящего субъекта. Мыслимый мной объект, существование которого я отмечаю, хоть он и не воздействует сейчас на мои органы чувств, все же занимает определенное место во внешнем мире, совершенно так же, как объект, непосредственно видимый мной» [29]. Куда после этого делось деление на субъект и объект в психологическом наблюдении или эксперименте, не говоря уже о том, что само это деление произвело именно мышление? Ибо опыт здесь осуществляется уже не со стороны восприятия, к которому через формирующий принцип мышления примыкает понятие, а объективно продолжается в мыслительном опыте самосознающего «Я», где как объект мышления, так и мыслящее «Я» – суть объекты, а опыт объективен.

Вся трудность, недовершенность и нецелостность познания душевных явлений заключаются в том, что при нашем несовершенном сознании не удастся «переступить» и этот опыт, продолжая жизнь в мышлении вплоть до сверхчувственного восприятия сущностного бытия в философском смысле или духовных сущностей в смысле предметного мышления. «Для сегодняшнего наблюдения внутренней душевной жизни у нас отсутствует сущностное – бытие (Wesen). Но благодаря этому, поскольку мы рассматриваем голое явление и уже не переживаем бытие (Wesen), мы получаем, переживая своё внутреннее, уже не бытие (Sein), а видимость (Schein). И так, как сегодня переживаются мышление, чувствование и желание, они являются видимостью» [30]. Обладающие бытием духовные существа, назовем мы их в терминах трансперсональной психологии, юнгианского анализа или антропософии – суть факты сознания, и путь к ним пролегает через внутренне переживаемое мышление, которое наперед не перегружено понятиями. «Кто хочет попасть в царство небесное психологического познания, – писал Т. Липпс, – должны стать как дети, т.е. должны забыть до известной степени все, чему научились до этих пор. Яснее выражаясь, они должны постараться выражать факты сознания в таких и только таких понятиях, из которых исключено все, имеющее своим происхождением какую бы то ни было другую сферу, кроме сферы фактов сознания. Они должны научиться судить о понятиях по этим фактам, а не о фактах по понятиям» [31].

Напрашивается вопрос: где они, эти бытийствующие существа локализованы? Ответ был дан еще К. Юнгом: в бессознательном, которое и есть ничто иное, как тело. Сегодня эти голоса раздаются с самых различных сторон. К примеру, замечает А.А. Брудный: «Откуда бессознательное? От природы, из глубин тела, о котором мы знаем ничтожно мало» [32]. По крайней мере можно зафиксировать: если полвека назад исследователи были удивлены и удовлетворены одним лишь фактом существования бес-

сознательного, то сейчас все больше волнуют вопросы генезиса, становления и локализации бессознательного.

Думать, что они буквально локализованы в органах, означало бы регрессировать к трехгодовалому возрасту и пытаться искать за экраном телевизора маленьких человечков. Этот вздор перестает быть и превращается в действительность, когда под телом понимается не только физическое тело, но сверхчувственные тела в их непрекращающейся деятельности и становлении, обеспечивающие деятельность физического тела*. В свою очередь, деятельность сверхчувственных тел в здоровом состоянии свободна от земных влияний и осуществляется внеземными силами и духовными существами. Сверхчувственным существа действуют в сверхчувственных телах, но то, какого рода существа привлечены в эфирное (например, Ангел или «духовный гид» по С. Грофу) или астральное тело (например, люциферический дух или «Тень» по К. Юнгу) данного человека и то, как его "Я" властвует над ними или воспринимает их «идеальные интуиции», зависит от степени совершенства сознания. Негативным двойником этого является тот хаос, который возникает в эндогенном психотическом больном, не знаящем, кто эти существа, каковы их намерения и как с ними иметь дело. Поэтому одновременно бесятся как его высшие психические функции, так и функции его организма (иначе даже без маркировки локализации соматического нарушения ему не помогли бы нейролептики; отметим также, что именно патология дает возможность сделать конкретным любое содержание психической жизни, освободившись от абстракции). Все это не оставляет места дуализму: «природа – видимый дух, а дух – невидимая природа» (Ф. Шеллинг). В познании духа, в отличие от чувственного познания, они не противостоят друг другу, а «прорастают» одно в другом. «Если в переживании мыслей идти дальше, то обнаруживается, что навстречу этому переживанию выступает духовная действительность. Душевный путь приводит к духу. И на этом внутреннем душевном пути можно достичь духовной действительности, которую вновь находишь в природе» [33].

Досадное упущение трансперсональных психологов заключается в том, что они только указывают на дух, не осмеливаясь *естественно-научно* и конкретно находить его во внутреннем созерцании, поэтому К. Уилбер компромиссно делит мир на грубый и тонкий. «Я не знаю никакой грубой материи, – говорит Э. Геккель, который, по его собственному признанию, "презирал гнилые компромиссы в борьбе за правду», отстаивая «монисти-

*Примечательно, что образование на психологических факультетах начинается с «Трактата о душе» Аристотеля, но никто из «корифеев» и разу не воспринял всерьез его деление душ (растительная, животная, разумная душа).

ческую мораль, исходящую из разума, науки и опыта» [34]. В то же время С. Гроф, взамен поиска путей повышения сознания, выуживает тайны психики из бессознательного методом его понижения. Стоило бы обратить должное внимание на то, что только на двух проанализированных случаях повышенного сознания (антрополога Р. Бенедикт и гештальтпсихолога М.Вертгеймера) А. Маслоу удалось прийти к идеям самоактуализации, пирамиды потребностей, пиковых переживаний и прочее, в том числе к идее самой трансперсональной психологии. Известно его признание в том, что все это было не запланированным исследованием, а попыткой юного мыслящего человека понять двух своих учителей, необыкновенных людей, которых он любил («я стремился понять, почему эти два человека так отличаются от обычных людей, которыми полон мир»). Интерес к случаям повышенного сознания привел его к исследованию конкретных проявлений «трансценденции обычной формы сознания» – к пиковым переживаниям или, как сейчас называют, – «объединяющему сознанию», протекающим вне пространственного и временного восприятия, при полном контроле телесных отправлений со стороны духа.

Пока психология идет мимо этих реалий, она будет без конца пере-кладывать гири на весах рокового дуализма психики и сомы, приписывая психике соматику или соматике психику и не догадываясь об объединяющем их едином духе. Такими шатаниями она идет с тех пор, когда после выхода в 1818 г. «Учебника душевных болезней» психиатра и психолога И. Гейнрота разгорелась борьба «психиков» и «соматиков». Сам автор принадлежал к классу «психиков» и понимал психоз психологически и этически – как последствие пороков и страстей. Это, однако, вовсе не помешало ему активно применять кровопускание («если нужно, надо продолжать кровопускание до обморока»), смиренный стул и мучительные холодные обливания [35]. Симптоматичность случая И. Гейнрота в том, что для того, чтобы быть последовательным «психиком», ему помешало его медицинское образование. Точно также, чтобы понять тело, экзистенциальному психологу мешает его гуманитарное образование, для того, чтобы понять факты индивидуального сознания, не противоречащие реальности, социальному психологу мешают широкие обобщения и т.д.

Эти противоречия ведут к отмеченному выше ощущению «неподлинности», «видимости» познания душевных явлений, наблюдаемые даже у сколько-либо критично настроенных студентов. Стремительно плодящиеся позитивистические исследования и обильные промежуточные мелкие результаты с одной стороны, а с другой – углубление и расширение познания бессознательного и обнаружение в нем разнообразных содержаний раскалывают науку на две ни в чем не стыкующиеся области, каждая из которых по мере надобности доказательств апеллирует к телу и физиологи-

ческим основам. Эта почти шизофреническая расколотость в последние несколько десятилетий ясно осознается, о чем свидетельствуют непрекращающиеся разговоры о холизме, который тем не менее постоянно скатывается в эклектическое худо-бедно мирное сосуществование. **Довершение и исцеление психологии (в обоих смыслах – целостности и выздоровления), должно исходить из духовной науки, в недрах которой она естественно перетечет в науку о духе – пневматологию.** Более того, через психологию уже с новых позиций можно вернуться к теологическим аспектам пневматологии, ибо где еще искать Бога, если не в душе? Когда-то он говорил через сивилл, но «онемел говорящий источник», словами М. Цветаевой, «Сивилла выжжена, сивилла – ствол// Все птицы вымерли, но Бог вошел».

В донаучный период развития психологии (психология, по меткому выражению Г. Эббингауза «имеет длинное прошлое и короткую историю») проблема духа не была разделена с проблемами души. Сначала исчезла пневматология, а после становления психологии как науки науками о духе стали считаться логика, этика и эстетика, и в психологию путь духа был закрыт. Это означает, что психологов не касаются проблемы истинного (ложного), нравственного (безнравственного), гармоничного (дисгармоничного), прекрасного (безобразного). Не касается их знание о духе не только метафизически, но и физически – психофизиологические механизмы работы духа в организме: пневма – дыхание (хотя сегодня уже робко говорят о такой области, как пнемопсихосоматология). Но именно так пожелал В. Вунд. Он замкнул психофизиологию в пространстве наглядно-телесных явлений, и размазал по неопределенным терминам этическое в человеке и под конец разделался с этим. «Этика по В. Вунду неопределенна, – говорит Г. Геффтинг, – частью сливается с психологией народов, частью переходит в метафизические и религиозные рассуждения». Вот отрывок из книги В. Вунда: «При чисто эмпирической точке зрения мы с нашими идеалами, как бы они ни были ценны и необходимы, оказываемся у пропасти, через которую нет моста» [36]. При этом, заявляет В. Вунд, если мы не последуем за ним по его пути, все будет «пусто и безнадежно». Нам же, по прошествии лет, кажется более, чем определенным: «при чисто эмпирической точке зрения» и «без идеалов» психология, как мир, оказались у пропасти. Но «мост», невзирая ни на что и вопреки всему, все же есть.

Л и т е р а т у р а

1. **Н. О. Лосский, Э. Л. Радлов**, Предисловие к сборнику «Новые идеи в философии», номер 4, изд-во «Образование», СПб, 1913, 156 стр., стр. 1.
2. **В. Шуппе**, Понятие психологии и ее границы, В: Новые идеи в философии, сборник 4, изд-во «Образование», СПб, 1913, стр. 3.

3. Там же, стр. 5.
4. **Штайнер Р.**, Наблюдение природы, эксперимент, математика и ступени познания духовного исследования. М.: Титурель, 2006. – 160 с., стр. 21- 24.
5. **И. Ф. Гербарт**, О возможности и необходимости применять в психологии математику, В: Гербарт И. Ф. Психология, М., издательский дом «Территория будущего», 2007, серия 2, Университетская библиотека Александра Погорельского", 288 с., стр. 39-59.
6. **Ф. Паульсен**, Введение в философию, издание Московского психологического общества, М.,1904, 446 стр., стр. 84.
7. **Ф. Ницше**, Странник и его тень, издательство Д.П. Ефимова, М., 1903, 330 стр., стр. 205.
8. Интервью М. Хайдеггера, журнал «Эспресс», L'Express, 1969, 20 oct., p. 79-85, интернет-ресурс: www.heidegger.ru
9. **Д. Эрайт**, Стихи, 120-127 Глагол «думать». Иностранная литература стр. 125.
10. **В. Шуппе**, указ. соч. стр. 9.
11. Там же, стр. 13.
12. **И. Ф. Гербарт**, О возможности и необходимости применять в психологии математику, В: Гербарт И.Ф., Психология, М., издательский дом «Территория будущего», 2007, серия 2, «Университетская библиотека Александра Погорельского», 288 с., стр. 39-59, интернет-ресурс: www.rumvi.com
13. **Ницше**, Странник и его тень, издательство Д.П. Ефимова, М., 1903, 330 стр., стр. 257-258.
14. Интервью с М. Хайдеггером, там же.
15. **К. Штумпф**, явления и психические функции, В: Новые идеи в философии, сборник 4, изд-во "Образование", СПб, 1913, 156 стр., стр. 57, 60.
16. **К. Штумпф**, указ. соч., стр. 64-65.
17. **Ф. Паульсен**, указ. соч. стр. 77, 378.
18. **Bargh, J. A., Ferguson, M. L.**, Beyond behaviorism: On the automaticity of higher mental processes, Psychological Bulletin, 2000, 126, p. 944.
19. **С. Смит**, Афоризмы, В: Пять веков английского афоризма, журнал "Иностранная литература", 7, 1992 стр. 180.
20. **Natorp P.**, PhilosophiedesAlsОб цит. по: Г. Шпет, Сознание и его собственник, Заметки, В: кн.: Георгию Ивановичу Челпанову от участников его семинариев в Киеве и Москве, Статьи по философии и психологии, М., 1916, стр. 156-210, интернет-ресурс: www.predela.net
21. **С. Гроф**, За пределами мозга, издательство Трансперсонального института, 1993, 504 стр., стр. 9.
22. **В. Вунд**, "Введение в психологию", издательство "Космос", М, 1912, 167 стр., рецензия и перевод Н.Самсонова
23. **Г. Шпет**, указ. соч.
24. **И. Ф. Гербарт**, О возможности и необходимости применять в психологии математику, там же, стр. 49.
25. **Гербарт И. Ф.**, Психология, там же.
26. **В. Виндельбанд**, Прелюдии, издание Д.Е. Жуковского, СПб, 1904, 374 стр., стр. 180.
27. **В. Виндельбанд**, там же, стр. 185.
28. **В. Виндельбанд**, там же, стр. 191-192.
29. **У. Джеймс**, Существует ли сознание? В: "Новые идеи в философии", номер 4, изд-во "Образование", СПб, 1913, 156 стр., стр. 112-114.
30. **Р. Штайнер**, Исторический путь естествознания, М., "Титурель", 2011, 200 стр., стр. 153.

31. **Т. Липс**, Пути психологии, В: сборнику "Новые идеи в философии", номер 4, изд-во "Образование", СПб, 1913, 156 стр., стр.128-129.
32. **А. А. Брудный**, лекция "Социальное пространство и молодежь", 4 региональная встреча ЭКО сети центральной Азии, www.rideo.tv
33. **Р. Штайнер**, Мой жизненный путь, изд-во "Evidentis", . 2002, 347 стр., стр. 52.
34. **Э. Геккель**, Мировые загадки, "Мысль", Лейпциг-СПб, 1906, 227 стр., стр. 224.
35. **Ю. В. Каннабих**, История психиатрии Л., Государственное медицинское издательство, 1928, интернет-ресурс: www.psylib.org
36. **Г. Гевфдинг**, Современная философия, Изд-во О.Н. Поповой, 1907, 211 стр., стр. 36.

Գայանե Շահվերդյան

ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
սոցիալական հոգեբանության ամբիոնի վարիչ, հ.գ.դ., պրոֆեսոր

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆՎԱՐՆԵՐԸ

Բանալի բաներ՝ հոգեբանություն, բնագիտականություն, սոցիալականություն, անհատական գիտակցություն, օբյեկտիվություն, սուբյեկտիվություն:

Հոդվածում դիտարկվել են հոգեբանության երեք կերպարները և փորձ է արվել որոշել հոգեբանության առարկան նրա զարգացման ակունքների և հեռանկարների լույսի ներքո:

Gayane Shahverdyan

Faculty of Philosophy and Psychology, YSU

Dr.PhD, Professor, Head of the Department of Social Psychology

PSYCHOLOGY: ORIGINS AND DEVELOPMENTAL PERSPECTIVES

Key words: psychology, natural science, sociality, individual consciousness, mathematics, objectivity, subjectivity.

The article discusses three guises of psychological science and attempts are made to identify the subject of psychology in the light of its origins and developmental perspectives.

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՐՄԱՏՆԵՐԸ

*Բանալի բառեր՝ հոգեբանություն, մարդաբանություն, հոգեբանության
մեթոդաբանություն:*

Հոգեբանության պատմականորեն ձևավորված տարաբնույթ կերպերը, դրանց գոյակցումը տալիս են հոգեբանական կրթության կազմակերպման տարբեր մեկնաբանությունների հնարավորություն: Համալսարանական կրթության շրջանակներում հոգեբանության մասնագիտացման կրթական և ուսումնական ծրագրերը կազմվում են համաձայն գիտական հանրության, ուսումնական հաստատության բացահայտ կամ թաքուն դիրքորոշման: Ըստ այդմ կարող են առաջին պլան մղվել բնագիտական, սոցիալական կամ հումանիտար առարկաներ: Իհարկե գիտելիքի նշված երեք ոլորտները կարևոր են մասնագետի ձևավորման և կայացման համար, սակայն, կախված մասնագիտության յուրահատկություններից, դրանցից մեկին անհրաժեշտաբար հատկացվում է առանցքի դեր, որի շուրջ կառուցվում է կրթական գործընթացը: Դժվար է պատկերացնել ֆիզիկոս կամ քիմիկոս պատրաստելու համար նախատեսված այնպիսի կրթական ծրագիր, որը որպես հիմնաառանցք ունենա հումանիտար գիտությունները: Եվ եթե բնագիտական մասնագիտությունների դեպքում ամեն ինչ պարզորոշ և միանշանակ է, հոգեբանության բնագավառում հարցը դեռևս արդիական է և զգում է պարզաբանման կարիք: Արդյոք հոգեբանական կրթությունը պետք է կառուցվի բնական կամ հասարակական գիտությունների առանցքի շուրջ, թե՞ առավել նպատակահարմար է որպես առանցք ընդունել հումանիտար գիտությունները, իսկ բնական և հասարակական գիտությունները ծառայեցնել հումանիտար հոգեբանության կայացման նպատակին: Կարելի է երկար բանավիճել այս հարցի շուրջ՝ այդպես էլ չհանգելով ընդհանուր համաձայնության: Մեզանից յուրաքանչյուրն ունի հոգեբանության մասին իր պատկերացումները, յուրաքանչյուրը յուրովի է իմաստավորում «բնական գիտություն», «սոցիալական գիտություն» և «հումանիտար գիտություն» հասկացությունները: Զգալի դեր են խաղում նաև գի-

տական նորաձևությունն ու հետազոտողի մասնագիտական նախասիրությունները:

Պետք է խոստովանել, որ բավականին դժվար է ազատվել նշված գործոնների ազդեցությունից: Այդուհանդերձ հարկ է նշել, որ մեթոդաբանական կամ գիտաբանական հետազոտությունում հոգեբանությունը հանդես է գալիս որպես հետազոտության պատմականորեն տրված առարկա, որի յուրահատկությունները ոչ թե կառուցվում են հետազոտողի կողմից, այլ բացահայտվում են նրան: Քննարկելով հոգեբանության ինչպիսի գիտակարգ լինելու խնդիրը՝ անհրաժեշտ է հենվել դրա պատմական կայացման, պատմության ընթացքում հոգեբանության փոխակերպումների, դրանց պատճառների ու հետևանքների հետազոտության վրա: Այս առումով առավել կարևորվում են արևմտյան մտքի զարգացման ընթացքում տեղ գտած մի շարք շրջադարձային կետեր, որոնցում էլ հենց ուրվագծվել է հոգեբանության կերպը:

Հոգեբանության, որպես առանձին գիտակարգի առաջացման համար կարևորագույն նշանակություն ունեցավ «հոգեբանություն» հասկացության ներմուծումը: 1594 թվականին հրատարակված «Psychologia anthropologica» գրքում Օտտո Կասմանը գրում է. «Մարդու բնույթը երկակի է, նա կազմված է երկու մասից՝ մարդկային ոգուց (Spiritus humanus) կամ բանական հոգուց (Anima Logica) և մարդկային մարմնից: Ուստի և մարդաբանությունը կազմված է երկու բաժնից՝ հոգեբանությունից (Psychologia) և մարմնագիտությունից (Somatotomia): Հոգեբանությունը մարդաբանության առաջին բաժինն է, որը բացահայտում է մարդկային ոգու կամ բանական հոգու բնույթը...» [21, էջ 21-22]: Կասմանի սահմանումից երևում է, որ հոգեբանությունը, որպես գիտելիքի ուրույն ոլորտ, վերաբերում է մարդուն, նրա հոգեկան կողմին: Ընդ որում, այստեղ կարևոր է այն հանգամանքը, որ «հոգեբանություն» հասկացության ներմուծումը թելադրված էր մեթոդաբանական անհրաժեշտությամբ. եթե մարդաբանությունը գիտություն է մարդու մասին, իսկ մարդը կազմված է իրարից էականորեն տարբերվող հոգուց և մարմնից, ապա անհրաժեշտաբար պետք է լինի հոգին հետազոտող առանձին գիտություն, որին էլ հենց տրվում է «հոգեբանություն» անվանումը: Կասմանից երեք տասնամյակ անց Ֆրենսիս Բեկոնը կարծես կրկնում է նրա խոսքերը՝ գրելով. «Մարդու փիլիսոփայության կառուցվածքը համապատասխանում է այն մասերին, որոնցից կազմված է ինքը՝ մարդը, մասնավորապես՝ մարմինը հետազոտող և հոգին հետազոտող գիտու-

թյուններից» [6, էջ 252]: Բեկոնը չի կիրառում «հոգեբանություն» հասկացությունը, սակայն նրա խոսքերից երևում է, որ հոգու հետազոտությունը մարդու մասին ընդհանուր գիտության՝ մարդու փիլիսոփայության բաժին է:

Մարդու բնույթի նմանատիպ ընկալումն ունի իր նախապատմությունը: Դեռևս հնագույն ժամանակներում դիտարկվում էին մարդու նյութեղեն և ոգեղեն, մարմնական և հոգեկան մի շարք թաղանթներ: Եգիպտական առասպելաբանության մեջ առանձնացվում էին ֆիզիկական մարմին քաթ-ը, ոգեղեն մարմինը՝ սահու-ն, կրկնորդ քա-ն, սրտի բա հոգին, աբ սիրտը, ստվերը, քու ոգին, կենսական ուժ՝ սեփեմ-ը, անուն՝ ռեն-ը [3, էջ 215-219]: Իրանական առասպելաբանական հավատալիքներում մարդը կազմված էր տան մարմնից, ջան կենսական ուժից, ռուվան հոգուց, եվինակ ձևից, ֆրոհար-ֆրավաշի ուղղորդող ոգուց [8, էջ 16]: Հնգամատյանում որպես մարդու թաղանթներ ներկայացվում են մարմինը, կենսական հոգի նեֆեշը, անհատական կամային հոգի ռուախը, սիրտ լեբը և նեշամահ ոգին [19]: Սակայն առասպելաբանական պատկերացումներում այս թաղանթները չէին ենթադրվում մեկ միավորող առանցքի, դրանք կարող էին գոյատևել ինքնուրույնաբար, որպես ինքնուրույն էություններ: Օրինակ՝ եգիպտական հնագույն հավատալիքներում հանդիպող հոգի-կրկնորդը՝ քա-ն, կարող էր գոյատևել իր «սիրտոջից» անկախ, իր ցանկությամբ տեղափոխվել վայրից վայր և նույնիսկ բարձրանալ երկինք՝ աստվածների հետ հաղորդակցվելու նպատակով [3, էջ 215-216]:

Արևմտյան փիլիսոփայության հիմքում ընկած հունական առասպելաբանությունում հոգին նույնպես դեռևս առանձնացված և կենտրոնացված չէր: Հին Հունաստանում առանձնացվում էին բնություն ֆյուզիսը ('H Φύσις), կենսական սկիզբ փայուխեն ('H Ψυχή), շնչառություն պնևման (Τὸ Πνεῦμα), միտք նուսը ('Ο Νόος – Νοῦς), հուզական թիմոսը ('Ο Θυμός), ստոծանին՝ ֆրենեսը ('H Φράν, Φρην – Φρένες), սիրտ կարդիեն ('H Καρδίη, Κραδίη), մարմնի շարժիչ իթորը (Τὸ Ἴστρο), սրտամկան կիրը (Τὸ Κηρ), կատաղություն մենոսը (Τὸ Μένος), կրկնապատկեր էյդոլոնը (Εἰδωλον) և մարմինը՝ սոման (Σομα): Ընդ որում, մարդու նշված կողմերից և ոչ մեկը չի համապատասխանում հետագայում փիլիսոփայության կամ հոգեբանության մեջ մարդու հոգևոր կողմն իր մեջ միավորող և ամբողջականացնող հոգուն: Հոմերոսյան առասպելաբանությունը դեռևս հստակորեն չէր տարբերակում հոգեկան և մարմնական գոր-

ծառայությունները, չէր առանձնացնում հոգին և մարմինը: Ընդ որում, կարևոր է այն հանգամանքը, որ հոմերոսյան առասպելաբանության մեջ մարդու անհատականությունն առավելապես որոշվում էր նրա մարմնական թաղանթով: «Աքիլլեսն», ըստ Հոմերոսի, «Աքիլլեսի մարմինն» էր», - գրում է Զելինսկին [9, էջ 3]:

Առասպելաբանական մտածելակերպից փիլիսոփայականին անցումը հանգեցրեց հոգու մասին պատկերացումների էական փոխակերպումների: Նոր ծագող փիլիսոփայական միտքն աստիճանաբար տարանջատում է նյութն ու ոգին: Անտիկ փիլիսոփայության վաղ շրջանում նյութի և հոգու միասնությամբ բնութագրվող հիլոփսիխիզմն իր տեղն աստիճանաբար զիջում է պրիմիտիվ մատերիալիզմին, որտեղ վերջնականորեն տարանջատվում են պասիվ նյութը և այն շարժման մեջ դնող ակտիվ ոգեղեն սկզբունքը [23, էջ 7-9]:

Մյուս կողմից փիլիսոփայական վաղ ուսմունքներում մարդու հոգևոր, ոչ նյութական կողմն արդեն կենտրոնանում է կոնկրետ հասկացության մեջ: Որպես անհատական հոգու նշանակ առավելապես կիրառվում է պայուխեն, որը ներառում է հոգեկանի մյուս բաղադրիչները: Այս առումով հույն փիլիսոփաներից առաջինն Անաքսիմենեսն էր, ով խոսեց մարդու անհատական հոգու փայուխեի մասին [4, էջ 11]: Ավանդույթը նրան է վերագրում հետևյալ խոսքերը. «Ինչպես մեր հոգին (ψυχή), օդ լինելով, համախմբում և ղեկավարում է մեզ, այնպես էլ ողջ կոսմոսը ներծծված է շնչառությամբ (πνεῦμα) և օդով» [22, էջ 21]: Դժվար չէ նկատել, որ լինելով համընդհանուր պնևմայի մասնիկ՝ փայուխեն, ըստ Անաքսիմենեսի, ունի անհատական բնույթ: Բնարկե հանդիպում են նաև այլ հասկացություններով հոգու նշանակման դեպքեր: Ստոիկներն, օրինակ, հոգին դիտարկում էին որպես տաք, կրակոտ, մտածող պնևմա [16, էջ 81-82]: Պնևման, իրենով նշանակում է մարդու հոգևոր կողմը. այն տարածված է մարմնով մեկ և դրա հեռացումը հանգեցնում է հոգեմարմնական ամբողջության կործանմանը [15, էջ 69]:

Անտիկ փիլիսոփայության վաղ շրջանում հոգևոր առանձին գործառնությունները վերագրվում էին ամբողջական և միասնական հոգուն և առանձնացվում էին մարմնական գործառնություններից: Ընդ որում, որոշ դեպքերում, ի տարբերություն հոմերոսյան տեսակետի, արդեն հոգին էր հանդես գալիս որպես մարդկային անհատականության կրողը: Ըստ Պլատոնի, մարդու անհատականությունը հենց նրա անմահ հոգին էր: «Կրատիլոսում» պլատոնյան Սոկրատեսը հոգին դիտարկում է որպես

«բնութակիր»՝ φουδέχη, որը բարեհունչ արտասանման արդյունքում վերածվում է ψυχή-ի: Իսկ մարմինն ընդամենը հոգին իրենով ծածկող տապանաքար է, կամ նշան, որի օգնությամբ հոգին նշանակում է այն, ինչը պետք է արտահայտի [11, էջ 633-634]: Եվ ընդհանրապես հոգու անմահության, վերամարմնավորման ուսմունքներում որպես մարդու անհատականությունն ղիտարկվում է նրա հոգին, այն դեպքում երբ մարմինն անցողիկ, ժամանակավոր անէական թաղանթ է:

Պլատոնյան ոգեպաշտական փիլիսոփայությունը հաջորդող Արիստոտելյան փիլիսոփայությունը կարծես միավորում է մինչ այդ շրջանառվող տեսակետները՝ հավասարության նշան դնելով մարմնի և հոգու միջև: Ըստ Արիստոտելի՝ հոգին մարմնի էնտելեխիան է, հետևաբար մարդու անհատականությունը որոշվում է ոչ թե նրա հոգով, այլ հոգեմարմնական միասնությամբ [2, էջ 371-374]: Այս տեսակետն աստիճանաբար դառնում է գերիշխող և որոշում է հոգու և մարմնի փոխհարաբերությունների խնդրի հետագա քննարկումների ընթացքը: Միջնադարյան փիլիսոփայությունը, հենվելով մարդու արարման աստվածաշնչյան ավանդույթի վրա, մարդուն ղիտարկում է հենց այս տեսանկյունից: Օգոստինոս Երանելին ասում է. «Եթե հարցնեն, թե ինչից է կազմված մարդը, ապա ես կպատասխանեմ՝ հոգուց և մարմնից» [1, էջ 289-290]: Խոսելով հոգու կենսագործունեության համար մարմնի նշանակության մասին՝ Տերտուլիանոսը նշում է. «... չապրելը հոգու համար ոչ այլ ինչ է, եթե ոչ բաժանում մարմնից» [14, էջ 15]: Այսինքն մարդու անհատականությունը հավասարապես որոշվում է նրա հոգևոր և մարմնական կողմերով:

Բերված օրինակները ցույց են տալիս, որ արևմտյան մտածելակերպում աստիճանաբար արմատավորվում է մարդու երկակի՝ նյութեղեն և ոգեղեն, բնույթի մասին գաղափարը: Դրա հետ մեկտեղ տարանջատվում և հստակեցվում են մարմնական և հոգևոր գործառույթները: Այն դեպքում, երբ Պլատոնյան Սոկրատեսը զգայությունները, տառապանքի և հաճույքի զգացումը վերագրում է մարմնին և միայն մտածողությունն է, ըստ նրա, հատուկ հոգուն [12, էջ 23-24]: Դեկարտի փիլիսոփայական համակարգում մտածողությունն իր մեջ ներառում է հոգեկան մյուս գործառույթները ևս, իսկ մարմնական են համարվում զուտ ֆիզիոլոգիական գործառույթները: Դեկարտը նշում է. «...մեր հոգին, քանի-որ մարմնից տարբերվող նախահիմք է, մեզ հայտնի է դառնում միայն շնորհիվ այն բանի, որ նա մտածում է, այսինքն ըմբռնում է, ցանկանում,

երևակայում, վերհիշում, զգում, քանզի հոգու այս գործառույթները մտածողության տարբեր ձևեր են»: Այդ իսկ պատճառով մարդու մնացած բոլոր գործառույթները, որոնք իրենց մեջ չեն պարունակում ոչ մի մտածողություն, այնպիսիք, ինչպիսիք են՝ սրտի և երակների շարժումը, մարսողությունը և այլն, որոնք ունանց կողմից վերագրվում են հոգուն, իրականում բացառապես մարմնական շարժումներ են [7, էջ 423]:

Հենց հոգու և դրա գործառույթների ուսումնասիրության անհրաժեշտությամբ էր պայմանավորված հոգեբանության, որպես փիլիսոփայական մարդաբանության ուրույն բաժնի առանձնացումը: Հոգեբանության ինքնուրույնացման հաջորդ քայլը դրա մեթոդաբանության ձևավորումն էր՝ կապված Քրիստիան Վոլֆի անվան հետ [20, էջ 545]: Վոլֆն առանձնացնում էր հոգեբանության փորձահեն (Psychologia empirica) և մտահեն (Psychologia rationalis) ձևերը: Դրանք երկուսն էլ, ըստ Վոլֆի, գիտություն են մարդկային հոգու մասին¹:

Ինչպես տեսնում ենք վոլֆյան համակարգում հոգեբանությունը, որպես գիտելիքի ուրույն բնագավառ, վերաբերում է մարդկային հոգուն: Հոգևոր մյուս էությունների հետազոտությունը հատկացվում է բնական աստվածաբանությանը, իսկ տիեզերքի, բնության հետազոտությունը՝ գոյաբանությանն ու ընդհանուր տիեզերաբանությանը:

Սակայն սրընթաց զարգացում ապրող բնագիտության ազդեցությամբ հոգեբանությունն աստիճանաբար փոխում է իր կերպը: Զարգացող բնագիտական մեթոդաբանությունը դառնում է գերակայող՝ հոգեբանությանը ներկայացնելով արմատական փոխակերպման պահանջներ: Զարգացման առումով այքի է ընկնում բնագիտության վրա հենվող ֆիզիոլոգիան: Որոշ հետազոտողներ նախկինում զուտ հոգեկան համարվող երևույթները, հոգու գործառույթները հանգեցնում են ֆիզիոլոգիական, ֆիզիկական և քիմիական գործընթացներին [տես օրինակ՝ 25; 26]: Հոգին դադարում է լինել հետազոտության առարկա և 19-րդ դարի կեսերին Ֆրիդրիխ Ալբրտ Լանգեն հնչեցնում է «հոգեբանություն

¹ Սահմանելով հոգեբանությունը, դրա փորձահեն և մտահեն տարատեսակները, Վոլֆը կիրառում է հենց *մարդկային հոգի՝ anima humana* հասկացությունը: Տես օրինակ հոգեբանության վոլֆյան սահմանումը՝ «Psychologia scientia eorum, quae per animas humanas possibilia sunt» [30, էջ 29-30], փորձահեն հոգեբանության վոլֆյան սահմանումը՝ «Psychologia empirica est scientia stabiliendi principia per experientiam, unde ratio redditur eorum, quae in anima humana fiunt» [31, էջ 1], մտահեն հոգեբանության վոլֆյան սահմանումը՝ «Psychologia rationalis est scientia eorum, quae per animam humanam possibilia sunt» [32, էջ 1] :

առանց հոգու» հայտնի կարգախոսը [10, էջ 233]: Այս զարգացումների ազդեցության տակ են հայտնվում գիտական կամ էմպիրիկ հոգեբանության հիմքերում կանգնած այնպիսի հետազոտողներ, ինչպիսիք են Լեդը և Ջեյմսը, Վուևոտը և Բրենթանոն, Ուոթսոնը և Կյուլպեն:

Չոգուց, որպես հոգեբանության առարկայից հրաժարումը ստեղծեց այնպիսի իրավիճակ, երբ յուրաքանչյուր հետազոտող կարող էր իր ճաշակով սահմանել հոգեբանությունը, որոշել դրա առարկան: Այդուհանդերձ, առարկայի ընտրության ակնհայտ տարբերություններին, մեթոդաբանության ընտրության հարցում նրանցից շատերը համակարծիք էին: Մեթոդի առաջնայնության մասին է խոսում այն հանգամանքը, որ թե՛ Ջեյմսը, ով հոգեբանությունը դիտարկում էր որպես գիտակցության վիճակների մասին գիտություն, և թե՛ Ուոթսոնը, ով քննադատում էր գիտակցության հոգեբանությունը, հոգեբանությունը դիտարկում էին որպես բնական գիտություն [24, էջ 1; 29, էջ 1]:

Սակայն գիտությունը չի սահմանափակվում սուկ մեթոդով: Իհարկե, 20-րդ դարասկզբի հոգեբանական որոշ ուղղություններ հետազոտական մեթոդի տեսանկյունից կարող են դասվել բնական գիտակարգերի շարքին, այդուհանդերձ բնագիտական մեթոդների կիրառմամբ շատ հաճախ բացահայտվում էին հոգու հետ չնչին ընդհանրություններ ունեցող երևույթներ: Այս մասին Մեյյոն Ֆրանկը գրում է՝ «Չոգեբանություն՝ հոգու մասին ուսմունք, հիանալի անվանումն ուղղակի անօրեն կերպով հափշտակվեց և կիրառվեց որպես լրիվ այլ գիտական ոլորտի տիտղոս: <...> Եվ, եթե անգամ հաշտվենք այդ բառի նորագույն, աղավաղված իմաստի հետ, անհրաժեշտ է խոստովանել, որ այսպես կոչված էմպիրիկ հոգեբանության առնվազն երեք քառորդը և այսպես կոչված «փորձարարական» հոգեբանության էլ ավելի մեծ մասը մաքուր հոգեբանություն չէ, այլ կամ հոգեֆիզիկա է, կամ հոգեֆիզիոլոգիա, կամ էլ <...> այնպիսի երևույթների հետազոտություն, որոնք, թեև ֆիզիկական չեն, բայց միևնույն ժամանակ նաև հոգեկան չեն» [17, էջ 423]: Եվ ավելին, մեթոդի առաջնայնության կանխադրույթը կարող է հանգեցնել ոչ միայն հոգեբանության մեթոդական զինանոցի, այլև առարկայի փոխակերպման: «Եթե գիտականը նույնական է բնագիտականին, - գրում է Սվասյանը, - ապա ակնհայտ է, որ ոգին կարող է *գիտական տեսք ունենալ* միայն ընդունելով և ինչ-որ կերպ յուրացնելով բնագիտական մեթոդը» [13, էջ 10]: Բնագիտական մոտեցումը բերեց ինչպես հոգեբանության, այնպես էլ ոգու և հոգու պարզեցմանը: Մարդն, այլևս, ոգու և նյութի, հո-

գու և մարնի միասնությունն չէր, այլ նյութական, ֆիզիկական գործընթացների ամբողջությունն:

Ինչպես տեսնում ենք, 18-19-րդ դարերում հոգեբանությունը զգալիորեն հեռացավ կասմանյան սահմանումից: Հոգուց, որպես հոգեբանության առարկայից հրաժարումը հանգեցրեց մեթոդաբանական խառնաշփոթի: Առկա գիտական մեթոդներով հոգու հետազոտության անհնարիանությունը հանգեցրեց նրան, որ հոգեբանության առարկան կորցրեց հոգեբանության սահմանման ընթացքում ունեցած իր նշանակությունը: Ընդ որում, կորցնելով հոգին, հոգեբանությունը կորցրեց նաև մարդուն: Առանց հոգու հոգեբանությունն այլևս մարդու մասին գիտություն չէր: Մարդու բոլոր դրսևորումները հանգեցվում էին մարմնին, ֆիզիոլոգիական գործընթացներին՝ տարրալուծվելով բնական (նյութական) երևույթների բազմության մեջ:

Եվ ընդհանրապես, հոգեբանության ապահոգեկանացումը հանգեցրեց մարդու մասին գիտությունների առանցքի վերացմանը՝ դրանք զրկելով միակ հիմքից: Այս առումով բավականին հետաքրքրական է Հերման Պաուլի տեսակետը: Մշակույթային երևույթները հետազոտող գիտությունների նշանակման համար կիրառվող «ոգու մասին գիտություն» (Geisteswissenschaft) հասկացությունը «մշակույթի մասին գիտություն» (Kulturwissenschaft) հասկացությամբ փոխարինելով՝ Պաուլը նշում է, որ մշակույթի զարգացումն իր մեջ պարունակում է ինչպես հոգևոր, այնպես էլ նյութական հիմք, հետևաբար մշակույթին վերաբերվող գիտությունները հումանիտար չեն: Պաուլի կարծիքով ոգու մասին, այն է՝ հումանիտար միակ գիտությունը հենց հոգեբանությունն է [27, էջ 6-7]: Հասկանալի է, որ Պաուլը նկատի չուներ բնագիտության վրա հենվող ֆիզիոլոգիական հոգեբանությունը: Իսկ առանց հոգու հոգեբանությունը, վերածվելով դատարկ հասկացության, չէր կարող ապահովել հումանիտար գիտությունների հիմնավորումը:

Բնական գիտությունների հետ համատեղ 19-րդ դարում բուռն կերպով զարգանում էր նաև սոցիալական գիտությունների մեթոդաբանությունը: Բնական է, որ ավանդական առարկայից՝ հոգուց զրկված հոգեբանությունը պետք է կրեր այս մեթոդաբանության ազդեցությունը ևս: Որպես հետևանք հոգեբանությունը մարդու մասին գիտությունից վերածվեց հասարակական գիտության. առաջին պլան մղվեցին հասարակական գործընթացները՝ մարդուն թողնելով ետնաբեմում: Հիշենք թեկուզ հոգեբանության մասին Պավել Բլունսկու կարծիքը: Նա նշում է.

«Ավանդական հոգեբանությունը մարդու, որպես անհատի մասին գիտություն էր: Սակայն անհատի վարքը չի կարելի դիտարկել նրա սոցիալական կյանքից դուրս»: Հետևաբար, ըստ Բլունսկու, գիտական հոգեբանությունը նախկինում «սոցիալական հոգեբանություն» անվանումը կրող հոգեբանությունն է: Գիտական հոգեբանության կառուցման համար անհաժեշտ է մեկնարկել հենց սոցիալական հոգեբանությունից և դրանից շարժվել դեպի անհատի հոգեբանությունը: Մարդկային «ես»-ը, ըստ Բլունսկու, հասարակության մեջ ապրող մարդուն նշանակող սոցիալական «ես»-ն է: Դասակարգային հասարակությունում «ընդհանրապես մարդ» հասկացությունը դատարկ վերացական հասկացություն է: Մարդու հասարակական վարքը որոշվում է նրա դասակարգի վարքով և յուրաքանչյուր մարդ անպայմանորեն այս կամ այն դասակարգի ներկայացուցիչ է: «Այս առումով,- շարունակում է Բլունսկին,- մենք պետք է լինենք խորապես պատմականացված և մարդու վարքը միշտ հանգեցնենք տվյալ պահի դասակարգային իրավիճակին: Սա պետք է լինի յուրաքանչյուր հոգեբանի հիմնական մեթոդաբանական հնարքը» [մեջբերումն ըստ՝ 5, էջ 78-79]:

Անվիճելի է, որ նման մոտեցումը հանգեցնում է մարդու արժեզրկմանը: Եթե մարդը դիտարկվում է որպես հասարակության տարր, իսկ նրա դրսևորումները բխեցվում են հասարակական գործընթացներից, ապա անհատի գոյությունը ոչ մի ինքնուրույն արժեք չի ստանում: Նա կա որպես հասարակության մասնիկ, հասարակության մեջ, հասարակության համար, իսկ նրա հոգեկան դրսևորումները, նրա անհատականությունն ուղղակի անտեսվում են: Բայց արդյոք մարդու գոյության միակ ձևն ու հիմնական նպատակը հասարակությունն է: «Մարդը,- գրում է Յունգը,- չի կարող ապրել առանց հասարակության, ինչպես նաև առանց օդի, ջրի, սպիտակուցների, ճարպերի և այլն: Այդ իսկ պատճառով հասարակությունը մարդու գոյության անհրաժեշտ պայմաններից է: Սակայն ճիշտ կլինի արդյոք պնդել, որ մարդն ապրում է օդ չնչելու համար: Նույնքան անհեթեթ կլինի պնդումը, որ մարդն ապրում է հասարակության համար: Հասարակությունը մարդկային էակների խմբերի համակեցության հասկացություն է: Իսկ հասկացությունը կյանքի կրիչը չէ: Կյանքի միակ և բնական կրիչն անհատն է, և այս ճշմարտությունն արդարացի է ամբողջ բնության համար: Հասարակությունը կամ պետությունը կյանքի կրիչների կազմակերպված կուտակում է, և, հետևաբար դրա կարևորագույն պայմաններից մեկը: Այդ իսկ

պատճառով մարդը կարող է գոյել միայն որպես հասարակության տարր արտահայտությունը չի կարելի համարել բացարձակապես ճշմարիտ: Ամեն դեպքում մարդը կարող է ապրել առանց պետության անհամեմատ ավելի երկար, քան առանց օդի» [18, էջ 113-114]:

Յունգի տեսակետն էականորեն տարբերվում է Բլոնսկու կարծիքից: Այդուհանդերձ, դժվար է այդ կարծիքների գնահատումը դրանց ճշմարիտության տեսանկյունից: Թե՛ Բլոնսկու, և թե՛ Յունգի տեսակետները գուրկ չեն հիմքերից և արտահայտում են միևնույն մարդ-հասարակություն հարաբերության տարբեր կողմերը: Արդյոք հասարակության առանձին անդամների դրսևորումները որոշվում են հասարակական գործընթացներով, թե՞ հակառակը, հասարակական շարժումները բխում են այն կազմող անհատների դրսևորումներից: Ակնհայտ է, որ այս դեպքում գործ ունենք փոխադարձ պայմանավորվածության հետ: Այս փոխհարաբերությունը կարելի է նույն հաջողությամբ դիտարկել ինչպես անհատի, այնպես էլ հասարակության մեկնակետից: Հենց այստեղ է բացահայտվում հոգեբանության և հասարակական գիտակարգերի տարբերությունը, հենց մեկնակետի ընտրությամբ է պայմանավորված հոգեբանության յուրատիպությունը:

Եթե սոցիալական գիտակարգերում առաջնային դերով օժտվում են հասարակական երևույթները, ապա հոգեբանական հետազոտությունում առաջնայնությունը տրվում է մարդկային անհատին, նրա հոգեկան դրսևորումներին: Ընդ որում, սոցիալական գիտությունների համար հոգեբանությունը կարող է կատարել հիմքի դեր: Ինչպես նշում է Ալբրեխտ Մսոլը. «հոգեբանությունն այլ հասարակական գիտություններին հարաբերվում է այնպես, ինչպես քիմիան կենսաբանությանը: Դա հոգեկանի հետախույզն է, որը խորանում է հասարակական կառույցների և շարժումների կոշտ անատոմիայից ցած՝ դեպի մարդու կենսափորձի սահմանային հոգեկան գործընթացները» [28, էջ 85]: Դա նշանակում է, որ հոգեբանության տեսանկյունից անհատը չի կարող դիտարկվել որպես դատարկ, վերացական հասկացություն: Մարդկային անհատը կյանքի (բառիս հոգևոր, այլ ոչ բնագիտական կամ հասարակագիտական իմաստով) միակ իրական կրիչն է, իսկ հոգեբանությունը միակ գիտությունն է, որ հետազոտում է անհատին՝ որպես կյանքի կրիչի: Հասարակական գիտությունները վերացարկվում են անհատից, այն դեպքում, երբ հոգեբանությունը գործ ունի նախ մարդկային անհատի հետ և հետո միայն, սոցիալական հոգեբանության շրջանակներում, անդրա-

դառնում է նաև անհատի դրսևորումների վրա ազդող հասարակական գործոններին: Ընդ որում, հասարակական երևույթները հոգեբանությանը հետաքրքրում են այնքանով, որքանով ներկայանում են անհատի հոգեկան դրսևորումներում:

Հոգեբանությունը նմանվում է մի սաղարթախիտ ծառի, որի ճյուղերը երբեմն այնքան են հեռանում իրարից, որ թվում է, թե դրանք ընդհանուր ոչինչ չունեն: Նման պարագայում հոգեբանության էությանը, նշանակությանն ու արժեքին վերաբերող խնդիրների քննարկման ընթացքում բավարար չէ ուսումնասիրել դրա ճյուղերից մեկը, կամ մի քանիսը: Այսպես կարելի է և սխալվել: Հարկ է դիտել հոգեբանության արմատները, որոնք, անկասկած, գնում են դեպի մարդու էության խորքերը, սնվում են այդ նախասկզբնական ակունքից: Մկիզբ առնելով մարդուց, հոգեբանությունը կերտում է նրան, ընդգծելով մարդկային անհատի դրսևորումների տարբերությունները բնական և հասարակական երևույթներից: Իհարկե հոգեբանությունն ի հայտ է բերում բնական և հասարակական գիտությունների հետ շփման բազմաթիվ կետեր: Դա, սակայն, չի նշանակում, որ այն պետք է տարրալուծվի բնությունը, հասարակությունը կամ մշակույթը հետազոտող գիտակարգերի բազմության մեջ: Հոգեբանության զարգացման ուղին, ինչպես գիտական, այնպես էլ կրթական հարթություններում պետք է որոշվի նրա առարկայով՝ հոգով, որն ամենից մոտ է կանգնած մարդուն, այլ ոչ թե օտար, արտաքին մեթոդաբանությամբ: Այս առումով հոգեբանությունն, անշուշտ, հումանիտար գիտակարգ է:

Գրականություն

1. **Августин**, О количестве души. // Августин. О бессмертии души. – М.: ООО «Издательство АСТ», 2004. – 51 с., ст. 288-375.
2. **Аристотель**, О душе, 412а-413а10. // Аристотель. Сочинения в четырех томах. Т. 1. – М., «Мысль», 1975. – 550 с., ст. 369-448
3. **Бадж Э. А.**, Уоллис. Египетская книга мертвых. – М.: Изд-во Эксмо, СПб.: Terra Fantasia, 2005. – 768 с.
4. **Бобровъ Е.**, Психологическія воззрѣнія древнихъ греческихъ философовъ. – Варшава, Типографія Варшавскаго учебнаго округа, 1910, 76 с.
5. **Будилова Е. А.**, Философские проблемы в советской психологии. – М.: Издательство «Наука», 1972, 336 с.
6. **Бэкон Ф.**, О достоинстве и приумножении наук. // Бэкон Ф., Сочинения. В 2-х томах. Т. I. – М., «Мысль», 1971, 590 с.
7. **Декарт Р.**, Сочинения в 2 т., т. I. – М.: Мысль, 1989. – 654 с.

8. **Джал Дастур Керседжи Паври.** Зороастрийская доктрина загробной жизни. С момента собственной смерти и до моста Чинват. – М.: Амрита-Русь, 2004. – 144 с.
9. **Зелинский Ө.,** Гомеровская психология. Петербург, 1922, 39 с.
10. **Ланге Ф. А.,** История материализма и критика его значения в настоящем. Томь второй. История материализма со времени Канта. Киев, Харьков, Южно-Русское книгоиздательство Ф.А.Логансона, 1900, 415 с.
11. **Платон,** Кратил 400bc.//Платон. Собрание сочинений в 4 т.: т. I. М.: Мысль, 1990, 860 с., ст. 613-681.
12. **Платон,** Федон 65c-d // Платон. Сочинения в четырех томах. Т. 2, СПб.: Изд-во С.-Петербург. ун-та; Изд-во Олега Абышко, 2007, 626 с., ст. 11-96.
13. **Свасян К.А.,** Науки о духе: без науки и духа. Попытка анамнеза. // Этическая мысль. Вып. 7. – М.: ИФ РАН, 2006, ст. 3-24.
14. **Тертуллиан.** О воскресении плоти. //Тертуллиан. Апология. М.: ООО «Издательство АСТ», СПб.: «Северо-Запад Пресс», 2004. 423с., ст. 4-100.
15. Фрагменты ранних стоиков. Т.1. М., 1998, 229 с.
16. Фрагменты ранних стоиков. Т.2. Ч. 2. М., 2002, 260 с.
17. **Франк С. Л.,** Душа человека. Опыт введения в философскую психологию. // Франк С.Л. Предмет знания. Душа человека. Санкт-Петербург, «Наука», 1995, 655с. ст. 417-632.
18. **Юнг К. Г.,** Психотерапия сегодня. // Юнг К. Г. Практика психотерапии. – Мн.: Харвест, 2003, 384 с., ст. 101-118.
19. **Beck J. T.,** Umriss der biblischen Seelenlehre. Stuttgart, Druck and Verlag von J.F.Steinkopf, 1871, xiv+152 p.
20. **Carus F. A.,** Geschichte der Psychologie. Lpz., 1808, 771 p.
21. **Casmanus O.,** Psychologia anthropologica sive Animae Humanae Doctrina... Hanoviae, Apud Guilielmum Antonium, impensu Petri Fischeri Fr., MDXCIV, 429 p.
22. **Diels H.,** Die Fragmente der Vorsokratiker. Griechisch und deutsch. Ester Band. Berlin, Weidmannsche Buchhandlung, 1906, 466 p.
23. **Döring A.,** Geschichte der griechischen Philosophie. Band I. Leipzig, O.R. Reiland, 1903, xi+670 p.
24. **James W.,** Psychology. New York, Henry Holt and Company, 1900, xiii+478 p.
25. Horwicz A. Psychologische Analisen auf physiologischer Grundlage. Halle, C. E. M. Pfeffer, 1872, 1875
26. **Maudsley H.,** The Physiology and Pathology of the Mind. New York, D. Appleton and Company, 1867
27. **Paul H.,** Prinzipien der Sprachgeschichte.Halle, Verlag von Max Niemeyer, 1920, xv+428 p.
28. **Small A.,** The Meaning of Social Science, The University of Chicago Press, Chicago, Illinois, 1910, vii+309 pp.
29. **Watson J. B.,** Behavior. An Introduction to Comparative Psychology. New York, Henry Holt and company, 1914, xii+439 p.
30. **Wolff Ch.,** Philosophia rationalis sive logica...Francofurti & Lipsiae, MDCCXXXII, 866 p.
31. **Wolff Ch.,** Psychologia empirica ... Francofurti & Lipsiae, MDCCXXXII, 910 p.
32. **Wolff Ch.,** Psychologia rationalis ... Francofurti & Lipsiae, MDCCXXXII, 680 p.

Гагик Петросян
Факультет философии и психологии ЕГУ
Лектор кафедры социальной психологии

ГУМАНИТАРНЫЕ КОРНИ ПСИХОЛОГИИ

Ключевые слова: психология, душа, методология психологии.

В статье рассматривается проблема научного статуса психологии. Автор показывает, что психология возникла как наука о человеке, о человеческой душе. Однако развитие западного мышления по пути естественных и социальных наук вынудило психологию отказаться от своего предмета – души. Это привело к тому, что психология рассматривалась то как ветвь естественных наук, то как социальная дисциплина, лишаясь собственной сущности. Дальнейшее развитие психологии, по мнению автора, должна опираться именно на гуманитарные корни науки о душе, что обеспечит специфику психологии как науки.

Gagik Petrosyan
Faculty of Philosophy and Psychology, YSU
Lecturer of the Department of Social Psychology

HUMANITARIAN ROOTS OF PSYCHOLOGY

Key words: Psychology, soul, methodology of Psychology.

The article discusses the problem of scientific status of psychology. Author shows that psychology emerged from a science about man, about human soul.

However, the development of Western thinking in the way of natural and social sciences forced psychology to leave its subject - the soul. This led to the fact that psychology was viewed either as a branch of natural sciences, or social discipline, losing its essence. Further development of psychology, according to the author, must rely on humanitarian roots of the science about the soul, which will provide the specifics of psychology as a science.

Միլվա Պետրոսյան
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
փիլիսոփայության պատմության ամբիոնի դոցենտ
davnansilan@gmail.com

**ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀՈԳՈՒ ԽՆԱՍՔԻ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ. ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ**

Բանալի բառեր՝ հոգու խնամք, ինքնախնամքի մշակույթ, Դավիթ Անհաղթ, նորալատոնական փիլիսոփայություն:

Որպես աստուածայինն աներևոյթ զօրութիւնս ոմանս ունի, յորոց ձեռն աստեացս խնամ ածէ, նոյնպէս և իմաստասիրութիւն յառաջ ածէ զմակացութիւնս, որպէս զի ի ձեռն սոցա զիտացէ: զենթակայս նոցա... (Բնչպէս Աստված ունի մի ինչ-որ աներևոյթ զորություն, որի միջոցով հոգ է տանում երկրային էակների մասին, այնպես և փիլիսոփայությունը առաջ է քաշում զիտությունները, որպեսզի դրանց միջոցով ճանաչի դրանց իսկ առարկաները...)

Դավիթ Անհաղթ

V-VI դարերի հայ անվանի մտածող Դավիթ Անհաղթը, ելնելով հունական փիլիսոփայական մշակույթի ավանդույթներից, զարգացրել է մի համապարփակ իմաստասիրական-տեսագործական համակարգ, որում մարդուն դիտարկել է համակողմանիորեն՝ առանցքային տեղ տալով հոգու և հոգու խնամքի գաղափարներին: Դավթի բարոյագիտական, իմացաբանական, տրամաբանական, գեղագիտական հայացքները արժանացել են հետազոտողների ուշադրությանը, որոնք վերլուծել են դրանք տարբեր համատեքստերում և մոտեցումներով [1, էջ 108-118; 176-194; 289-322 և այլն]: Չեն անտեսվել նաև Անհաղթի հոգեբանական հայացքները: Դրանք ներկայացվել են հոգեբանության պատմության հիմնախնդիրների գիտակ Հովսեփ Թութունջյանի կողմից [2, էջ 281-290; 1, էջ 237-244], որը նշում է, որ Դավիթ Անհաղթը մշակել է «հոգեբանական գաղափարների մի որոշակի համակարգ, որը նրա փիլիսոփայական ուսմունքի հիմքերից է: Անտարակույս, այս գաղափարները հայ հին հոգեբանական մտքի զարգացման մեջ կազմում են որոշակի փուլ և պատմական նշանակալից հետաքրքրություն ունեն» [2, էջ 281]: Իհարկե, խոսել հոգեբանության մասին Դավթի ժառանգության համատեքստում պատմականորեն ճշգրիտ չի լինի, քանի որ ինչպես ցույց է տալիս

նույն ինքը՝ Թուրունջյանը, հայոց մեջ «հոգեբանություն» եզրը չի հանդիպում միջնադարյան տեքստերում, այն հիշատակված չէ ոչ «Բառգիրք Հայոց»-ում, ոչ «Բառգիրք Հայկազյան լեզուի» տարբեր խմբագրություններում [2, էջ 293]: Հայերենով առաջին անգամ «հոգեբանություն» եզրույթը Թուրունջյանը գտնում է 1804 թ. Վենետիկում լույս ընծայված Մ. Վ. Ջախջախյանի «Բառարան իտալական լեզուի ի Հայ և ի Տաճիկ բարբառ»-ում, որտեղ հոգեբանությունը բացատրվում է որպես «ճառ գեղարվեստ» [2, էջ 295]: Սա նշանակում է, որ հոգեբանական թե՛ գիտելիքների, թե՛ փորձառության սաղմերը պետք է որոնել Դավթի բուն փիլիսոփայության մեջ: Առավել ևս հետաքրքրական է, որ նրանից հազար չորս հարյուր տարի անց, տասնիններորդ դարակեսին հոգեբանությունը դարձյալ ընկալվում է որպես փիլիսոփայության մասնիկ: Մ. Գարագաշյանի 1868 թ. լույս ընծայած հետազոտությունը կոչվում է «Համառոտ փիլիսոփայութիւն կամ սկզբունք հոգեբանութեան, բարոյականի և բնական աստուածաբանութեան» [2, էջ 295]: Սա ցույց է տալիս, որ Դավթի «Մահմանքում» արտահայտված մոտեցումը, որ փիլիսոփայությունը գիտությունների գիտությունն է և արվեստների արվեստը, քանի որ սկզբունքներ է տալիս գիտություններին և արվեստներին [3, էջ 88], կենսունակ էր տասնիններորդ դարում, սակայն աստիճանաբար գիտապաշտական մտածողության վարակով բռնված արևմտյան հասարակությունում այն իր տեղը զիջում է մեկ այլ մտածողության, որ կեցության հիմքերի իմացությունը լիովին հասանելի է առանձին կամ մասնավոր գիտություններին, որոնք իրենց գործիքակազմով կարող են պատասխանել անցյալում սկզբունքորեն անիմանալի թվացող հարցերին: Նման մոտեցման արդյունքում հոգեբանությունը առանձնանում է մայր-փիլիսոփայությունից և փորձում էքսպերիմենտալ և պոզիտիվիստական մեթոդներով լուծել իր առջև դրված խնդիրները: Ինչ խոսք, պետք չէ ժխտել, որ այդ ճանապարհին հոգեբանությունը հասնում է որոշակի հաջողությունների, սակայն նրա սահմանները անարդարացիորեն նեղացվում են, քանի որ այն աշխարհայացքային-փիլիսոփայական գիտություն-արվեստ, մտածողություն-կենսակերպ լինելու փոխարեն սկսում է դիտարկվել որպես երբեմն՝ սոսկ մեթոդ, երբեմն՝ տեխնիկա, երբեմն՝ վարժանք... Ինչ խոսք, հոգեբանության մեջ առկա են թե՛ մեթոդի, թե՛ տեխնիկայի, թե՛ վարժանքի տարրերը, դրանք կարևոր են և ունեն գործուն նշանակություն, սակայն, կտրվելով հիմքային աշխարհայացքային կողմնորոշիչներից, դրանք դառնում են այսրոպեական,

մանր խնդիրներ լուծող և արդի իրականության տարատեսակ ճնշումներին ենթարկվող մարդուն մենակ են թողնում ներքին կայուն միջուկի ստեղծման բարդ խնդրում, որի հետևանքով ներկայումս իմաստասեր-հոգեբանները խոսում են սեփական ինքնությունը չգտած, չորոշարկված, չամբողջացած մարդու մասին [տե՛ս 4; 5; 6]: Այդ պասիվ, անինքնաճանաչ և անինքնախնամ, հասարակական պատճառավորիչներից այն կողմ չանցած թերարժեք էակը, դույզն իսկ չի կարող հավակնել կատարելության (Դավթի փիլիսոփայական համակարգում ամենակարևոր հասկացություններից մեկը), առավել ևս աստվածամանության (Անհաղթի փիլիսոփայության մյուս կարևոր հասկացությունը)... Այդ էակը չունի Աստված, քանի որ ինչպես մեկուկես դար առաջ հայտարարեց Ֆ. Նիցշեն, նրա Աստվածը սպանվել է [7, էջ 154]: Բայց ի՞նչ է անելու Աստծո մահն ազդարարած մարդը: Նիցշեյան խենթը հարցնում է. «Ո՞ւր է երկիրը հիմա գնում: Ո՞ւր ենք գնում մենք: Հեռու բոլոր արևներից: Արդյոք մենք շարունակ ցած չենք գահավիժում: Եվ ե՛տ, մի կո՞ղմ, առաջ, դեպի բոլոր կողմե՛րը: Կա՞ դեռևս վերև ու ներքև: Մի՞թե մենք մոլորված չենք խարխափում, ասես անվերջական ոչնչում: Մի՞թե դատարկ տարածության շունչը չի փչում մեզ վրա: Մի՞թե ավելի չի ցրտել: Մի՞թե շարունակ չի իջնում գիշերը և ավելի գիշեր...» [7, էջ 154]: Վերևի և ներքևի իր հարցադրման մեջ Նիցշեն հանճարեղորեն կանխագուշակում է պոստմոդեռնի դարաշրջանը, որտեղ իրոք տեղի է ունենում, այսպես կոչված, ապակենտրոնացում, որի մարդու համար կողմնորոշիչների համակարգ գտնելը սկզբունքորեն բարդանում է ու նաև դառնում անիմաստ: Պոստմոդեռն փիլիսոփա Մ. Ֆուկոն, իր ստեղծագործության առաջին շրջանում խոսում է մարդու գաղափարի փխրունության և հեղհեղուկության մասին. «Մարդը, ինչպես առանց դժվարության ցույց է տալիս մեր մտածողության արխեոլոգիան, ոչ վաղ հայտնագործություն է: Եվ նրա վերջը, գուցե, այնքան էլ հեռու չէ: Եթե [քննարկված] կանխադրույթները կամ հարաբերակցությունները անհետանան այնպես, ինչպես երբևէ հայտնվել են [...], կարելի է երաշխավորել, որ մարդը կանհետանա, ինչպես անհետանում է ծովափնյա ավազի վրա գծված դեմքը...» [8, էջ 404]: Իր ստեղծագործության սկզբնական փուլում մարդուն հասարակական ինստիտուտների ու դրանց ծնած գործիքների գուտ հետևանք համարող մտածողը կյանքի վերջին տարիներին, մի մեծ պտույտ կատարելով, պոստմոդեռնի աշխարհից հայացք է նետում դեպի դասականության աշխարհին ու փորձում հասկանալ այդ աշխար-

հի մարդու ինքնակերտման տեխնիկաները, վերլուծել ներքին փորձառության այն ձևերը, որ հույները կոչում էին հոգու ինքնախնամք... Ցավոք, Ֆուկոն ավարտին չի հասցնում հոգու, ինչպես ինքն է ասում, ինքնամշակույթին նվիրված հետազոտությունը, սակայն նրա դասախոսությունների հրատարակված տեքստերը բացահայտում են ուշ անտիկ և վաղ միջնադարյան մարդու ներքին հոգևոր փորձառությունների աշխարհը [9]: Ողջ կյանքը սահմանային փորձառություններում անցկացրած և սահմանագանցության (տրանսգրեսիայի) խնդիրներով տարված Ֆուկոն իր վերջին դասախոսություններում և հարցազրույցներում խոսում է ինքն իր մասին հոգ տանելու շուրջ, ասելով, որ մարդն ինքն իր հանդեպ բարոյական հարաբերություն ունի չորս տեսանկյունից. 1) կա մի նյութ, սուբստանցիա, որը ենթակա է խնամքի. դա այն եղանակն է, որով մարդը կառուցում է ինքն իր (himself) այս կամ այն մասը, 2) դա այն եղանակն է, որով անհատը հաստատում է իր հարաբերությունը օրենքի հանդեպ և ինքն իրեն ճանաչում որպես այն աշխատեցնելու պարտավոր էակ, 3) կան միջոցներ, որոնցով խնամքը «մարզվում» է, այսինքն՝ մարդը փոխում է իրեն, փոխակերպվում է նպատակամղված հոգևոր վարժությունների արդյունքում, որպեսզի դառնա իր իսկ վարքի բարոյական սուբյեկտ, և վերջապես, 4) դա նման խնամք տանելու թելոսն է՝ կամքը, լինելու կերպը, որ հանդես է գալիս որպես անձնավորության նպատակ [10, էջ 26-27]: Դավիթ Անհաղթը, պատկանելով անտիկ աշխարհից քրիստոնեականին անցման այդ մեծ հոգևոր հոսանքին, իր ուսմունքում համակցում է հոգու խնամքի նշված բոլոր առումները, մարդու և փիլիսոփայության լինելությունը կապելով Աստծո գաղափարի հետ: Նա, բնականաբար, խոսում է փիլիսոփայության, այլ ոչ հոգեբանության մասին, սակայն նրա հոգու խնամքի դիրքորոշումն իր էությանը արդի բառագտագործմամբ՝ հոգեբանական պրակտիկում է: Նա ասում է, որ իմաստասիրությունը կա, քանի որ Աստված նախախնամում է աշխարհը, հոգ է տանում մարդու մասին, և այդ անում է իմաստուն կերպով [3, էջ 44]: Հետևաբար, եթե Աստված նախախնամում է, ապա մարդը պետք է շարունակաբար խնամի, նա չի կարող ինքնահոսի թողնել իրեն, քանի որ կարիք ունի հոգու զարդարման, որի արդյունքում իրականանում է նաև տիեզերքի և ողջ գոյության իմաստավորումը:

Հետևելով Պլատոնին, հայ իմաստասերը գտնում է, որ մարդը պետք է խնամի իր հոգին, որպեսզի կարողանա հասու լինել աստվածայինին, քանի որ աստվածային լույս կա այնտեղ, որտեղ կա այդ լույսն

ընկալելու ունակ հոգի: Աստծուն Անհաղթը բնորոշում է երեք հատկանիշներով՝ իմաստություն, ամենագորություն և բարություն: Նա հեռու է Աստծուն բանականության հետ նույնացնելուց, և ի հակադրություն բանապաշտ նոր եվրոպական մտածողության, որի համար մտածողությունը սուբստանց էր, նրա համար Աստծո ամենակարևոր հատկանիշը բարությունն է: Ավելին, պարադոքսալ կերպով բարությունը սահմանափակում է նույնիսկ Աստծո ամենագոր լինելու կարողությունը. «*Բսկ ներկարծելի է և սուտ՝ ասելն էթէ Աստուած զամենայն ինչ կարէ ներգործել. վասն զի բազմաց ամենեցուն այսպէս թուի: Բայց սուտ է. վասն զի ի չարիս անկարութիւն ունի նոյնպէս և Աստուած, սակս անչափ բարոյն՝ որ բնութեամբ և ի վեր քան զբնութիւն գոյ գոյացեալ ի նմա*» [11, էջ 318] («Մտքում հնարավոր, Բայց [իրականում] սուտ է ասելը, թե Աստված ամեն ինչ կարող է անել, որովհետև բոլորը այդպես են կարծում: Բայց դա սուտ է, որովհետև Աստված չի կարող չար բան անել՝ իր անսահման բարության պատճառով, որը բնականորեն և գերբնականորեն բխում է նրանից» [3, էջ 272]): Դավթյան Աստվածը համակ բարություն է, կարելի է ասել՝ Անհաղթն Աստծուն նույնացնում է բարության հետ: Անհաղթն իր Աստծուն չի բնորոշում արդարությամբ, թեպետ այն ընդունում է, որպես մարդու կարևորագույն առաքինություններից մեկը, որը կոչված է համամասնություն հաստատելու հոգու տարբեր մասերի միջև: Նմանվել Աստծուն, ըստ Դավթի, նշանակում է «խոհեմությամբ տոգորված դառնալ բարեպաշտ ու արդար» [3, էջ 83]: Անհաղթը արդար է համարում այն մարդուն, որ բոլոր էակների նկատմամբ հավասարապես անաչառ վերաբերմունք է ցուցաբերում, իսկ բարեպաշտ է նա, ով ձգտում է դեպի աստվածայինը: Դավթին Աստծուն չի բնորոշում արդարությամբ, քանի որ բոլորի հանդեպ անաչառ վերաբերմունքի դեպքում Աստված որոշ մարդկանց հանդեպ կգտնվեր բարեհաճ և երես կթեքեր մյուսներից: Մակայն Անհաղթի Աստվածը, կարծես, պատժող Աստված չէ. նա միանման բարի է իր բոլոր արարածների նկատմամբ. «որպէս արեգակնային լոյս առ հասարակ զամենեսեան լուսաւորէ. բայց թէ յանպատկանաւորութենէ տեսարանացն թուի զոմանս առաւել լուսաւորել և զոմանս նուազ: Քանզի են ոմանք, որ առողջ ունին զտեսարանն, և են, որ տկար, և յայսմանէ թուի զոմանս առաւել լուսաւորել և զոմանս նուազ: Նոյնպէս և աստուածայինն ոչ երբեք որոշէ զինքն ի մարդոյ, այլ ամենեցուն հաւասարապէս ինամէ. Այլ վասն տկարութեան ընդունողին և վասն ոչ սուրբն զոլոյ յախտից, թուի զինքն որոշել ի նմանէ» [11, էջ

61]: («Ինչպես արևի լույսը հավասարապես լուսավորում է բոլորին, բայց տեսողության անպատշաճության պատճառով թվում է, թե ոմանց ավելի է լուսավորում և ոմանց՝ պակաս, որովհետև ոմանց աչքերն առողջ են և ոմանցը՝ տկար, այնպես և աստվածային բնությունը երբեք չի հեռացնում իրեն մարդուց, այլ բոլորին հավասարապես է խնամում, բայց ընդունողի տկարության և կրքերից ազատ չլինելու պատճառով թվում է, թե աստվածային բնությունը իրեն հեռացնում է նրանից» [3, էջ 74]): Եթե քրիստոնյան, որպես կանոն, Աստծուն ընկալում է որպես դատավոր, և մտահոգվում նրա հոգատարությունից չզրկվելու մասին, ապա, ըստ Դավթի, իր հոգատարությամբ միայն մարդը կարող է իր համար իրականություն դարձնել աստվածային խնամքը: Աստված բոլորին հավասարապես է խնամում, սակայն այդ խնամքից զուրկ են նրանք, ովքեր իրենք իրենց չեն խնամում, այսինքն՝ ամեն ինչ կախված է քեզանից. որքանով ինքդ հոգ ես տանում քո հոգու մասին, այնքանով էլ ի վիճակի ես ընդունել Աստծո խնամքը, այդքանով էլ այդ խնամքը գոյություն ունի քեզ համար: Մա գործուն մարդու տեսություն է: Մարդը փոխում է իրեն, հոգու խնամքի փորձառության ժամանակ նա փոխակերպվում է, կատարելագործվում, դրա հետ միասին փոխվում են նաև աշխարհն ու այդ աշխարհի ճանաչողություն-գնահատումը: Երբ մարդը դժգոհ է իրականությունից, նա հաճախ դուրս է գալիս իր սահմաններից, փորձում արտաքին էքսպանսիայի ճանապարհով լուծել իր խնդիրները: Մակայն անգամ նվաճելով կամ տիրելով այլոց և բարիքները, նման մարդը ապրում է նվաճածը կորցնելու տագնապի մեջ, քանի որ զուրկ է ներքին խաղաղությունից: Դա, իր հերթին, ծնում է էքսպանսիայի մի նոր պտույտ և այդպես շարունակ: Իսկ հոգու խնամքով զբաղվող մարդը, ինչպես ասում է Դավիթը «բարերջանիկ» է: Հետաքրքրական է, որ գրաբարյան այդ գեղեցիկ բառը՝ «բարերջանիկ», արդի հայերենում չկա: Մա անուղղակիորեն խոսում է այն մասին, որ այսօրվա մարդը երջանկությունն ու բարին, առաքինությունը չի կապում միմյանց հետ, իսկ Անհաղթի համար դա նույն բանն է. «արդարև առաքինությունն բարերջանկություն է, և մայր իմաստասիրութեան առաքինությունն է. վասն զի ի ձեռն առաքինութեան ստանալով զիմաստասիրություն: Իսկ բարերջանիկն է այն, որ ըստ առաքինութեան կեայ, ոչ տրտմի ի վերայ մարմնականաց փորձութեանց և ոչ ի վերայ արտաքնոցն, այսինքն՝ ընչից...» [11, էջ 61-62]: («Առաքինությունն իսկապես երջանկություն է, և առաքինությունը իմաստասիրության մայրն է, որովհետև

առաքինության միջոցով մենք ձեռք ենք բերում իմաստասիրություն: Իսկ երջանիկ է նա, ով ապրում է առաքինությանը համապատասխան, չի տրտմում ոչ մարմնական փորձությունների, ոչ էլ արտաքին բաների համար, այսինքն՝ ունեցվածքի» [3, էջ 75]: Իսկ «փիլիսոփայությունը զբաղվում է հոգով, որովհետև փիլիսոփայությունը արթնացնում և լուսավորում է հոգին, մաքրելով նրա՝ մարմնական ցանկություններով պատած և մթագնած աչքերը» [3, էջ 124]: Մակայն հայ միջնադարյան հեղինակը հեռու է մարմինը անտեսելուց, ըստ նրա թեպետ հոգին նախապատվելի է մարմնից, սակայն մեր հոգիները ունեն մարմնի կարիքը որպես գործիքի [3, էջ 262]: Այսինքն՝ մարմինը ծառայում է որպես միջոց, որ հոգին կարողանա սովորել խնամել ինքն իրեն: Դավիթը դեմ է ստոիկյան տեսակետին, որ ինքնասպանությունը սփոփանք է մարդու համար, սեփական ազատությունը տնօրինելու վերջին միջոցը: Նա ասում է, որ ոչ մի դեպքում մարդը չպետք է կամենա «բռնությամբ կտրել այն հանգույցը» [3, էջ 79], որով Աստված կապել է մարդու հոգին և մարմինը: Ընդհակառակը, մարդը պետք է ձգտի լուծել իր կենցաղային առօրյա խնդիրները: Չնայած առաքինի մարդը չի տրտմում արտաքին հանգամանքների համար, բայց նաև չի արհամարհում այդ հանգամանքները շնականների (կինիկների) նման, ոչ էլ դրանց ազդեցությամբ վերջ է տալիս իրեն: Դավիթը բերում է մի օրինակ. «Ում կինիկյան փիլիսոփա, որը կիսով չափ անդամալուծված էր, դիմեց Հուլիանոս կայսեր, ասելով. «Մարմնիս կեսը մեռավ, իսկ մյուս կեսը դեռ ապրում է, գթա՛, ո՛վ թագավոր, կիսված կինիկյանին. հրամայիր բժշկել կամ սպանել»: Իսկ նա պատասխանեց. «Դու անարդարություն ես գործում երկուսի նկատմամբ էլ, և՛ Պլուտոնի, և՛ Փայիթոնի. մեկից զրկված լինելով, դու դեռևս հոգ պետք է տանես մյուսի մասին» [3, էջ 78]: Անհաղթն արհամարհանքի չի արժանացնում ռեալ կյանքի պայմանները, սակայն դրանց չի տալիս այնքան մեծ արժեք, որպեսզի դրանք դառնան կյանքից հրաժարվելու պատճառ: Ցանկացած պայմաններում կյանքը Դավթի համար արժեք է, միջոց, որ մարդուն թույլ է տալիս գտնել իր ինքնության իմաստը: Կյանքը պետք է պահպանել՝ իրականացնելու համար մահվան մասին մտածմունքը և կատարելագործվելու հնարավորությունը:

20-րդ դարում, Դավթից մեկուկես հազարամյակ հետո ավստրիացի հոգեբան-փիլիսոփա Վիկտոր Ֆրանկլը մշակում է ուսմունք մահվան և կյանքի իմաստի մասին, որ իր ոգով շատ հարագատ է դավթյան մոտեց-

մանր: Ելնելով մեր դարի մարդաբանության ձեռքբերումներից՝ Ֆրանկլը առաջարկում է լոգոթերապիայի՝ խոսքով կամ իմաստով բուժման մեթոդը, երբ մարդը հոգեբանի օգնությամբ հնարավորություն է ստանում վերագտնել իր կյանքի կորուսյալ իմաստը, ազատվել իրեն ոչնչացնող արտորդից, հոգևոր վակուումից: Ֆրանկլը նշում է այս ճանապարհին գերիմաստի (լինի դա Աստված, թե մի այլ էություն) հոգեբանական նշանակությունը. «Ակնհայտ է, որ հավատը գերիմաստի գոյության հանդեպ, ինչպես մետաֆիզիկական ուսմունքներում, այնպես էլ Հայտնության կրոնական պատկերացումներում, ունի առեղի հոգեթերապևտիկ և հոգեհիզիկնիկ նշանակություն: Ներքին ուժի վրա հիմնված իսկական հավատի նման այս հավատը մարդուն դարձնում է անհամեմատ ավելի կենսունակ: Նմանատիպ հավատի համար, ի վերջո, ոչ մի անիմաստ բան չկա» [12, էջ 163]: Դավիթն իր փիլիսոփայությամբ կատարում է խնամող-բուժող ընկերակցի՝ փիլիսոփայի, ուսուցչի, հոգեբանի դերը, ունենալով այդ գերիմաստը՝ Աստված (տվյալ համատեքստում անտիկ և քրիստոնեական ընկալումները մերձենում են), դեպի որն անընդհատ ձգտումը մարդուն հեռացնում է ունայնությունից, դառնում ներքին պահպանող զսպանակ: Ֆրանկլը իր իմաստավորում-բուժման մեջ տարբերում է մարդուն ապրեցնող արժեքների երեք տեսակ. ստեղծագործական-արարչական, վերապրման և վերաբերմունքի: Ստեղծագործական-արարչական արժեքները մարդու կյանքն իմաստավորում են աշխատանքով, նորի ստեղծմամբ, վերապրման արժեքները՝ գեղեցիկի հանդեպ սիրով, ընդհանրապես՝ ապրումների ինտենսիվությամբ: Սակայն երբ մարդը հանգամանքների բերումով զրկվում է այս երկու կարգի արժեքների միջոցով ինքնաիրականանալուց, նրան, միևնույն է, մնում է արժեքների մի ողջ աշխարհ, որ Ֆրանկլն անվանում է մարդու կողմից սեփական կյանքը սահմանափակող գործոնների հանդեպ վերաբերմունքի, հարաբերության արժեքների աշխարհ: Այս աշխարհն էլ առաջին երկուսի նման թե՛ որակապես, թե՛ քանակապես անվերջ է. «Նույնիսկ ակնհայտորեն աղքատիկ գոյությունը, որում զգացվում է և՛ արարաչական, և՛ վերապրման արժեքների պակասը, այնուամենայնիվ, թողնում է մարդուն արժեքների իրականացման մի վերջին, իրականում՝ բարձրագույն հնարավորություն: ... Հենց որ արժեքների ցանկը լրացվում է վերաբերմունքի արժեքներով, ակնհայտ է դառնում, որ մարդու գոյությունն, ըստ էության, երբեք չի կարող լինել անիմաստ»: Եվ երևի, հենց սա նկատի ունի Դավիթ Անհաղթը, երբ ակ-

նարկում է, որ, այնուամենայնիվ, պետք է հոգ տանել Փայիթոնի մասին: Հայ իմաստասերը գիտակցված խնամքի ջատագովն է. մարդը գիտակցում է, որ իրենից իլվել են կենսական հյութերը, սակայն շարունակում է լինել բարի: Մարդու կեցության ողբերգականության բնորոշ կողմերից մեկն էլ այն է, որ գործունեության դաշտը, որ տրվում է իրեն, ազատությունն ու առողջությունը, որ անհրաժեշտ են գործելու համար քայլ առ քայլ վերցվում են նրանից, այսինքն՝ մահը ներկա է մարդու ամբողջ կյանքի ընթացքում: Ըստ Անհաղթի մարդը գիտակցաբար պետք է հակադրվի դրան իր հոգում մշակելով անսահման բարություն: Նույն խնդիրն է մտահոգում նաև XX դարի ավստրիացի գրող Ֆրանց Կաֆկային, որի հերոսներից մեկը՝ Գրեգոր Ջամգան («Կերպափոխություն») հայտնվում է առաջին հայացքից անհավանական թվացող, իսկ իրականում՝ ինչ-որ իմաստով, շատ սովորական մի իրավիճակում: Մի առավոտ արթնանալով՝ նա մեծագույն դժվարությամբ հասկանում է, որ վերածվել է արտառոց միջատի: Ջարմանալի է, որ երիտասարդը չի հարցնում՝ ինչու հենց ինքը: Կարծես թե հեղինակն ուզում է ասել, որ բոլորն էլ, վաղ թե ուշ, արագ թե դանդաղ, կերպափոխվում են, պարզապես դատապարտված են կերպափոխության: Ջամգան կորցրել է ամեն ինչ, նույնիսկ՝ խոսելու կարողությունը, բայց գիտակցությունը տեղում է: Այս ամբողջի արսուրդին Կաֆկան հակադրում է Գրեգորի բարությունը, միակ բանը, որ տվյալ պարագայում մնացել է նրա «տնօրինության» տակ: Գրեգորը կարող էր և, գուցե թե, պետք է չարանար, սակայն մնում է համակ բարություն: Այս «պարադոքսալ» լուծումն է առաջարկում նաև Անհաղթը ինքնախնամքի տեսանկյունից, քանի որ պետականությունը կորցրած հայ ժողովրդի համար օրախնդիր էր բարության պահպանումը, չչարանալը, արտաքին անբարենպաստ պայմանների նորովի արժևորումն ու դրանց առկայության պայմաններում սեփական ինքնության արժանապատիվ գոյակերտումը: Անհաղթը պատմական հանգամանքների բերումով, երևի, նյութական արտաքին աշխարհում չտեսնելով հայի ինքնաիրականացման միջոցներ, ընտրում է ներքին հոգևոր աշխատանքի ճանապարհը, աշխատանք, որը բերում է խաղաղեցում և կայունություն արտաքին հանգամանքների հանդեպ: Սակայն այդ ներքին աշխատանքի պակասն էր ողբում Խորենացին, դրա պակասից անհրաժեշտաբար պետք է ծնվեր Նարեկացու մարդկային ողբերգությունը: Եվ այդ նույն ներքին աշխատանքի պակասից է այսօր «հիվանդացել» հասարակությունը, երբ հայտնագործելով ավելի ու ավելի կատարյալ

սարքեր, կարողանալով կառավարել ավելի շատ բնական գործընթացներ, ինչպես Էրիկ Ֆրոմն է ասում, «մարդը կորցրեց ամենակարևոր նպատակը, որը միակն է զարդարում մարդկային գոյությունը. հենց իրեն՝ մարդուն: Ի վերջո, մարդը հայտնվեց իր իսկ լարած թակարդում» [13, 376], որի խեղդող արքաններից ազատվելու ուղիներից մեկը հոգու ինամքի և բարերջանկության ձեռքերման անհաղթյան ճանապարհն է: Իհարկե, ավանդույթն ասում է, որ Դավիթը իր «Անհաղթ» պատվանունը ձեռք է բերել՝ Աթենքում իմաստասիրական-դավանաբանական վեճերում հաղթելով, սակայն ոչ պակաս հավանական է, որ նա, ինչպես նաև հետագայում Գրիգոր Տաթևացին և Առաքել Մյունեցին անվանվել են «անհաղթ», քանի որ ձեռք են բերել այնքան ցանկալի և բացառիկ հոգու անվրդովությունն ու կայունությունը...

Գրականություն

1. Դավիթ Անհաղթը՝ Հին Հայաստանի մեծ փիլիսոփան, խմբ. Գ. Ա. Բրուտյան, Եր., 1983:
2. **Հ. Մ. Թուրունջյան**, Դավիթ Անհաղթի հոգեբանական գաղափարները // Հ. Մ. Թուրունջյան, Հոգեբանական էություններ, Եր., 1991:
3. **Դավիթ Անհաղթ**, Երկեր, Աշխարհաբար թարգմ., առաջաբանը և ծանոթագր. Ս. Ս. Արևշատյանի, Եր., 1980:
4. **К. Г. Юнг**, Нераскрытая самость, в кн. К. Юнг, Психика: структура и динамика, М., 2005, էջ 290-368.
5. **К. Ясперс**, Духовная ситуация времени, М., 2008.
6. **В. Хесле**, Кризис индивидуальной и коллективной идентичности, в кн. Апокалипсис смысла. Сборник работ западных философов XX-XXI веков, М., 2007, էջ 23-36.
7. **Ֆ. Նիցշե**, Ջվարթ գիտությունը, Եր., 2005:
8. **М. Фуко**, Слова и вещи. Археология гуманитарных наук, СПб., 1994.
9. **М. Фуко**, Герменевтика субъекта, Курс лекций прочитанных в коллежде Франс в 1981-1982 учебном году, СПб, 2007.
10. **М. Foucault**, The Use of Pleasure, trans. R. Harley, New York, 1986.
11. **Դավիթ Անկաղթ**, Երկասիրությունը փիլիսոփայականը, Համահավաք քննական բնագրերը և առաջաբանը Ս. Ս. Արևշատյանի, Եր., 1980:
12. **В. Франкл**, Человек в поисках смысла, М., 1990.
13. **Э. Фромм**, Человек для себя, Минск, 1998.

Сильва Петросян
Факультет философии и психологии ЕГУ
Доцент кафедры истории философии

ПСИХОЛОГИЯ КАК ФИЛОСОФИЯ ЗАБОТЫ О ДУШЕ: ДАВИД НЕПОБЕДИМЫЙ

Ключевые слова: забота о душе; культура себя; Давид Непобедимый; психология.

В центре философской системы армянского средневекового философа Давида Непобедимого – человек как носитель внутреннего духовного мира. Отсюда понимание психологии как философии заботы о душе и достижении «добросчастья», синтеза добродетели и осмысления действительности. В статье показывается, что античная традиция внутренней духовной работы или психологического внутреннего опыта может быть культивирована и сегодня для преодоления кризиса человечности.

Silva Petrosyan
Faculty of Philosophy and Psychology, YSU
Associate Professor of the Department of History of Philosophy

PSYCHOLOGY AS A PHILOSOPHY OF THE CARE OF THE SOUL: DAVID THE INVINCIBLE

Key words: Care of the soul; culture of the self; David the Invincible; psychology.

In the centre of the philosophical system of Armenian great medieval philosopher David the Invincible is a human being as a bearer of an inner spiritual world. Therefore we can understand psychology as a philosophy of the care of the soul and achievement of “goodness-happyness” as a synthesis of the virtue and comprehension of the reality. The paper shows that the ancient tradition of the inner spiritual work or psychological experience can be cultivated today to overcome the crisis of humanity.

Մաջես, Ռոջեր Բենջամին

*Լունդի համալսարանի հոգեբանության ֆակուլտետ, Շվեդիա
Անգլ. թարգմանությունը և խմբագրումը՝ Լիլիթ Մնացականյանի
ԵՊԲՀ, Բժշկական հոգեբանության ամբիոն, Հայաստան
SE-221 00 Lund/SWEDEN
Roger.Sages@psy.lu.se*

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՖԵՆՈՄԵՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԵԹՈԴԸ
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԳԻՏԱՃՅՈՒՂԵՐՈՒՄ.
ԻՄԱՍՏԻ ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (ԻՎՎ)**

*Բանալի բառեր՝ հոգեբանական հետազոտություն, ֆենոմենոլոգիա,
իմաստի կոնստիտուցիայի վերլուծություն (ԻՎՎ):*

Ֆենոմենոլոգիան իմաստի որոնումն է: Իմաստն իր ծագումն ունի, որը պետք է փնտրել *կենսաաշխարհում*: Կենսաաշխարհը կարող է դիտվել որպես այնպիսի շերտերի ցանց, որոնցից յուրաքանչյուրը ծագում է բոլոր մարդկանց համար ընդհանուր մի շերտից և մակադրվում դրան: Որո՞նք են կենսաաշխարհի մշակութային շերտերը և ինչպե՞ս են դրանք փոխակերպում գիտության տեսական գործունեությունը: Մա կարևոր հարց է միջմշակութային հոգեբանության մեջ՝ անկախ վերջինիս մասնավոր ուղղվածությունից: Ցանկացած հոգեբանություն, ուղղակիորեն թե անուղղակիորեն, միջմշակութային է [2]: Դա կարող է օգնել պարզելու այն անփոփոխ կառուցվածքը, որ իրար է կապում կենսաաշխարհի տարբեր մշակութային շերտերը լինելով հենց մշակույթով շրջապատված: Այստեղից էլ մարդու վերաբերյալ ունիվերսալ ասպեկտների որոնումը՝ ըստ Berry, J., Segall, M., Dasen, P. & Poortinga, Y. մոդելի [2]: Ֆենոմենոլոգիական տեսանկյունից դա նշանակում է մարդու և աշխարհի կազմակերպման, ինչպես նաև նրանց իմաստների կազմակերպման հարցը: Կենսաաշխարհի մեկ այլ, բայց հարակից ասպեկտ կա նաև դրա՝ գործողություններից կախվածության և գործողություններում և դրանց միջոցով ձևավորման մեջ: Ցանկացած վերլուծության համար մեկնարկի կետ պետք է լինի Մարդու գործողությունը աշխարհում, քանի որ այն շրջապատող աշխարհի իմաստի «կոնստիտուցիայի» (կազմավորման) արդյունքն է: Շրջապատող աշխարհն այն վայրն է, որտեղ Մարդը ինքնին տեղ է գտնում աշխարհի և այլոց հետ հարաբերություններում՝ անմիջապես սեփական ակտիվության միջոցով [1]:

Աշխարհի մասին իմաստի կոնստիտուցիայի վերլուծությունը (բաժին Ա) կարող է օգտակար լինել հասկանալու համար «Ժամանակակից հոգեբանություն» գիտական դիսցիպլինի իմաստի կոնստիտուցիան դրա հիմնադրման ժամանակաշրջանում՝ XIX դարի երկրորդ կեսին: Երրորդ մասը (բաժին Բ) կներկայացնի Հուսերլի հայեցակարգը խիստ գիտության մասին և դրա հետևանքները հոգեբանության՝ որպես էմպիրիկ գիտության սահմանման համար: Դրան կհետևի (բաժին Գ) Հուսերլի ֆենոմենոլոգիայի որոշ հիմնարար թեմաների կարճ ներածություն: Դ, Ե և Ջ բաժինները դուրս կբերեն ընդհանրապես հետազոտության հետ կապված մի շարք հետևություններ: Է բաժինը կներկայացնի Իմաստի կոնստիտուցիայի վերլուծություն (ԻԿՎ)՝ տվյալների հավաքման և վերլուծության մեթոդը:

Բաժին Ա. Աշխարհը որպես գոյերի տարբեր տիրույթների ամբողջություն

Աշխարհը նշանակությունների և դրանց փոխադարձ կապերի ցանց է [4]: Աշխարհը որպես զուտ բնություն բնական գիտության շրջանակներում երբեք ուղղակիորեն չի վերապրվում որպես այդպիսին [9]: Անհատի ուղիղ, ինքնաբուխ փորձառության մեջ այն արտահայտվում է որպես բնակեցված աշխարհ, որպես մի վայր, որտեղ ապրելը կազմակերպվում և կարող է կազմակերպվել, ինչպես “spielraum der möglichkeiten”¹ [6], ուստի որպես ինտերսուբյեկտիվ ավանդույթ: Ընկալումը մասամբ մեկնաբանական գործընթաց է: Այդ մեկնաբանությունը միշտ կատարվում է արդեն ձեռքբերված գիտելիքի հիմքի վրա, իսկ այդ գիտելիքը, ինչպես ցանկացած գիտելիք, կարող է միայն ըմբռնված լինել որպես ինտերսուբյեկտիվության արդյունք, և այդպիսով ծագած և ձևավորված լինել կոնկրետ մշակութային միջավայրում: Հետևաբար, իմաստը միշտ նախորդում է փաստերի նույնականացմանն ու ձևակերպմանը՝ կառուցելով դրա հիմքը: Փաստերին մաքուր և ուղղակի առնչվելը պատրանք է, քանի որ որպեսզի փաստերը արտահայտվեն, նախևառաջ պետք է վերապրվեն և, ինչպես նշվեց վերևում, ամեն ընկալում և ուրեմն՝ ամեն տեսակ փորձառություն գոնե մասամբ մեկնաբանական գործընթաց է: Աշխարհի իմաստի բաղկացուցիչ մաս է կազմում նաև այն իրավիճակը, որում անհատը համայնքի անդամ է՝ նույն շրջակա աշխարհի մաս կազմող անհատների շարքում: Բայց այդ նույն շրջակա

¹ Գերմ.՝ «հնարավորությունների խաղերի տիրույթ»:

աշխարհին առաջարկում է գոյերի այլ ձևեր ևս, որոնք արմատապես տարբերվում են մարդուց՝ անօրգանական բնությունը, օրգանական աշխարհի տարբեր թագավորություններ, մշակութային օբյեկտներ: Գոյերի այս բոլոր ձևերը կազմում են իրականության տարբեր տիրույթները, որոնք հիմնված են յուրաքանչյուր տիրույթի համար յուրահատուկ գոյաբանական բնութագրիչների վրա [8]:

Աշխարհի ընդհանուր հայեցակարգը միավորում է այս բոլոր՝ գոյաբանորեն տարբեր տիրույթները: Աշխարհի ընկալումը, որպես զուտ բնություն, ի հայտ է գալիս որպես վերացարկման գործընթացի արդյունք, այսինքն ոչ նկատառու իմաստների և նշանակությունների արդյունք, քանի որ դրանք դրսևորվում են հույզերի, գնահատման և ընկալման ինքնաբուխ ակտերում [9]: Որպես հոգեբաններ հետաքրքրված լինելով հասկանալ մարդկային վարքը իր ամբողջ բազմազանությամբ՝ առանց մոլորվելու առօրյա կյանքի կամ գիտական հայեցակարգերի դիրքորոշումներից, պետք է փորձենք սահմանել մեր թեմային հարմար մեթոդներ. ճիշտ այնպես, ինչպես բնագետներն են արել իրենց ուսումնասիրության օբյեկտների հետ աշխատելիս և մաթեմատիկոսները կամ տրամաբաններն են հասել իրենց հետազոտական նպատակներին: Ինչպե՞ս է ուրեմն հոգեբանությունը պատմականորեն բնորոշվել որպես բնական գիտություն:

Բաժին Բ. Հուսերը և խիստ գիտության գաղափարը

Այստեղ նպատակահարմար ենք համարում ավելի մանրամասն դիտարկել հուսերյան խիստ գիտության գաղափարը: Խիստ գիտությունը Հուսերլի համար գիտություն է, որի հետազոտության մեթոդները համապատասխանեցված են դրա ուսումնասիրության օբյեկտին: Ուսումնասիրության օբյեկտի իմաստը բացարձակ առավելություն ունի որոշելու, թե հետազոտության գործընթացը ինչ ուղու (ուղիների) է հետևելու: Մեթոդը դրա նկատմամբ երկրորդական է (և պետք է այդպես լինի)՝ հարմարեցված օբյեկտի էական հատկանիշներին: Այլ կերպ ասած, գոյաբանությունն առավելություն ունի իմացաբանության հանդեպ: Յուրաքանչյուր գիտական ուսումնասիրությանը պետք է նախորդի այն իրականության տիրույթի նյութա-գոյաբանական վերլուծությունը, որին պատկանում է ուսումնասիրության օբյեկտը: Դա ճիշտ այն է, ինչ իրականացվել է Կեպլերի, Գալիլեյի, Դեկարտի, Բոյլի և Գասենդիի կողմից՝ ճանապարհ բացելով նյութոսկայան սինթեզի և վերջինիս արմատապես նոր աշխարհայացքի համար: Բայց դա նաև ճիշտ այն է, ինչը

հերքվել է ժամանակակից գիտական հոգեբանության հիմնադիրների կողմից XIX դարի վերջին: Գիտական խստությունը մեկնաբանվել է որպես գիտական ճշգրտության հոմանիշ՝ բնական գիտությունների մեջ: Հուսերյան ֆենոմենոլոգիայի համաձայն՝ գիտության մեջ խստության գաղափարը պետք է դիմի գուտ օբյեկտի հետ առնչվելու ձևի և հենց օբյեկտի հատկանիշների միջև հարաբերությունների տիպին: Որքան քիչ է մեթոդն աղավաղում իր առարկան, այսինքն որքան մեծ է ուսումնասիրության օբյեկտը ճշգրիտ և լիարժեք նկարագրելու ձգտումը, այնքան խիստ է այն և այնքան հաջող կարող է համարվել գիտական՝ բառի ծագումնաբանական իմաստով: Ճշգրտությունը կիրառելի է միայն մատերիական գոյերի տիրույթի առարկաների նկատմամբ, որտեղ քանակականության և չափման գաղափարները դրանց էական բնութագրիչների մասերն են, և, այդպիսով, պահանջում են ճշգրիտ չափում, որպեսզի գիտությունը լինի խիստ: Այն բոլոր դեպքերում, երբ չափման և ճշգրտության գաղափարը օտար է թվում առարկայի էական կառուցվածքին, գիտությունը, ըստ խստության հիմնական սահմանման, պետք է խուսափի չափման որևէ տեսակից, գոնե սովորական քանակական-մաթեմատիկական չափումից: Այսինքն, այդ դեպքերում փորձելը ճշգրիտ համարժեք կլինի ոչ խիստ կամ հենց ոչ գիտական լինելուն: Gilbert Ryle-ի խոսքերով՝ դա կլինի «սխալ» կատեգորիայի ճշացող օրինակ [12]:

Հումանիտար և հասարակական գիտությունները գործ ունեն անհատների, խմբերի, նրանց փոխհարաբերությունների, ինչպես նաև նրանց ու իրենց համար ընդհանուր (կամ մասնակիորեն ընդհանուր) շրջապատի միջև հարաբերությունների բազմազան ձևերի հետ: Անհատների հույզերը, մտքերը, գաղափարները, գուգորդումները, փորձառությունները մեր գիտական հետաքրքրությունների մասն են՝ լինելով ամբողջական մարդ էակ կոչվածի անբաժանելի մասը: Այսպիսով, մենք առերեսվում ենք դրանք դիտարկելու երկու այլընտրանքային ձևերի հետ: Մենք կարող ենք դրանք համարել փաստեր: Կամ մենք կարող ենք դրանք համարել իմաստներ: Ի՞նչ կանոններ կամ նորմեր մենք կարող ենք ունենալ՝ օգնելու համար ինքներս մեզ ընտրություն կատարել այս երկու այլընտրանքների միջև: Կամ կա՞ արդյոք մի երրորդ այլընտրանք, որը մեզ թույլ կտա աշխատել երկուսի՝ «փաստ»-ի հեռանկարի և «իմաստի» հեռանկարի հետ, և կախված կլինի տվյալ գիտական հետա-

գոտության նախագծի ներկայացրած հետաքրքրության ձևից, առարկայից կամ իրավիճակից:

Բաժին Գ. Որոշ ֆենոմենոլոգիական հայեցակարգեր

Ես հավատում եմ, որ հուսերյան ֆենոմենոլոգիան կարող է մեզ առաջարկել լուծում՝ համակարգային, լավ կառուցված և լավ արտիկուլյացված եղանակ ձևակերպելու համար:

Մարդկային իրավիճակները բախվում են մասամբ ընդհանուր *կենսաշխարհում*: Կենսաշխարհը ծագում է անհատի առօրյա գործունեության մեջ և վերջինիս միջոցով: Այն խարսխված է կենսունակ մարմնի մեջ՝ մարդուն տալով իրեն հատուկ մարմնական տեղակայում և կողմնորոշում: Գործունեության ընդհանուր ձևերում իրենց մասնակցության մեջ (և միջոցով) անհատները այլ մարդկանց հետ են կիսում իրենց կենսաշխարհի գոնե մի մասը: Այս երևույթը ներմուծում է որոշակի էթիկական չափում, քանի որ ցանկացած տիպի գործունեություն շատ մարդկանց համար կարող է ունենալ որոշակի տեսակի հետևանքներ: Մարդիկ կարող են ներգրավված լինել մի ընդհանուր գործի մեջ, միմյանց և միջավայրի հետ հատուկ հարաբերություններ ստեղծել՝ առաջնորդվելով ապագայի հեռանկարով: Դա միշտ տեղի է ունենում յուրահատուկ *իրավիճակում*, որը բնութագրվում է մշակութային, անհատական և նյութական ասպեկտներով, որոնք էլ պետք է հաշվի առնվեն հետազոտական գործընթացի բոլոր պահերին [2]: Իմաստը կառուցվում, կոնստիտուցիայի է ենթարկվում միայն անհատի կողմից՝ սեփական առօրյա կյանքում և դրա միջոցով:

Բնության տիրույթին պատկանող գոյը դրսևորվում է արտաքին ընկալման մեջ: Դա այնտեղ ընկալվում է որպես ինչ-որ բան, որը կա հենց այդտեղ՝ քիչ թե շատ տևող ժամանակահատվածում, իր նման հենց այդտեղ եղող այլ բաների հետ հնարավոր պատճառային փոխհարաբերության մեջ: Ո՛չ կամքը, ո՛չ աֆեկտները, ո՛չ հուզականությունը չեն ընկալվում որպես դրան պատկանող երևույթներ: Ավելի կարևոր է այն, որ թվում է, թե դա ինքնին ունի իր իմաստը, բացի այն իմաստից, որ մենք ակտիվորեն վերագրում ենք դրան:

Մասնավոր մարդ էակին կամ մարդ էակների միջև հարաբերություններին ակնատես լինելով՝ մենք ձեռք ենք բերում միանգամայն տարբեր հատկանիշներ: Չնայած՝ որոշակի ժամանակի ընթացքում «այնտեղ լինելու» ասպեկտը (որ բխում է յուրաքանչյուր անհատի մարմնական, նյութական ասպեկտից) նույնպես կարող է առկա լինել,

բայց դա այլևս ամենասկզբունքային և ամենաուշագրավ ասպեկտը չէ: Նույնիսկ այդ ժամանակի տնտղությունը չի ընկալվում որպես հիմնական կարևորություն կրողը, ինչպես բնության տիրությունն պատկանող գոյի դեպքում է, այլ դա այստեղ ընկալվում է որպես ի սկզբանե հենց «մարդուց» կախված և ընդամենը որպես մի դիպված՝ «մարդու» նաև նյութական, բնական և մարմնական լինելու վրա հիմնված պատահական բան:

«Մարդուն» որպես ընկալման առարկա համարելու առաջին և ամենաակնեբեր տեսանկյունն այն է, որ դրա իմաստն ուղղակիորեն ընկալելի չէ: Դա «ինձ պես» ընկալելու արդյունքն է՝ ընկալողի և ընկալվողի միջև էության հիմնարար նույնականություն, ինչը տեղի չի ունենում որևէ այլ առարկայի ընկալելիության դեպքում: Ուրեմն, կամքը, աֆեկտը, հուզականությունը հիմա դիտվում են որպես ամբողջական «մարդ» կոչվածի ինտեգրալ, էություն կազմող մասերը: Ավելին, դրանք դիտվում են որպես այդպիսին՝ ամբողջից վերացարկված, որպես դրա ոչ անկախ մասերը, որոնք գործում են նորմալ, բնական, այնպես, ինչպես տարբերակված, բայց լավ ինտեգրացված ամբողջությունը (մոնադը): Անհատի սոցիալական տեղակայվածությունը, նրա գոյությունը ոչ միայն որպես «ինչ-որ մեկը», այլև որպես համայնքի անդամ՝ որոշակի միջավայրում, ընկալվում է որպես նրա էական բնութագրիչը: Բավականին հետաքրքիր է, որ կա նմանություն անհատի ֆենոմենոլոգիական մոտեցման և դրա մասին արևելյան մշակույթների հայեցակարգերի միջև, ինչպես որ նկարագրում են Markus-ը և Kitayama-ն [11]. Ինքնության արևմտյան հայեցակարգը այն անհատի մասին է, որն առանձին է, ինքնավար և ատոմիզացված (դիսկրետ ընդունակությունների, գծերի, արժեքների և դրդապատճառների համակարգից կազմված), որն ուրիշներից առանձնություն և անկախություն է որոնում: Եվ ընդհակառակն, արևելյան մշակույթներում կապվածություն, հարազատություն և փոխկախվածություն է որոնվում, ինչը բխում է ինքնության այն հայեցակարգից, ըստ որի՝ այն դիսկրետ ամբողջություն չէ, այլ ժառանգաբար կապված է ուրիշներին: Անձը միայն «ամբողջական» է, եթե տեղակայված է իր տեղում՝ սոցիալական ամբողջության մեջ:

Մի ընդհանուր թել կա այս տեսանկյունների միջև: Այն, որ դրանք բոլորը հասկանալի են միայն այն ժամանակ, երբ իմաստալից են, իմաստով հագեցած են: «Իմաստ ունենալ» ֆենոմենոլոգիայի մեջ նշանակում է կողմնորոշված լինել դեպի ինչ-որ բան, նայել ինչ-որ բանի,

ջանք գործադրել ինչ-որ բանի համար, համակրանք ներշնչել, զգալ ինչ-որ բան ինչ-որ բանի նկատմամբ, այսինքն միտումնավոր կերպով կողմնորոշված լինել մի «առարկայի» նկատմամբ, անկախ նրանից, թե ինչ տեսակի առարկա դա կարող է լինել կամ թե մենք ինչպես կսահմանենք դա: Այս առումով, «իմաստ» բառը ճիշտ համապատասխանում է արաբերեն «*Mānā*» բառին, որ ներմուծվել է Իբն Սինայի կողմից վաղ Միջնադարում, որպես Մարդու էական բնութագրիչ: Իմաստը, որ մենք ընկալում ենք առարկայի մեջ, ոչ այլ ինչ է, քան ձևը, որով առարկան հայտնվում է մեզ, և որ մեր կողմից որոշված է հենց դրա հայտնվելու պահին:

Բաժին Դ. Մեթոդները. որակական և/կամ քանակական

Որևէ հետազոտության դաշտում առաջին ուսումնասիրությունը պետք է միշտ սկսվի որպես փորձնական նախագիծ, որտեղ մարդը դիտարկվում է իր բնական, ինքնաբուխ ամբողջականության մեջ: Այսպիսի մոտեցումը, գոնե մասնակիորեն, ունի լավ հաստատված ավանդույթ, որ սկսվել է Ժան Պիաժեի աշխատություններից և սոցիալական հոգեբանության ու աշխատանքի մասին գիտության մեջ գործողություն-տեսական մոտեցումից, որ նախաձեռնել է գեշտալտ հոգեբանության՝ Հուսերլի ազդեցությունը կրած հիմնադիրներից մեկը՝ Կուրտ Լևինը, և որին շարունակություն է տվել Chris Argyris-ը, ապա նորից կետունակություն ստացել միջմշակութային հոգեբանության ոլորտում Ernest Boesch-ի և Lutz Eckensberger-ի կողմից [2]: Դա նաև ժամանակակից քվանտային տեսության մեջ համարվում է նոր հորիզոններ բացելու միակ բեղմնավոր մոտեցումը:

Այս տեսանկյունից, որակական մոտեցումը դառնում է *sine qua non*¹ հանգամանքը հետևյալ մի քանի պատճառներով: Իմաստի ծագումը անհատական *սուբյեկտիվության* սահմանման մեջ է, այսինքն *անհատի* սուբյեկտիվության: Անհատը միակ իմաստ կառուցողն է՝ իր առօրյա գործունեության մեջ և այդ գործունեության շնորհիվ: Միայն իմաստի՝ որպես անհատական սուբյեկտի կողմից կառուցված երևույթի զգույշ վերլուծությունը կարող է մատնանշել այն պատահական ընդհանրացումները և ձևակերպումները, որոնք տրվում են անհատական մակարդակից բարձր գտնվող տիպաբանություններին և դասակարգումներին: Այսպիսով, անհատին միշտ պետք է թույլ տրվի ազատորեն ինքնար-

¹ Լատ.՝ անհրաժեշտ հանգամանք, առանց որի գործողությունը չի կարող տեղի ունենալ (L. Մ.):

տահայտվել՝ սեփական բառերով և իր իսկ հանգամանքներում: Այս առումով անհատի հայեցակարգը բարձրագույն գիտական արժեք է՝ լինելով գիտական հայեցակարգման բոլոր փորձերի համար միակ գործող հիմքը: Հաստատել, որ իմաստը անհատապես է կառուցվում, կոնստիտուցիայի ենթարկվում՝ որպես սուբյեկտիվության արդյունք, նշանակում է հաստատել նաև դրա իմաստին հասնելու անհրաժեշտությունը տվյալ անհատի սեփական հասկացություններով, բառերով և արտահայտություններով:

Մյուս պատճառն այն է, որ որակական մոտեցումն օժտված է շատ ավելի մեծ ճկունությամբ: Դա թույլ է տալիս այնպիսի հարցադրումներ, դիտումներ կամ նոր դիտանկյուններ, որոնք ուսումնասիրվող իրավիճակի տարբեր նախագծերում, դրանց զարգացման տարբեր փուլերում և կյանքի մշտապես փոփոխվող պայմաններում ավելի լավ հարմարվելու հնարավորություն են տալիս: Չնայած գիտության և գիտական գործունեության ընդհանուր պոզիտիվիստական հասկացման մեջ այս մշտապես փոփոխվող պայմանները, սովորաբար համարվում են խիստ գիտությունն արգելափակող գործոններ (գիտություն, որտեղ փորձարկումը տեղի է ունենում խստորեն վերահսկվող պայմաններում և համապատասխան բուն ուսումնասիրությունից առաջ ձևակերպված պլանին, ինչն էլ համարվում է, այսպես ասած, հետազոտության միակ ճշմարիտ ուղին) և արդյունքների ընդհանրացման համար լուրջ դժվարություններ ստեղծող (եթե ոչ ամբողջովին վտանգոտ) հանգամանք, այնուամենայնիվ այդ փոփոխվող պայմանների էկոլոգիական վալիդությունը դրանք դարձնում է ոչ միայն անխուսափելի, այլև, ընդհակառակը, յուրահատուկ կերպով ցանկալի՝ ֆենոմենոլոգիական տեսանկյունից:

Ի դեպ, վերը նշվածը հաճախ մեկնաբանվում է այնպես, կարծես թե դա նշանակում է, որ որակական մոտեցումը կարող է արդյունք լինել միայն ձեռքբերված տվյալների որակական մշակման, իսկ քանակական մոտեցման կարիքը լինում է սկզբում, երբ մեկը ձգտում է քանակական տվյալների մշակման: Այստեղ ներկայացվող մեթոդի դեպքում, գոնե, հնարավոր և նույնիսկ ցանկալի են տվյալների որոշ տիպերի քանակական գործածություններ, որոնք կհաջորդեն որակական ինտենսիվ և ստույգ, իմաստակենտրոն վերլուծության ձևին: Կորերը, դիագրամները և այլ տեսակի նկարագրական վիճակագրությունները հեշտորեն կարող են ձեռքբերվել նույնիսկ որակական գործընթացում: Մի շարք իրարադարձությունների կամ ներգործության մեջ ուղղորդված փոփոխու-

թյունների համար անցկացվող շերտային վերլուծության կամ գործունային վերլուծության տեխնիկաները և վիճակագրական մեթոդները կարող են հաստատել իմաստի կոնստիտուցիային վերաբերող այս ֆենոմենոլոգիական մեթոդով ձեռքբերված արդյունքների պարզաբանման շահավետությունը: Այս դեպքում գոնե դրանց իմաստը հստակ է՝ նյութի իմաստի նախնական, մանրակրկիտ վերլուծության արդյունքն է և, այդպիսով՝ ներքին կերպով դրդապատճառված և մեկնաբանված:

Այժմ ամփոփենք, թե ինչպես է ֆենոմենոլոգիան մեկնաբանում իմաստի ֆենոմենը: Գիտակցությունն ինտենցիոնալ է: Դա նշանակում է, որ այն միշտ ուղղված է դեպի որևէ օբյեկտ: Օբյեկտն այստեղ վերաբերում է նրան, ինչ ընկալվել է գիտակցության կողմից՝ որպես գիտակցության կողմից ընկալված: Դա կարող է լինել ընկալման որևէ արտաքին օբյեկտ, ինչպես ծառ կամ տուն մեր դիմաց: Դա կարող է լինել հուշ, ցանկալի մի բան կամ իրադրություն: Կամ կարող է լինել դատողության մեջ «դատվածը», հուզմունքի մեջ հույզը և այլն [3, 5]: Ուղին, որում ինտենցիոնալ օբյեկտը ուղղորդված է գիտակցության կողմից և ընկալված է գիտակցական գործունեության կողմից, կառուցում է իմաստը՝ ինտենցիոնալ օբյեկտի, այսպես ասած, նտեմատիկ կառուցվածքը:

Բաժին Ե. Որոշ դրույթներ

Իմաստի, դրա կոնստիտուցիայի այս ֆենոմենոլոգիական տեսության դրույթները կարևոր են՝ հոգեբանությունը, և a fortiori, միջմշակութային հոգեբանությունը որպես գիտություն պատկերացնելու և հասկանալու համար: Ահա դրանցից մի քանիսը:

Ակտիվություն. Մարդու հիմնական բնութագրիչն այն է, որ նա ոչ թե զգայությունների և տպավորությունների պասիվ ստացող է, այլ հակառակը, Մարդը համարվում է իր գիտակցության գործունեության շնորհիվ սեփական գիտակցության օբյեկտը ակտիվորեն ձևավորող, կառուցող էակ:

Ուսսիվ սինթեզներ. ինտենցիոնալությունը ստեղծում է նոր իմաստ, բայց այն դա ստեղծում է ավելի վաղ ինտենցիոնալ ակտերի կարևոր հիմքի վրա: Դա նույնպես, որպես պասիվ սինթեզ, հիմք է հանդիսանում սովյալ պահին ակտիվ սինթեզի համար՝ փոխելով իմաստի ավելի վաղ շերտը, ինչի վրա դա հիմնված է:

Գործընթաց. իմաստը շարունակական և մշտապես փոփոխվող գործընթաց է: Դա օբյեկտի կայուն վերաբրտադրումը չէ: Իմաստը օբյեկտն է՝ կողմնորոշված «այստեղ և հիմայի» մեջ:

Իրավիճակ. քանի դեռ իրավիճակային համատեքստն ունի որևէ դեր իմաստի կոնստիտուցիայի գործընթացի մեջ, վերջինս չի կարող տեղի ունենալ առանց դրա, եթե մենք ուզում ենք հասկանալ այդ գործընթացը [14, 7]: Մարդը միաժամանակ և՛ ձևավորվում է իրավիճակի կողմից, և՛ ձևավորում է իրավիճակը՝ դրա մի մասն է, և հնարավոր չէ հասկանալ իրավիճակը՝ մարդուն հեռացնելով իրավիճակից: Իրավիճակը միշտ յուրահատուկ է, բնութագրվում է մշակութային, անհատական և նյութա-էկոլոգիական ասպեկտներով, որոնք պետք է հաշվի առնվեն հետազոտության գործընթացի բոլոր պահերին:

Ինտերսուբյեկտիվություն. իմաստի կոնստիտուցիան գործընթաց է, որ միշտ տեղի է ունենում սուբյեկտների համայնքի մեջ և համայնքի հետ (դա կլինի իրական, թե մտացածին) [6]: Դա տեղի է ունենում բոլորի համար ընդհանուր կենսաշխարհում: Կենսաշխարհը կիսելը ուրիշի հետ արդեն վկայում է այն մասին, որ անհատները մասնակցում են գործունեությունների ընդհանուր ձևերին և միմյանց մասին ունեն առըվազն մեկ՝ արդեն կազմավորված, բայց մասնակի պատկերացում:

Էթիկա. մարդիկ կարող են ներգրավված լինել ընդհանուր նախագծերի մեջ՝ միմյանց և իրենց միջավայրի հետ հատուկ հարաբերություններ հաստատելով, առաջնորդվելով ապագայի մասին տեսլականով և իրենց համար հնարավոր հետևանքներով՝ պատասխանատվությունը ենթադրելով որպես հիմնական չափում: Դա հատկապես ակնհայտ է գործող կյանքի մասին գիտություններում: Որպես այդպիսին՝ նրանք ունեն էթիկական չափում: Էթիկան, այդպիսով, գիտության տիրույթից դուրս մտածողության ոլորտ չէ, այլ դրա մի մասն է՝ որպես մարդկային գործունեության և իմաստի կոնստիտուցիայի բուն բնութագրիչ, հատկապես մարդու մասին գիտություններում [5]:

Օբյեկտիվություն. օբյեկտիվությունը, որ թվում է՝ ձեռք է բերվում «անտեսելով» կամ «վերահսկելով» սուբյեկտիվությունը, պատրանք է և, ինչպես դա բազմիցս ցույց է տրվում հոգեբանության պատմության և դրա ու հասարակության հարաբերությունների մեջ՝ մանկավարժական կամ հասարակական-քաղաքական վտանգավոր հետևանքներով հանդերձ, այնպես էլ պարզագույն կերպով ցույց է տրվում միջմշակութային հոգեբանական հետազոտության կողմից [2]: Օբյեկտիվության արժանահավատ ձևին հասնելու միակ ճանապարհը սուբյեկտի բացարձակ արժեքը և դիրքը ամբողջապես խոստովանելու և սուբյեկտիվությունը որպես իմաստի կոնստիտուցիայի միակ հիմք ընդունելու ուղին է:

Օրյեկտիվությունը կարող է միայն մեկնաբանվել որպես «ինտեր-սուբյեկտիվ կերպով համաձայնված»՝ որոշակիացված պայմաններում:

Բաժին 9. Ընդհանրացում

Ընդհանրացումն այլևս a priori չեն ընդունում և չեն ձգտում տեսնել որպես գիտության բնութագրիչ: Դա կլինի (կամ չի լինի) հրատապ ինդիքների շարքում՝ միայն որպես տվյալների վերլուծության և մեկնաբանության գործընթացի արդյունք և, ավելի խիստ կերպով, կախված իրականության այն տիրույթի նյութագոյաբանական ասպեկտներից, որին պատկանում է հարցի առարկան:

Իմաստը, որ հաստատված է որպես բոլոր այն գիտությունների հիմնական բնութագրիչը, որտեղ մարդը «ուսումնասիրության կենտրոնական առարկան» է, որակ է և ոչ թե քանակ: Սա «ի՞նչ է դա» հարցի պատասխանն է, այլ ոչ թե «որքա՞ն է դա»: Յուրաքանչյուր անհատի եզակիությունը, որ ճանաչվում է որպես մեկնարկային կետ (իմաստի կոնստիտուցիայի անհատական գործընթացը), դրան հնարավորինս ամբողջական բացատրություն տալու ժամանակ դառնում է նաև նպատակ: Այն այլևս չպետք է արգելք համարվի արդյունքների՝ ընդհանրացվելու ունակության համար, այլ պետք է հանդիսանա դեպի դրանք տանող արքայական ճանապարհը և դրանց ոսկյա բանալին:

Հիմնական միտումները, ճշմարտության դոգմատիկ տեսությունը ընդհանրացումը սահմանում են որպես դատողության և համապատասխան փաստերի դրության միջև ադեկվատություն. դրանից բխում է, որ գիտելիքի ձևակերպման և ձեռքբերման մեջ ներառվող գործողությունները ոչ մի կերպ չեն ձևավորում (inform, L.U.) (բառի միջնադարյան իմաստով) առարկան, որ հայտնի է որպես այդ գործողությունների արդյունք [13]: Ֆենոմենոլոգիական մտածողությունը չի անտեսում ճշմարտության հասկացությունը. վերջինս, ընդհակառակն, ֆենոմենոլոգիական մտածողության մեջ ունի էական կարևորություն, առանցքային դեր՝ լինելով ոչ այլ ինչ, քան ցանկացած ինտենցիոնալ օրյեկտի ամենաադեկվատ *տրվածությունը*՝ համաձայն այդ օրյեկտը կառուցող հոգեկան (ֆենոմենոլոգիական եզրաբանությամբ՝ նոտտիկ) ակտերի:

Եթե մյուս կողմից, ինչպես ֆենոմենոլոգիական տեսանկյունն է պնդում, իրականության բաժանումը տարբեր կատեգորիաների և իրադրությունների էապես կախված է իմացող սուբյեկտի իմացության ակտերի, իր սուբյեկտիվ, սինթետիկ դատողական գործողությունների և իրականության տիրույթների միջև փոխազդեցությունից, և դրա ար-

դյունք է, ապա դատողությունը պարտադիր չէ, որ ինքնին ճիշտ կամ սխալ լինի, քանի որ համապատասխանության գաղափարը դառնում է «փաստարկման շրջան»: Համապատասխանության գաղափարի ճշմարտացիությունը արժեքը, կպատկանի և կսերտաճի դա վերապրելու հնարավորությանը: Իրադրությունը այլևս պարզապես չի դիտարկվում որպես նախապես գոյություն ունեցող իրականության արտահայտություն [13]: Ճշմարտության չափանիշը պետք է ներառի այն ուղին, որով իմացությունը հասանելիություն է շնորհում իրերին, և ճշմարտությունը այլևս չի սահմանվում անկախ սուբյեկտիվությունից, որը իր պասիվ և ակտիվ սինթեզի մեջ և միջոցով [8, 9] համարվում է այն օբյեկտը, որի վրա դատողությունը ձևակերպվում է: Այս պնդման նշանակությունը միջմշակութային հոգեբանության մեջ ակնհայտ է:

Բաժին Է. Իմաստի կոնստիտուցիայի վերլուծություն (ԻԿՎ)

Իմաստի կոնստիտուցիայի վերլուծությունը (համաձայնեցված է MCA, 4.1.0, 1997-1999 համակարգչային ծրագրին) տեքստի վերլուծության մեթոդ է, որ հիմնված է Հուսերլի ֆենոմենոլոգիական հոգեբանության վրա [5]: Ֆենոմենոլոգիական վերլուծությունը միշտ պետք է սկսի epochè-ի կիրառմամբ (epochè բառը ենթադրում է մեր բոլոր նախապես ունեցած պատկերացումների ժամանակավոր դադար), որպեսզի ձեռք բերենք ուսումնասիրման խնդրի մասին մաքուր տեսիլ՝ հնարավորինս ազատ նախապես ունեցած պատկերացումներից: Այս դիրքորոշումը ուղղակի նշանակություն ունի մեթոդի ձևակերպման համար: Հիմնավորումն այն է, որ պետք է ֆենոմենին մոտենալ հնարավորինս անկողմնակալ կերպով՝ կողքի դնելով նախկին բոլոր գիտելիքներն ու ակնկալիքները. դա վերաբերում է ինչպես հետազոտողի արդեն ունեցած, այնպես էլ տեքստի ներածական ընթերցման ընթացքում առաջացած փորձին: Մեթոդը սկսվում է *ինքնահաշվետվությունից*¹ կամ բաց հարցազրույցից: Անձին խնդրում են պատասխանել հատուկ մշակված և ձևակերպված հարցերի, որոնք վերաբերում են այն թեմային, որը նշանակություն ունի անձի համար և նաև հետազոտության համար ներկայացնում է գիտական հետաքրքրություն: Հարցը պետք է արտասանել այնպես, որպեսզի անձը կարողանա ազատորեն և առանց որևէ սահմանափակման արտահայտվել, այսինքն անձը պետք է ունակ լինի ազատորեն ծավալվել հարցի շուրջ: Ցանկացած տեքստ ունակ է վերլուծվելու:

¹ Անգլ.՝ self-report-ի բառացի թարգմանությունն է (Լ. Մ.):

Նախնաառջ, մեթոդը փորձում է տարբերել իմաստի փոքր միավորներ՝ որպես epochè-ի հայեցակարգի արդյունք: Դա արվում է երեք պատճառով.

- Անձի ինքնահաշվետվության ավելի պարզ ձևակերպված հատվածները վկայում են այն մասին, որ մեկնաբանության ճշգրտությունը կարող է բարձր լինել:
- Իմաստի փոքր միավորները բարձրացնում են հուսալիությունը և մեծացնում վերլուծությունը վալիդացնելու հնարավորությունները: Դա թույլ կտա այլ հետազոտողների ավելի հեշտորեն քայլ առ քայլ համեմատել իրենց արդյունքները և գտնել տարբերությունները, վրիպումները կամ բացթողումները, որ կարող են պատահել:
- Իմաստի յուրաքանչյուր միավորի մեջ կարող են շատ մանրամասն կերպով կազմավորվել տարբեր մասնակի *միտումներ* (ինտենցիաներ): Այդ ամենից կարող է պարզ դառնալ, թե ինչպես է անձը իրականացնում իմաստի կոնստիտուցիա:

Այնուհետև հարկ է նշել, որ մեթոդի առաջին նպատակն է, որ անձը, ինչպես վերևում նշված է, կարողանա հնարավորինս ազատի ինքն իրեն բոլոր նախկին գիտելիքներից, փորձից, որոնք հիմնված են ինչպես գիտական, այնպես էլ ավանդական, մշակութային մտածողության վրա, և բաց անել սեփական միտքը նոր գիտելիքի համար: Դա ֆենոմենոլոգիական դիրքորոշումն է: Մյուս նպատակը՝ մաքուր իմաստը դրա արտահայտման մոդալություններից տարանջատելու կարողությունն է:

Մոդալությունները պետք է հնարավորություն տան հասկանալու անձի փորձը: Դրանք, լինելով այն ուղին, որի միջոցով գիտակցականը (noesis) պատկերում է noema-ն (*միտված* օբյեկտի իմաստի կառուցվածքը), պատկանում են սուբյեկտիվության խորագույն շերտերին [5]:

Մոդալությունները կարող են լինել տարբեր տեսակների և արտահայտել *հավատի* աստիճան, օրինակ՝ «doxa»-ն (բացարձակ ճշմարտությունը), հավանականությունը, հնարավորությունը, կասկածը, ենթադրությունը և այլն: Դրանք կարող են նաև արտահայտել *գործառույթ*, այնպես ինչպես նշանային, պատկերային կամ իմացական (ուղիղ ընկալումը հենց «ներկայում» տեղի ունեցող բան է): Այլ մոդալությունների օրինակներ են *կամքի*, *ժամանակի*, *սեփականության* և այլ երևոյթների դրսևորման աստիճանները: **Երրորդ**. մյուս քայլը *միտումնային* (ինտենցիոնալ) վերլուծությունն է, որը բովանդակության մաքուր իմաստի

վերլուծություն է: Դա ընթանում է քայլ առ քայլ և վերլուծության առաջին փուլի ավարտն է: Հետագոտողը փորձում է գտնել բոլոր մասնակի միտումները (ինտենցիաները), որոնք միասին վերցրած տանում են դեպի իմաստի կոնստիտուցիան: **Չորրորդ.** հաջորդ քայլում տարբերակվում է, թե որ միավորներն են ձևավորում միաված օբյեկտի իմաստային խմբերը: Դրանք հանդիպում են ամբողջ միտումնային վերլուծության մեջ: Միավորն ի հայտ է գալիս որպես մի բան, որ «գոյություն ունի» տվյալ անձի համար: Ամեն ինչ, ինչը կապված է միավորի հետ, հաշվի է առվում իր բոլոր նկատվող փոփոխություններով հանդերձ: Բառերը, արտահայտությունները՝ պրեդիկատները, որ օգտագործվում են միավորի մասին խոսելիս, կապվում են դրանց պատկանող միավորներին և ընդգծում են դրանց իմաստները՝ որպես ռեսպոնդենտի կողմից վերապրված: **Հինգերորդ.** կատարվում է վերջնական համադրություն՝ հաշվի առնելով ձեռքբերված միավորների և պրեդիկատների ամբողջականությունը: Դա տալիս է ինսայթ՝ անձի կենսաշխարհի և դրանում շրջակա աշխարհի կառուցման և վերապրման ձևի մեջ: Այս համադրությունը բացում է մեր արդյունքների մեկնաբանության *ժամանակային* չափումը: Այն պոզիտիվիստական մտածողության մեջ այժմ լայն տարածում ունեցող *կանխատեսման* հայեցակարգի ֆենոմենոլոգիական այլընտրանքն է: Այն նաև նույն պոզիտիվիստական մտածողության մեջ այժմ լայն տարածում ունեցող *հասկացման* հայեցակարգի ֆենոմենոլոգիական այլընտրանքն է, որը Dilthey-ից սկսած և հերմենևտիկական մտածողության զանազան տարբերակներում շարունակվող ավանդույթ է:

Այսպիսով, մենք ներկայացրինք ֆենոմենոլոգիայի հիմնական հայեցակարգերը, ինչպես նաև դրանց կարևորությունը գիտական գործունեության մեջ՝ քննարկելով պասիվ և ակտիվ սինթեզը, կենսաշխարհը, նարատիվները, զարգացման շարունակական և ժամանակի մեջ փոփոխվող գործընթացը, ինչպես նաև ֆենոմենների էքզիստենցիալ ասպեկտները: Մա բավականին համակողմանի մոտեցում է, որ սկսվում է անհատի եզակիությունից և ուղղվում դեպի իմաստի կոնստիտուցիան՝ դրա բոլոր անհատական և մշակութային համատեքստերում, հետևաբար մեծ կարևորություն ստանալով հոգեբանական ուսումնասիրություններում:

Գրականություն

1. Arendt, H. (1958/1998) *The human condition* Chicago: Chicago University Press
2. Berry, J., Poortinga, Y., Segall, M., and Dasen, P. 1992 *Cross-cultural psychology. Research and applications*. New York: Cambridge.
3. Brentano F. , 1874/1928. *Psychology from an Empirical Standpoint*
4. Heidegger, M. (1927/1962). *Being and Time*. New York: Harper & Row.
5. Husserl, E. (1913/1976). *Ideen zu einer reinen Phänomenologie und phänomenologischen Philosophie. Erstes Buch. Allgemeine Einleitung in die Phänomenologie. Husserliana III*. The Hague: Martinus Nijhoff Publishers. 157
6. Husserl, E. (1954a). *Erfahrung und Urteil. Untersuchungen zur Genealogie der Logik*. Hamburg: Glaesen & Goverts.
7. Husserl, E. (1954b). *Die Krisis der europäischen Wissenschaften und die Transcendentale Phänomenologie, Husserliana VI*. The Hague: Martinus Nijhoff Publishers.
8. Husserl, E. (1971). *Ideen zu einer reinen Phänomenologie und phänomenologischen Philosophie. Drittes Buch: Die Phänomenologie und die Fundamente der Wissenschaften., Husserliana V*. The Hague: Martinus Nijhoff Publishers.
9. Husserl, E. (1975). *Formale und Transcendentale Logik., Husserliana XVII*. The Hague: Martinus Nijhoff Publishers.
10. Koyré A. (1968), *Metaphysics & Measurement: Essays in Scientific Revolution* Harvard University Press.
11. Markus, H. R., & Kitayama, S. (1991). Culture and the self: Implications for cognition, emotion, and motivation. *Psychological review*, 98(2), 224–253.
12. Ryle, Gilbert (2002). *The Concept of Mind*. Chicago: University of Chicago Press.
13. Vuillemin J. (1971), *La logique et le monde sensible. Étude sur les théories contemporaines de l'abstraction*, Paris, Flammarion.
14. Wittgenstein, L. (1993). *Philosophical Occasions*, Hackett Pub Co.

Տաճեճ, Ղոճեր Բեռճամին

ՖաԿուլտեթ ՔսիԿոլոճի, Անիվերսիտեթ Լունճա, Տևեճիա

Քերեվոճ ս անճլիսԿոճոճո և ղեճաԿԿիա Լիլիտ ՄնաԿաԿանյա
ԵԳՄԱ, Կաճեճրա ՄեճիԿինսԿոճի ՔսիԿոլոճի, Արմենիա

ՓԵՆՈՄԵՆՈԼՈԳԻԿԵՏԿԻՅԻ ՄԵԹՈԴ ԻՏՏԵճՈՎԱՆԻԱ Վ ՔՏԻԿՈԼՈԳԻԱ Ի Վ ՏՄԵՅՆՅԻ ՆԱՄԿԱԿ: ԱՆԱԼԻՏ ԿՈՆՏԻԿՄԻՄԱՅԻ ՏՄԻՏԼԱ (ԱԿՏ)

Կլոճեվե Տևա: *քսիԿոլոճիԿեճ իՏտեճՈՎԱՆԻԱ, փեՆոմեճոլոճիա, Անալիճ ԿոնՏիԿուճի Տևաճլա (ԱԿՏ)*

Վ Տաճրե թրեճաճեճեճ փեՆոմեճոլոճիԿեճ թոճոճ Կ էմքիրիԿեճոճ ԱՏտեճՈՎԱՆԻԱ Վ ՔՏԻԿՈԼՈԳԻԱ և թրեճաճեճեճ փեՆոմեճոլոճիԿեճ ՄեթոԳ Անալիճ ԿոնՏիԿուճի Տևաճլա (ԱԿՏ), ղրեճաճեճեճ Վ Անիվերսիտեթ Լունճա թրեճոփոճոր Ղոճերոճ Տաճեճ.

Sages, Roger Benjamin
Department of Psychology Lund University, Sweden
Translation from English and edition by Lilit Mnatsakanyan
YSMU, Medical Psychology Department, Armenia

**PHENOMENOLOGICAL RESEARCH METHOD IN PSYCHOLOGY AND RELATED AREAS.
MEANING CONSTITUTION ANALYSIS (MCA)**

Key words: *psychological research, phenomenology, Meaning Constitution Analysis (MCA)*

A phenomenological approach, as a basis for empirical research in psychology, is presented. The phenomenological research method Meaning Constitution Analysis (MCA) is discussed. This method is elaborated by Pr. Roger Sages in the University of Lund.

**ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ԽՆԴԻՐՆ ԱՐՏ – ԹԵՐԱՊԻԱՅՈՒՄ .
ՖԵՆՈՍԵՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ**

Բանալի բառեր՝ արտ-թերապիա, մեկնաբանում, ֆենոմենոլոգիական ուղղություն, ուսումնասիրման համալիր մոտեցում:

Ժամանակակից արտ – թերապիան շարունակում է ակտիվորեն զարգանալ: Մեծ տեղ ունի նոր ձևերի ու մոդելների որոնումը, որը թույլ է տալիս ավելի բարձրացնել մեթոդի արդյունավետությունը: Արտ – թերապիայի զարգացումը մեծապես կախված է վերջին ժամանակներում մարդկանց կյանքի, սպասելիքների և պահանջմունքների փոփոխություններից և մեծացող այն պահանջներից, որոնք վերաբերվում են հոգեթերապևտիկ տարբեր մեթոդների գիտական հիմնավորմանը և արդյունքների ստուգմանը:

Արտ – թերապևտիկ խմբերի հետ մեր աշխատանքները հնարավորություն են տալիս տեսնելու մեթոդի հեռանկարները, հարուստ նյութ և նոր գաղափարներ են տալիս քննարկումների համար: Արտ – թերապիան թերապևտիկ մյուս ուղղություններից տարբերվում է մեթոդին հատուկ մի քանի առանձնահատկություններով.

1. Արտ – թերապիան աշխատում է փոխաբերություններով;
2. Արտ – թերապևտիկ աշխատանքը եռակողմ է, թերապևտիկ աշխատանքի լիիրավ անդամներն են արտ – թերապևտը, այցելուն և այցելուի ստեղծագործությունը;
3. Արտ – թերապիան միշտ ռեսուրսային է և ցուցված է բոլորին:

Արտ – թերապիայի շրջանակներում աշխատող մասնագետը հաճախ է բախվում մի կարևոր խնդրի և փորձում է պատասխաններ փնտրել ինչպես պրակտիկայում, այնպես էլ հոգեբանության տեսության մեջ. դա այցելուի աշխատանքների մեկնաբանման խնդիրն է: Եթե այցելուի ստեղծած ցանկացած գործ թերապևտիկ աշխատանքի կարևորագույն մասն է, ապա ինչպես պետք է հասկանալ այն, առավել ևս փորձել մեկնաբանել: Այս հարցը մեթոդի ստեղծման պահից եղել է տարբեր ուղղություններով աշխատող արտ-թերապևտների ուշադրու-

թյան կենտրոնում: Արտ – թերապիայի հիմնադիրները՝ Ա. Հիլը, Մ. Նաումբուրգը, Է. Կրամերը, հոգեվերլուծական ուղղությամբ աշխատելով, հոգեթերապևտիկ հարաբերություններում հենվում էին պացիենտների հենց ստեղծագործական գործունեության վրա: «Էդիթ Կրամերը, երեխաներին կերպարվեստ սովորեցնելով, ընդգծում էր հենց ստեղծագործական գործընթացի ապաքինող բնույթի մասին, առանց այն մեկնաբանելու» [2, 90]: Իհարկե ստեղծագործական աշխատանքն ինքնին շատ թերապևտիկ և բարերար ազդեցություն է ունենում այցելուի վրա, դա լինի նկար, կավով աշխատանք, կոլաժ թե ստեղծագործական նամակ: Բայց արտ- թերապևտը պետք է միայն հետևի՝ այդ աշխատանքին, թե նաև վերլուծի, մեկնաբանի այցելուի ստեղծագործությունը, և արդյոք թերապևտը պետք է մեկնաբանի: Բավականին լուրջ խնդիրներ կարող են առաջանալ, եթե վերլուծողը հիմնականում ղեկավարվի մեկնաբանման միայն մեկ մեթոդով: Է. Կելլիշը գտնում է, որ պետք է գործունեության ցանկացած արդյունքի վերլուծության ժամանակ հաշվի առնել տարբեր գործոններ: Գեղարվեստական ստեղծագործությունը կարող է դիտարկվել որպես արդյունք անհատական, սոցիալական և մշակութային գործոնների փոխազդեցության [1, 20]: Բացի այդ, պատկերի ստեղծման վրա իրենց ազդեցությունն ունեն այցելուի և հոգեթերապևտի հարաբերությունները, այցելուի և գեղարվեստական նյութերի փոխազդեցությունը և այլն: Մեկնաբանման խնդիրն արտ-թերապիայում առանցքային է, մանավանդ որ արտ-թերապևտներն աշխատում են հոգեբանական տարբեր ուղղություններում: Առաջիններից, ով փորձեց օգտագործել որոշակի համակարգ, վերլուծելու այցելուների ստեղծած պատկերները, Էդիթ Կրամերն էր: Նա իր աշխատանքներում ուշադրություն էր դարձնում այցելուի օգտագործած նյութերին, և թե դրանք ինչպես են օգնում մարդուն հասկանալու սեփական ապրումները: Այդ ուսումնասիրություններն իրենց ժամանակին շատ կարևոր էին նոր մեթոդի զարգացման համար: Ջ. Ռուբինը ևս փորձում էր զարգացնել պատկերների սիմվոլիկ նշանակության հասկացումը: Նա առաջիններից մեկն էր, որ մատնացույց արեց մեկնաբանման այն հնարավորության վրա, որն ուղղված է ոչ այնքան պատկերների նշանակության բացահայտմանը, որքան դրանց իմաստների բացահայտմանը: Մ. Նաումբուրգն արդեն նշում էր, որ պետք է այցելուն հնարավորություն ունենա տեսնելու իր ստեղծագործության մեջ իր սեփական իմաստը: Եթե որոշակի դժվարություններ առաջանային, կարելի էր օգ-

տագործել ազատ գուգորդումների մեթոդը, ավելի լավ հասկանալու համար սիմվոլիկ արտահայտչամիջոցները: Նրանք աշխատում և մեկնաբանում էին իրենց այցելուների նկարները հոգեվերլուծության դաշտում: Յուրաքանչյուր պատրաստված արտ-թերապևտ իր մեկնաբանումների մեջ կարող է տալ շատ վալիդ և հիմնավորված ենթադրություններ: Տարբեր մոտեցումներ կան, որոնց մենք կանդրադառնանք և կանգ կառնենք հատկապես ֆենոմենոլոգիական մոտեցման վրա:

Խորքային հոգեբանության մոտեցումը և մեկնաբանման խնդիրը. պատկերների բովանդակությունն արտացոլում է անգիտակցական գործընթացները, և դա պարտադրում է արտ-թերապևտին լավ ուսումնասիրել սիմվոլների ստեղծման մեխանիզմները: Արտ-թերապևտը պետք է իմանա ինչ է պրոյեկցիան, ժխտումը և պաշտպանական այլ մեխանիզմները: Բայց անգամ դրանց իմացությունը երաշխիք չէ, որ արտ-թերապևտը կհասկանա պատկերի ակնհայտ և թաքնված բովանդակությունը: Հեղինակների մեծամասնությունը խոստովանում է (Արիետի, Հոմի), որ դիպուկ և ճիշտ մեկնաբանումներն ավելի շատ նպատակ են, քան՝ արդյունք: Նրանց կարծիքով մեկնաբանումներն ավելի ճշգրիտ կլինեն, եթե վերլուծողը հասկանա այն իրավիճակը, որում ստեղծագործել է մարդը, այլ ոչ թե հետևի իրական պատկերացումներին, նաև մեկնաբանումներում լինի պակաս ավտորիտար և իր սեփական պրոբլեմները չխանգարեն այցելուի ստեղծագործության ընկալմանը: Խորքային հոգեբանության ներկայացուցիչները երկար տարիներ ուսումնասիրում են անգիտակցականը: Ըստ Ջ. Ֆրեյդի, սիմվոլներն արտացոլում են անձի ճնշված ցանկությունները, դրանք դեֆորմացված պահանջմունքներն են: Սիմվոլի հասկացությունն արտ-թերապիայի համար ունի սկզբունքային նշանակություն: Սիմվոլները կամուրջ են հոգեկան կյանքի գիտակցական և անգիտակցական մակարդակների միջև: Օգտագործելով սիմվոլներն իր պատկերներում՝ այցելուն հասնում է այդ մակարդակների ինտեգրացիային, որն էլ թերապևտիկ և ապաքինող ազդեցություն է ունենում մարդու համար: Կ. Յունգի համար սիմվոլները հոգեկան էքսպրեսիայի բնական միջոց են՝ հոգեկանի զարգացման տարբեր փուլերում: Սիմվոլները սերտ կապի մեջ են անհատական և կոլեկտիվ անգիտակցականի դինամիկայի հետ: Այն սիմվոլները, որոնք արտացոլում են կոլեկտիվ անգիտակցականի բովանդակությունը, արքեստիպային սիմվոլներ են: Յունգը գտնում էր, որ սիմվոլները ծառայում են ոչ միայն հոգեկան հավասարակշռության վերականգնմանը,

այլն անձնային աճին: Դրանց միջոցով մարդը կարող է փոխազդեցության մեջ մտնել արգելափակված անգիտակցականի և նրա էներգիայի հետ՝ աստիճանաբար գալով դրանց գիտակցմանն ու հոգեկան ամբողջականությանը:

Հոգեվերլուծությունը կենտրոնացած էր ավելի շատ անգիտակցական մոտիվների վրա, որոնց հիմքում արտամղված և ճնշված ցանկություններն են, յունգյան մոտեցումը, չհերքելով վերը նշածը, ընդունում էր հոգեկանի ինքնաապաքինող հնարավորությունները՝ շեշտը դնելով անգիտակցական նյութի արտացոլման և հետագա ինտեգրացիայի վրա [1, էջ 26]:

Ֆորմալիստական մոտեցման համաձայն վերլուծության ժամանակ պետք է կենտրոնանալ հենց գեղարվեստական ստեղծագործության վրա, ուշադրություն դարձնել նրա ձևերին՝ մասերի հավասարակշռությանը, կրկնվող մոտիվներին, գծերի և ձևերի ուղղվածությանը, որոնք ի վերջո ստեղծում են ամբողջական պատկեր, որը գոյություն ունի անկախ իր ստեղծողից և վերլուծողից [1, էջ 26-27]:

Մեկնաբանման մոտեցումների բազմազանությունն առաջ է բերում մի կարևոր անհրաժեշտություն. արտ-թերապևտների ուշադրության բևեռմանը այցելուների աշխատանքներին, երբ մարդն ինքն է փորձում տեսնել իր ստեղծագործության մեջ որոշակի իմաստ, կապել իր ներաշխարհի և հուզական վիճակների հետ: Այստեղ հետաքրքիր և անգնահատելի է ֆենոմենոլոգիական մոտեցման դիրքորոշումը:

Ֆենոմենոլոգիական ուղղության հիմնադիր Էդմունդ Հուսերը դեռևս 20-րդ դարի սկզբներին կարևորում է սուբյեկտիվ փորձի ուսումնասիրումը: Դա նշանակում է, որ օբյեկտի ընկալման գործընթացում հանդիսատեսը, սուբյեկտն արարում է այդ օբյեկտը՝ նրան վերագրելով որոշակի իմաստ: Եվ Հուսերըն առաջարկում է օգտվել մի մեթոդից, որը զերծ է գնահատականներից և հուզական պրոյեկցիաներից: Ֆենոմենոլոգիական մոտեցումն արտ-թերապիայում կիրառող նշանավոր արտ-թերապևտ Մ. Բետենսկին այսպես է բնորոշում ֆենոմենոլոգիական մոտեցման կարևոր սկզբունքները. «Արտ-թերապիայի սկզբում այցելուները ուղղակի և կոնկրետ ապրում են ստեղծագործական ինքնարտահայտման գործընթացը: Այնուհետև այցելուներն ունենում են որոշակի ապրումներ կապված ֆենոմենի ստեղծման հետ . . . Այցելուներին այստեղ պետք է օգնել, որ նրանք սովորեն նայել և տեսնել այն ամենն, ինչը կարելի է տեսնել սեփական ստեղծագործության մեջ» [3, էջ 17-18]:

Հիշենք, որ ֆենոմենը (բառը հունարեն «հայտնվել» բայից է առաջացել) կարող է ընկալվել և հասկացվել զգացմունքների և մտածողության օգնությամբ: Այստեղից էլ առանձնացնենք ֆենոմենոլոգիական մեթոդի այն հիմնական սկզբունքները, որոնք առանցքային և կարևոր են արտ-թերապևտիկ աշխատանքում, և հատկապես մեկնաբանումների ժամանակ.

- Այցելուն, ով ստեղծագործության ստեղծողն է, թերապևտիկ գործընթացի կենտրոնական օղակն է:
- Հենց նա է իր ստեղծած արդյունքի, ֆենոմենի հետազոտողն ու մեկնաբանողը: Այսինքն իմաստները չեն պարտադրվում արտ-թերապևտի կողմից:
- Այցելուի ստեղծագործական ինքնաարտահայտմանն արտ-թերապևտիայում պետք է անդրադառնալ առանց կանխակալ գնահատականների:

Արտ-թերապևտիայում ֆենոմենոլոգիական մեթոդի կիրառման ժամանակ պետք է ուշադրություն դարձնել ևս մի քանի առանձնահատկությունների, մասնավորապես վերլուծությունների ժամանակ: Արտ-թերապևտին կարևոր տեղեկություն են տալիս այցելուի կողմից ընտրված գեղարվեստական նյութերը՝ յուղամատիտ, գուաշ, ակվարել, որոնց օգտագործումը շատ բան է ասում մարդու ներաշխարհի, ճգնաժամային վիճակների մասին: Այցելուի ստեղծագործական աշխատանքը մի քանի փուլով է ընթանում. նախապատրաստական, անմիջական ապրման փուլը, բուն ստեղծագործական աշխատանքը և ֆենոմենի ստեղծումը, որը ենթադրում է այցելուի կողմից սեփական աշխատանքի դիտում տեսանկյան փոփոխման, գծերի և ձևերի ինտուիտիվ ընկալման, լուռ հայեցողության և խոսքայնացման ճանապարհով: Եվ շատ կարևոր է, որ արտ-թերապևտը լսի ինչպես այցելուի լռությունը, այնպես էլ նրա խոսքը: Ֆենոմենոլոգիական մեթոդով աշխատող արտ-թերապևտի համար առանցքային է դառնալ այն ուղեկցողը, ով հնարավորություն կտա այցելուին նայել և իր ստեղծագործության մեջ տեսնել այն, ինչ միայն ինքը կարող է տեսնել, մեկնաբանել: Այդ ճանապարհն է տանում ինքնաճանաչման: «-Ի՞նչ ես դու՝ տեսնում, դու՝ ստեղծողը», հատկապես այս հարցադրմամբ է տարբերվում ֆենոմենոլոգիական մոտեցումը թերապևտիկ այլ ուղղություններից:

Որքան էլ կարևորում ենք ֆենոմենոլոգիական մոտեցումը, արտ-թերապևտիկ մեր աշխատանքներում կողմնակից ենք մեկնաբանման

ավելի համալիր մոտեցման, և ինչպես այցելուի անձը, նրա մեկնաբանումներն իր իսկ ստեղծածի վերաբերյալ, այնպես էլ հենց բուն ստեղծագործությունը մեր ուշադրության կենտրոնում են գտնվում: Առավել արդյունավետ դիրքորոշում է. վերլուծության և մեկնաբանման ժամանակ լինել առավել ազատ նախնական գնահատականներից, և ազատ որևէ տեսական կողմնորոշումներից: Աշխատանքի նախնական փուլում պետք է զերծ մնալ, հրաժարվել մեկնաբանման «գայթակղությունից», որևէ իմաստ չփնտրելը հնարավորություն է տալիս ավելի լավ ներընկերմվել պատկերի մեջ և կարևորել այցելուի մեկնաբանումները: Այնուհետև պետք է անցնել պատկերի ավելի մանրակրկիտ ուսումնասիրմանը, բայց ոչ մեկնաբանմանը: Այստեղ կարևորվում են այցելուի ստեղծագործությունից ստացած առաջին տպավորությունը, ձևերը, գծերը, ամբողջ պատկերի ուղղությունը, գույների ընտրությունը և իհարկե սիմվոլները: Միմվոլների հետ աշխատանքի հիմնականում երկու ուղղություն կա. մեկն ավելի թերապևտիկ է, դա անձնային սիմվոլների հետ աշխատանքն է: Այստեղ աշխատում ենք հատկապես ֆենոմենոլոգիական մոտեցմամբ: Մյուսը արքետիպային սիմվոլների մակարդակն է, որն ավելի ռեսուրսային է, երբ մարդն ապավինում է իր խորքային ապաքինող հնարավորություններին:

Ներկայումս արտ-թերապիայում օգտագործում են մեկնաբանման տարբեր մոտեցումներ, և վերն արժարժված հարցերը նորանոր քննարկումների և ուսումնասիրությունների դաշտ կարող են ստեղծել հետազոտողների համար:

Գրականություն

1. Арт-терапия в эпоху постмодерна, под ред. А. И. Копытина, СПб, 2002.
2. Арт-терапия, хрестоматия, под ред. А. И. Копытина, СПб, 2001.
3. **Бегенски Мала**, Что ты видишь?, Москва, 2002.

Сюзан Саргсян
Факультет философии и психологии ЕГУ
Доцент кафедры социальной психологии

ПРОБЛЕМА ИНТЕРПРЕТАЦИИ В АРТ-ТЕРАПИИ. ФЕНОМЕНОЛОГИЧЕСКИЙ ПОДХОД

Ключевые слова: *Арт-терапия, множественная интерпретативная стратегия, феноменологический подход.*

Освоение арт-терапевтами стратегии множественной интерпретации является сложной задачей, это все же необходимо. Серьезные проблемы могут возникнуть, если аналитик в большей степени руководствуется каким-то одним методом интерпретации. Открытость позиции при первом восприятии изобразительной работы может быть, в частности, достигнута благодаря использованию феноменологического подхода.

Suzan Sargsyan
Faculty of Philosophy and Psychology, YSU
Associate Professor of the Department of Social Psychology

THE PROBLEM OF INTERPRETATION IN ART THERAPY. PHENOMENOLOGICAL APPROACH

Key words: *Art therapy, multiple interpretive strategy, phenomenological approach.*

Mastering the strategy of multiple interpretations by art therapists is a hard task, but it is still necessary. Serious problems can arise if the analyst uses only one method of interpretation. Opening of the positions at the first perception of the pictorial work can be, in particular, achieved by using a phenomenological approach.

КАЧЕСТВЕННЫЕ МЕТОДЫ ИССЛЕДОВАНИЯ ФЕНОМЕНОЛОГИЧЕСКИХ ОСОБЕННОСТЕЙ ТВОРЧЕСКОЙ ЛИЧНОСТИ НА ПРИМЕРЕ ДЕЯТЕЛЬНОСТИ С.И. ПАРАДЖАНОВА

***Ключевые слова:** феноменология личности, творчество, качественные методы исследования, особенности самосознания.*

Наше исследование посвящено феноменологическим особенностям творческой личности на примере деятельности С.И. Параджанова. В своей работе мы используем качественные методы исследования. Несмотря на свою трудоемкость, нами была выбрана именно эта группа методов, поскольку наряду с высокой степенью разработанности и валидности, качественные методы исследования – область гуманитарного знания, где поднимаются важнейшие вопросы экзистенциального порядка – порядка бытия человека в мире. Они имеют своих последователей в русле философии, социологии и психологии, прежде всего благодаря целостному пониманию личности человека в совокупности ее особенностей и способах их проявления. Именно качественные методы исследования обращают свое внимание на продукт деятельности личности, используя в качестве эмпирической базы различные текстовые и аудиовизуальные документы, основываясь на центральной идее единства сознания и деятельности личности. Согласно точке зрения С.Л. Рубинштейна, то, каким образом и в каком качестве личность предъявляет себя миру является отражением ее основных психологических особенностей, и вместе с тем компетентное, грамотное, бережное исследование данной «самопрезентации» индивида, смысловой составляющей его деятельности, способно описать и раскрыть генеральные характеристики его личности вообще.

Несмотря на разнонаправленность качественных исследований, можно выделить два критерия, согласно которым исследование может называться качественным – это:

1. Специфика качественного анализа и качественных данных;
2. Специфика качественного подхода к исследованию.

Раскроем подробно каждый из них.

1. Процедуры качественного метода анализа активно развиваются, начиная с 70-х годов XX века, все они по сути – различные приемы и методы анализа текста, призванные решить главную задачу исследования – категоризировать данные и установить связи между ними. Существующие

подходы к качественному анализу данных, заключены между двумя полюсами, один из которых – формализованный анализ, основанный на использовании жестких процедур, не предполагающих вариативность не только в ходе проведения исследования, но и в интерпретации полученных данных; другой – интерпритативный – предполагает глубинную вовлеченность исследователя в процесс, его авторское движение в контексте выделяемых категорий и их анализе.

2. Под качественными данными принято понимать любую информацию, полученную исследователем, выраженную не в числовом виде, но в словах. Указывая на тот факт, что, работая с «количеством», мы анализируем числа, в то время как, «качество» позволяет нам более полно описать изучаемый феномен его же словами и в его же контексте. На наш взгляд, грамотно проведенное количественное исследование несет в своей сердцевине зерно качественного метода, а именно, анализ и интерпритацию полученных числовых данных, без которых они, эти данные, представляют собой лишь набор цифр, процентных соотношений и статистических шкал. В то же время, многие объёмные, масштабные исследования тех или иных психологических явлений зачастую строятся как на количественных, так и на качественных методах исследования, где положительные, валидные, значимые результаты зависят от личности и профессионализма самого исследователя в большей мере, нежели чем от особенностей метода исследования.

Здесь мне бы хотелось обратиться к основным принципам нашего исследования, носящего качественный характер.

Строго говоря, в последнее время в связи с возрастающей популярностью качественного метода исследования, рамки его расширились, и сегодня мы можем говорить уже о качественном подходе к психологическому исследованию вообще, выделив несколько основных его принципов. Мы придерживаемся данных принципов, в связи с этим целесообразно раскрыть их главные особенности.

1. Фокус внимания на социальном контексте.

На сегодняшний день в психологии четко утвердилась мысль о том, что фактор социального окружения и социальной ситуации в целом, наряду с биологическими предпосылками и особенностями внутренней позиции индивида, является одним из ключевых факторов развития и бытия личности человека. Сторонники данного принципа исследуют психологические феномены отдельной личности и группы людей с учетом особенностей данного сообщества, языка, особенностей исторического развития, культурных традиций, коммуникативных связей, образа жизни в целом выделяют определенные законы и структуры существования и функциони-

рования данного общества, отраженные, в том числе, в исследуемой личности.

2. Единичный случай, как объект исследования, характеризующийся исключительностью своих феноменологических особенностей, является одним из основных объектов исследования в русле качественного подхода.

3. Индуктивный подход к исследованию, предполагающий сбор, обработку и интерпретацию полученных данных вне каких-либо изначальных, жестко сформулированных идей и гипотез.

4. Отсутствие жесткой стандартизации прежде всего увеличивает степень личностной ответственности исследователя перед за результат собственной работы, так как предполагает не только непосредственно саму процедуру проведения исследования и отработки полученных данных, но и описание и обоснование методов исследования, способов обработки полученной информации, выделения единиц феноменологического анализа, обоснование их валидизации и так далее.

5. Позиционирование исследуемого человека как эксперта.

Исследователи-качественники, придерживающиеся данного принципа, исходят из идеи, согласно которой сам исследуемый человек является экспертом собственной жизни и переживаний, и в известной степени сам является субъектом исследования. Эта идея несколько трансформируется при исследовании выдающихся творческих личностей, чей уровень мастерства на момент проведения исследования является общепризнанных и неоспоримым. Дневниковые записи, письма, публицистические произведения такой личности заключают в себе более подробную, богатую информацию об особенностях его психики и характера, во многом благодаря высокому уровню художественного мастерства создателя.

6. Язык – как отражение основных особенностей личности исследуемого. Текст, дневниковые записи, письма, выступления и иные другие формы речи наиболее аутентично представляют психологическую реальность личности во всем многообразии ее переживаний. Вместе с тем, повседневный язык позволяет более натуралистично и жизненно описать феномен.

7. Центрирование смыслов и переживаний – принцип, основанный на методологии феноменологических исследований, в контексте которой цель исследования заключается в реконструкции структуры переживаний и прояснения личностных смыслов, которые имеют для человека те или иные ситуации, события и аспекты собственной деятельности.

8. Рефлексия исследователя, как одно из основ исследования.

Открытое обращение исследователя к рефлексии своих наблюдений, переживаний, личного опыта, знаний, языка, исследовательской позиции могут быть неотъемлемой частью качественной работы.

Обобщая вышесказанное, мы, вслед за А.М. Улановским, под качественным исследованием понимаем: «Это комплексное исследование, основанное на полевой форме работы, предполагающее сбор подробных описаний, переживаний и смыслов человека, обработку данных с помощью специальных процедур анализа текста, интерпретацию их с учетом социокультурного контекста, отсутствие жесткой стандартизации, внимание к единичным случаям, опору на точку зрения исследуемых людей и рефлексии самого исследователя» [7, с. 131].

Руководствуясь логикой проведения качественного исследования, а также учитывая особенности исследуемой личности во всем многообразии ее характерологических проявлений, в первую очередь нами были сформулированы теоретико-методологические основания нашего исследования. В своей работе мы руководствуемся идеей Л.С. Выготского, согласно которой «личность становится для себя тем, что она есть в себе, через то, что она предъявляет для других» [1], и полагаем, истинная творческая направленность, сформированная на основе особенностей личности в контексте социальных условий – это, прежде всего, потребность быть художником и творцом, становясь личностью и предъявляя себя миру таким образом. Опираясь на идеи Л.С. Выготского, под истинной способностью к самовыражению творческой личности посредством создания подлинных произведений искусства мы понимаем не только прямую передачу собственных чувств и эмоций автора зрителям, но переход на качественно другой универсальный уровень понимания смысла общих явлений, заключенных в произведении зрителями за счет особого способа передачи смыслового содержания созданного произведения автором. Вместе с тем, для нас важны два базовых принципа концепции С.Л. Рубинштейна, а именно, принцип единства деятельности и сознания (о котором мы говорили ранее), и принцип детерминизма. Согласно принципу единства деятельности и сознания: «Деятельность и сознание – не два в разные стороны обращенных аспекта. Они образуют органическое целое – не тождество, но единство» [3, с.21]. Согласно принципу детерминизма: «Внешние условия не прямо и непосредственно определяют конечный результат, а преломляясь через действия внутренних условий».

В своей работе «Психология искусства», Л.С. Выготский [2] рассматривает универсальные эстетические образы, лежащие в основе любого создаваемого художественного произведения. Он отмечает, что искусство само по себе не может носить только познавательную или только эстетическую функции. Истинная же функция искусства заключает в себе единение первого и второго, но единение, перешедшее на более высокий, качественно другой уровень. Передача эмоций зрителям от творца не заключается в трансляции эмоций конкретного человека, но должна являться

олицетворением этой конкретной эмоции на общем уровне. Язык искусства является универсальным, он не может принадлежать конкретному художнику – каждый из них в своем творческом процессе существует в контексте обстоятельств и правил языка, на котором он говорит со зрителями. Эта мысль отражена в словах Жана-Люка Годара: «Я верю в ту идею, что на первом месте стоит творчество художника, а не его личность. Поэтому я думаю, что не мы создаем язык нашего творчества, а язык создает художника. Художник просто всегда находит язык своего творчества. Сергей Параджанов сам является великим произведением кинематографического языка. Язык кино существует сам по себе, а авторы произведений – это лишь его слуги. Параджанов был верным и талантливым слугой этого языка, лучше, чем другие. В храме кино есть изображение, свет и реальность. Параджанов был мастером и хозяином этого храма».

Обобщая вышесказанное, мы в своем исследовании выдвигаем предположение о том, что *истинное произведение искусства не является зеркальным, непосредственно точным отображением психологических особенностей личности творца. Его уникальность и подлинность выстраивается за счет использования художником воспринимаемых психикой эстетических образов, наполненных благодаря таланту творца глубоким смыслом и способных вывести эмоциональные переживания зрителей на качественно другой уровень.*

Для нашего исследования принципиально важен принцип детерминизма, сформулированный С.Л. Рубинштейном, согласно которому «внешние условия не прямо и непосредственно определяют конечный результат, а преломляясь через действия внутренних условий» [4, с.115]. В качестве внешних условий в своей работе мы рассматриваем обстоятельства жизни С.И. Параджанова, а в качестве внутренних – феноменологические особенности творческой личности режиссера, под которыми мы понимаем особенности его позиции. Понимая под позицией избирательное отношение личности к стоящим перед ней целям и задачам, С.Л. Рубинштейн отмечал: «Позиция выражается в его избирательной мобилизованности, готовности к деятельности, направленной на ее осуществление; обуславливает определенную линию поведения, и сама обуславливается ею <...> без сознания, без способности сознательно занять определенную позицию нет личности» [4, с. 28]. Одним из ключевых аспектов теории С.Л. Рубинштейна является понимание личности как субъекта жизни – активного преобразователя действительности посредством собственной деятельности. Этот процесс преобразования связан непосредственно с онтогенезом личности: «по мере того как человек приобретает жизненный опыт, перед ним не только открываются все новые стороны бытия, но и происходит более или менее глубокое переосмысление жизни». Процесс активного преобразования действи-

тельности был необходимой для С.И. Параджанова частью бытия его личности. Он трансформировал действительность не только на киноэкране или полотне, но и в своей обыденной жизни. Эта активная позиция с точки зрения внутренней психической работы и степени осознанного проявления творческого потенциала.

Основываясь на особенностях жизненного пути С.И. Параджанова, в качестве общего хронологического принципа построения анализа биографии режиссера мы сознательно отказываемся от жесткой возрастной периодизации этапов развития индивида. В своей работе мы руководствуемся идеей С.Л. Рубинштейна понимания человека как субъекта, проявляющегося в отношениях с другими людьми и с миром. Жизненный путь в данном контексте понимается не только как сумма жизненных событий, отдельных действий, продуктов творчества, а как целостное, непрерывное явление. Человек обладает собственной личностной историей, с одной стороны, создавая ее самостоятельность, и в то же время его развитие как личности детерминировано ее наличием. Важными моментами жизни человека становятся для ученого так называемые «поворотные этапы» жизни, поскольку «показывают» историю формирования личности, становление собственно человека. Эти поворотные этапы Рубинштейн называет «событиями»: «В ходе этой индивидуальной истории (истории жизни) бывают и свои «события» – узловые моменты и поворотные этапы жизненного пути индивида, когда с принятием того или иного решения на более или менее длительный период определяется дальнейший жизненный путь человека». Человек (или субъект жизни) для С.Л. Рубинштейна – это высший уровень развития бытия, а также центр реорганизации бытия. Сущность бытия человека – это свобода и человечность отношений к другому человеку. Определив теоретико-методологическую базу исследования, мы переходим к описанию и обоснованию выбранной нами стратегии или типа исследования.

При выборе стратегии исследования мы, руководствуясь основными целями и задачами, а также учитывая специфику выбранной нами эмпирической стратегии, обращаем свое внимание на биографическое исследование. Данный тип исследования ориентирован на изучение жизненного пути личности. Мы обращаем внимание не только на воссоздание исторической канвы жизни С.И. Параджанова, но и на описание и изучение личностных смыслов режиссера, отраженных в его работах. Переходя к описанию понятийного аппарата биографического метода, мы можем выделить следующие категории, придерживаясь точки зрения Б.Г. Ананьева.

- Событие. Согласно биографическому методу, событие понимается как факт, имеющий судьбоносные последствия для дальнейшего хо-

да жизни, способствующее определенным изменениям в системе внутреннего мира личности и ее социального поведения.

- **Обстоятельства жизни** – внешние условия бытия личности, включающие в себя экономические, политические, юридические, морально-нравственные и т.д.
- **Среда развития** можно разделить на макро- и микросреду. Под макросредой понимается современное человеческое общество, а под микро- – совокупность обстоятельств, непосредственно окружающих человека.
- **Собственную среду развития** человек создает сам, согласно своим предпочтениям, вкусам и привязанностям. Создавая данное пространство, человек определяет условия собственного развития и сам управляет ими, определяя его результат.
- **Социальная ситуация развития** – внешний контекст обстоятельств, то отношение, которое они имеют к личности и те отношения, в которые личность вступает с ними в данный возрастной период.
- **Образ жизни** – устоявшаяся форма существования человека, включающая в себя особенности общения, поведения и деятельности в профессиональной сфере, общественной деятельности и т.д.

Для изучения феноменологических особенностей творческой личности человека в рамках психобиографического метода, мы анализируем:

I. Свидетельства о себе (автобиографические источники).

- **Письма.** В нашем исследовании подвергаются анализу порядка ста девяносто писем, написанных С.И. Параджановым из мест отбывания наказания семье, близким, друзьям и коллегам. Письма классифицированы и разбиты на отдельные эпизоды. Выделены приоритетные темы и адресаты. Подсчитано количество упоминаний той или иной «темь» в письмах, общее количество упоминаний «тем» внутри отдельного письма, учитывалась взаимосвязь отдельных «тем» друг с другом.

В своей работе мы сознательно избегаем приверженности какой-либо отдельной методики анализа письменных свидетельств, поскольку нашей задачей на данном этапе является реконструкция личностных переживаний автора, его понимания себя и сложившейся ситуации, то каким образом протекал процесс переживания данного этапа жизни. Исходя из особенностей изложения, мы учитываем не только текстовое содержание писем, но и изобразительный материал, находящийся в них.

- **Автобиография.** В качестве автобиографического источника информации нами был выбран сценарий фильма «Исповедь», написанный С.И. Параджановым в 1969 году, где автобиография выступает в особой художественной форме, что в некоторой степени осложняет ее анализ. Однако так как характер анализируемого материала, его структура и содер-

жание зависят не только от объективных фактов жизни человека ее составляющего, но и от психологических особенностей его личности, и формы данного автобиографического источника, то исследовательское значение также имеет и то, в каких обстоятельствах жизни он был написан.

• В качестве биографического интервью в своей работе мы исследуем документальный фильм «Parajanov: A Requiem» [6] и другие документальные картины, в которых максимально сохранена прямая речь режиссера Сергея Параджанова.

II. Продукты деятельности, произведения и т.д. На данном этапе исследования мы рассматриваем основные художественные произведения С.И. Параджанова [5] – кинофильмы, снятые в период с 1954 по 1988 годы, сценарии и сценарные заявки. Исходя из специфики произведений автора, нами было принято решение рассмотреть не только типологию основных персонажей, но выделить, классифицировать и описать основные образы, фигурирующие в материале. Это связано прежде всего с авторским стилем С.И. Параджанова.

III. Официальные документы о личности С.И. Параджанова позволяют нам сформировать хронологическую канву исследования. К таким документам относятся: свидетельство о рождении, документы о среднем и высшем образовании, копия обвинительного приговора и другие. На наш взгляд, одним из основных таких свидетельств является текст выступления С.И. Параджанова от 01.12.1971 перед творческой и научной молодежью г. Минска, которое состоялось по случаю показа фильма «Цвет граната».

IV. Свидетельства семьи, близких, друзей и знакомых изучаемого человека. Здесь анализу подвергаются имеющиеся свидетельства близких, коллег и друзей С.И. Параджанова.

В заключение нам бы хотелось подчеркнуть следующее: качественные методы исследования в психологии – одни из самых трудоемких, требующих от специалиста не только высокого уровня профессиональных знаний, но и определенного целостного понимания человека и его места в мире. Использование данных методов в работе позволяет в полной мере рассмотреть феноменологические особенности личности С.И. Параджанова благодаря высокой степени валидности и наличия в основе данного подхода целостного методологического фундамента, строящегося в данном случае на основных постулатах экзистенциального подхода.

Լիտերատուրա

1. **Выготский Л. С.**, История развития высших психических функций // Собр. Соч.: В 6 т., т. 3. Проблема развития психики. – М., 1983. – С. 144.
2. **Выготский Л. С.**, Психология искусства. – М.: Лабиринт, 2008.
3. **Рубинштейн С. Л.**, Основы общей психологии. – СПб.: Питер, 2011.
4. **Рубинштейн С. Л.**, Человек и мир. – М.: Наука, 1997.
5. **Параджанов С. И.**, Исповедь. – СПб.: Азбука, 2001.
6. **Рон Холлоуэй. Paradjanov: A Requiem.** Документальный фильм. – США, ФРГ, 1994. – 57 минут.
7. **Улановский А. Н.**, История и векторы развития качественных методов в психологии // Методология и история психологии. - № 3 (2). – 2008. – с. 129-139.

Վերոնիկա Շուրավևա

Մոսկվայի պետական մանկավարժական համալսարան
Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

ՄՏԵԴՍԿՈՐԸ ԱՆԸՒ ՖԵՆՈՄԵՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՆՁԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ Ս.Ի. ՓԱՐԱՋԱՆՈՎԻ
ԳՈՐՏԵՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ

Բանալի բաներ՝ անձի ֆենոմենոլոգիա, ստեղծագործական գործնեություն, ուսումնասիրության որակական մեթոդներ, ինքնագիտակցության առանձնահատկություններ:

Հոդվածում քննարկվում է ստեղծագործ անձի ֆենոմենոլոգիական առանձնահատկությունների հոգեբանական ուսումնասիրության որակական մեթոդները՝ Ս.Ի. Փարաջանովի գործնեության օրինակով: Հեղինակը ներկայացնում է ստեղծագործ անձի ֆենոմենոլոգիայի հետազոտության մեթոդների բազմակողմ ուսումնասիրություն:

Veronika Zhuravleva

Moscow State Pedagogical University
Russian-Armenian (Slavonic) University

QUALITATIVE RESEARCH METHODS OF PHENOMENOLOGICAL
CHARACTERISTICS OF THE CREATIVE PERSON ON THE EXAMPLE OF SERGEY
PARAJANOV

Key words: phenomenology of personality, creation, qualitative research methods, particularities of self-consciousness.

The report describes a study of the phenomenological characteristics of the creative person on the example of S. Parajanov in the context of a qualitative approach in psychology. The author provides a detailed study of research methods of phenomenology of the creative personality.

Դավիթ Գևորգյան
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
սոցիալական հոգեբանության ամբիոնի ասիստենտ
davgev@gmail.com

**ՄՏԱՄԲՈՒՆՑԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ, ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԽԱՉՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ**

Բանալի բառեր՝ հոգեբանական փորձաքննություն, Ստամբուլյան արձանագրություն, խոշտանգում, փաստաթղթավարում, հոգեբանական ապացույց:

Ինչպես հայտնի է, կիրառական գիտության զարգացման ժամանակակից միտումներից է դրա միջառարկայական և միջմեթոդաբանական ուղղվածությունը, ինչն արտացոլում է, մի կողմից, տեսական գիտելիքի և կյանքի գործնական խնդիրների մերձեցման անհրաժեշտությունը, մյուս կողմից՝ առանձին գիտական համակարգերի հայեցակարգային և մեթոդաբանական հագեցվածությունը և սեփական նախանշած սահմանների անբավարարությունը: Դրոված այդ անհրաժեշտությունից՝ գնալով բազմազան են դառնում գիտության միջդիսցիպլինար կիրառական ճյուղավորումները, որոնք կոչված են լուծելու մարդկության առջև ծառայած գործնական կոնկրետ խնդիրները, որոնց հասկացումն ու լուծումը որևիցե մեկ առանձին գիտական համակարգում այլևս բավարար չէ:

Գիտության նման միջդիսցիպլինար ոլորտի ակնառու օրինակներից է դատահոգեբանական փորձաքննությունը, որը հանդիսանալով իրավաբանական հոգեբանության կիրառական ճյուղավորում, միևնույն ժամանակ «սնվում» է կլինիկական հոգեբանությունից, իրավաբանությունից, հոգեբուժությունից, հոգեախտորոշումից:

Ինչպես հայտնի է, դատահոգեբանական փորձաքննությունը հետազոտություն է, որն իրականացվում է հոգեբանության ոլորտում հատուկ գիտելիքների տիրապետող փորձագետի կողմից և որն ուղղված է դատական գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ եզրակացության ստացմանը [3]: Հետևապես, փորձաքննության նշանակությունը կայանում է նրանում, որ այն հաճախ գործի հանգամանքների պարզաբանման արդյունավետ միջոց է և

թույլ է տալիս հետաքննության և դատական քննության ընթացքում կիրառել ժամանակակից գիտական-հոգեբանական մեթոդների ողջ տեսականին:

Փորձաքննության առջև դրվող խնդիրները բավականին լայն են, բայց և միևնույն ժամանակ՝ սպեցիֆիկ: Դրանք վերաբերում են ինչպես անձի կոնստիտուցիոնալ, ստատիկ առանձնահատկությունների բացահայտմանը՝ անձնային գծեր, մտածողության և ինտելեկտի ցուցանիշներ և այլն, այնպես էլ տարատեսակ հոգեվիճակների մանրակրկիտ ախտորոշմանը՝ աֆեկտ, հուզվածության աստիճան, տագնապ, վախ և այլն: Մա ենթադրում է փորձագիտական հստակ մեթոդաբանություն, որը հաշվի կառնի հետազոտվող երևույթի առանձնահատկությունները, ինչպես նաև ամբողջ շարք հարակից գործոններ՝ մշակութային և սոցիալական յուրահատկությունները, հոգեվիճակի միջնորդավորված խթանները, փորձաքննության իրադրային ազդեցությունները, դեպքի վերապրման օրինաչափությունները, ժամանակի գործոնով պայմանավորված տեղեկատվության աղճատումները, նպատակային կամ օրինաչափ խեղաթյուրումները և այլն: Ակնհայտ է, որ գործոնների նման բազմատարր և նուրբ սպեկտրի առկայությունը մեծ պահանջներ է դնում փորձագիտական մեթոդաբանության առջև, որը չի կարող սահմանափակվել լոկ մեկ կամ երկու մեթոդների կիրառմամբ, այլ իրենից ներկայացնում է տարատեսակ հետազոտական մեթոդների բարդ համալիր, որի որոշումը ելնում է տվյալ փորձագիտական խնդրի տեսակից:

Հոգեբանական փորձաքննության ոլորտի ժամանակակից զարգացումները ուղղորդվում են երկու շարք գործոններով: Մի կողմից, հոգեբանական, նյարդաբանական, բժշկական գիտության և մեթոդաբանության զարգացումը ուղիղ ազդեցություն ունի փորձագիտության կողմից լուծվող խնդիրների շրջանակի լայնացման վրա: Մյուս կողմից, մարդու իրավունքների և ազատությունների կարևորման, քաղաքացիական հասարակության ձևավորման ու զարգացման ներկայիս ինտենսիվ միտումները նոր պահանջներ են դնում իրավագիտության և իրավաբանական հոգեբանության առջև, մասնավորապես՝ ստիպելով վերանայել որոշակի հոգեբանական երևույթների և վիճակների նշանակության աստիճանը իրադրության, հնարավոր հանցագործության կամ անձի փաստացի վարքի իրավական գնահատման գործում:

Նշված մեթոդաբանական և ժամանակակից գիտական ու հասարակական պահանջներին բավարարող, ինչպես նաև մշակված լուրջ միջմեթոդական հենք ունեցող փորձագիտական գործիքներից է Ստամբուլյան արձանագրությունը, որը 1999 թվականին ՄԱԿ-ի պաշտոնական փաստաթուղթ դարձած խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արդյունավետ քննության իրականացման և փաստաթղթավորման մասին ուղեցույց է:

Ստամբուլյան արձանագրությունը հանդիսանում է եռամյա ուսումնասիրության, վերլուծության և նախագծման արդյունք, որն իրականացվել է ավելի քան 75 դատաբժիշկների, բժիշկների, հոգեբանների, մարդու իրավունքների ոլորտի դիտորդների և իրավաբանների կողմից, ովքեր հանդիսանում են 15 երկրների 40 կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Խոշտանգումների և դաժան վերաբերմունքի բժշկական փաստաթղթագրումը կարևոր է դատական վարույթում, մարդու իրավունքների ուսումնասիրությունների և մշտադիտարկման, ինչպես նաև խոշտանգումների գոհերի վերականգնողական աշխատանքների ամբողջ գործընթացում: Խոշտանգումների և դաժան վերաբերմունքի փաստերի բժշկական եզրակացությունները ներառում են մանրակրկիտ կլինիկական գնահատական անհատի ֆիզիկական և/կամ հոգեբանական առողջության մասին: Ստամբուլյան արձանագրությունը նախատեսված է ծառայելու որպես միջազգային ուղեցույց, որն օգտագործվում է խոշտանգումների և դաժան վերաբերմունքի ենթարկված լինելու փաստը պնդող անձանց գնահատման, ենթադրյալ խոշտանգումների դեպքերի քննության համար, որոնք ներկայացվում են դատական և քննչական մարմիններ, իսկ փաստագրման արդյունքները դատարանում ծառայում են որպես վավեր ապացույց [2]:

Ինչպես սահմանվում է 1984 թվականի Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայում. «Խոշտանգում նշանակում է ցանկացած գործողություն, որի միջոցով պետական պաշտոնյա անձը կամ պաշտոնապես հանդես եկող այլ մարդ, կամ նրանց հրահրմամբ և գիտությամբ կամ լռելյայն համաձայնությամբ, որևէ անձի մտածված կերպով հասցնում է ուժեղ ցավ կամ տառապանք՝ մարմնական կամ մտավոր, նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, իր կամ երրորդ անձի կատարած հանցանքի կամ այն գործած

լինելու մեջ կասկածելու համար, ինչպես նաև նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ամեն մի այլ պատճառով: Այս բնորոշման մեջ չեն մտնում այն ցավն ու տառապանքը, որոնք ծագում են սոսկ օրինական սանկցիաների պատճառով, անբաժանելի են այդ սանկցիաներից կամ ծագել են դրանցից՝ պատահականորեն» [1]:

Վերջին երկու տասնամյակներում շատ բան է բացահայտվել խոշտանգման և դրա հետևանքների մասին, բայց փաստաթղթավորման որևէ միջազգային ուղեցույց հասանելի չի եղել նախքան Ստամբուլյան արձանագրության մշակումը: Վերջինիս նպատակն է ծառայել որպես միջազգային ուղեցույց՝ խոշտանգման ու վատ վերաբերմունքի մասին հայտնող անձանց մատով գնահատական տալու, խոշտանգման ենթադրյալ դեպքերը հետազոտելու, ինչպես նաև համապատասխան եզրահանգումները դատական իշխանությանը կամ գործի քննություն իրականացնող որևէ այլ մարմին ներկայացնելու համար [2]:

Ստամբուլյան արձանագրության անգերազնահատելի յուրահատկությունը կայանում է նրանում, որ դրանում արծարծվող խոշտանգման և անմարդկային վերաբերմունքի հնարավոր դեպքերի քննության, իրավական գնահատականի և բժշկական ապացույցների մանրակրկիտ նկարագրության հետ մեկտեղ առանձին կարևորությամբ ներկայացված են հոգեբանական ապացույցների առանձնահատկությունները, դրանց բացահայտման եղանակները և տուժողի հոգեբանական փորձաքննության ընթացակարգը:

Հանդիսանալով գերազանցապես որպես դեպքի փաստաթղթավարման ուղեցույց, Ստամբուլյան արձանագրությունը հստակորեն հենվում է գիտության՝ բժշկություն, կլինիկական հոգեբանություն, իրավագիտություն, արդի հասկացումների վրա: Մասնավորապես, խոշտանգման հոգեբանական հետևանքների բաժնում առանձնացվում են դրանց երկարաժամկետ տեսակները՝ հետորավմատիկ սթրես խանգարումը, սուր սթրեսային խանգարումները, տագնապային և դեպրեսիվ խանգարումները, ինչը գործի քննության համար ունի բացառիկ կարևորություն, քանզի տարբեր պատճառների արդյունքում հաճախ խոշտանգման բժշկական հետևանքները անհնար է արձանագրել, իսկ հոգեբանական ապացույցները դառնում են առաջնային: Ընդ որում, տրավմայի ապրման հարցում մշտապես նշանակալից դեր են խաղում ինչպես անձնային-անհատական, այնպես էլ՝ սոցիալ-մշակութային

գործոնները, ինչի հաշվի առնումը նույնպես հանդիսանում է Մտամբույան արձանագրության պահանջ:

Խոշտանգման ենթարկված լինելու հոգեբանական բնույթի ապացույցների վերաբերյալ կլինիկական եզրակացություն կազմելիս հարկավոր է պատասխանել հետևյալ կարևոր հարցերին.

1. Արդյոք հոգեբանական ախտանիշները համապատասխանում են ենթադրյալ խոշտանգման մասին հայտարարությանը:
2. Արդյոք հոգեբանական հետազոտության արդյունքները տվյալ անձի մշակութային և սոցիալական միջավայրի համատեքստում ծայրահեղ սթրեսի նկատմամբ սպասված կամ սովորական ռեակցիաներ են:
3. Հաշվի առնելով ժամանակի ընթացքում տրավմայի հետ կապված հոգեկան խանգարումների տատանողական բնույթը՝ որքա՞ն ժամանակ է անցել խոշտանգման դեպքից: Անձը վերականգնման ո՞ր փուլում է գտնվում:
4. Անձի վրա զուգահեռաբար ի՞նչ սթրեսային գործոններ են ազդում (օրինակ՝ շարունակվող հալածանք, հարկադիր միգրացիա, աքսոր, ընտանիքի և սոցիալական դերի կորուստ): Այս խնդիրներն անձի վրա ի՞նչ ազդեցություն են ունենում:
5. Կլինիկական պատկերի վրա ի՞նչ ֆիզիկական պայմաններ են ազդում:
6. Արդյոք կլինիկական պատկերից բխում է, որ խոշտանգման վերաբերյալ պնդումները սխալ են [2]:

Ինչպես երևում է հարցադրումների բնույթից, հոգեբանական փորձաքննություն պետք է պատասխանի հնարավոր խոշտանգման հոգեբանական հետևանքների լայն սպեկտրի հարցերին և ի վերջո գնահատի հոգեբանական ախտանիշների և ենթադրվող խոշտանգման վերաբերյալ հայտարարության համապատասխանության աստիճանը, այսինքն ուղղակիորեն ազդի դեպքի իրավական գնահատականի վրա: Այս նպատակին հասնելու համար բավարար չէ լոկ հոգեվիճակի բացահայտումը. անհրաժեշտ է իրականացնել բազմակողմանի վերլուծություն՝ հիմնվելով հետազոտվողի մանրակրկիտ անամնեզի, դեպքի հանգամանքների, տրավմատիզացիայի քողարկված նշանների, հետազոտվողի անձնային առանձնահատկությունների, մշակութային և սոցիալական յուրահատկությունների վրա: Մտամբույան արձանագրությունը առաջարկում է վերոնշյալ տեղեկատվության հավաքի և վերլու-

ծության հստակ կառուցվածք, ինչպես նաև շեշտադրում է փորձաքննության իրականացման անհրաժեշտ պայմանները, էթիկական սկզբունքները և նախընտրելի մեթոդաբանությունը:

Մասնավորապես, Մտամբուլյան արձանագրությունը հնարավոր խոշտանգման հոգեբանական ապացույցների փաստաթղթավարման համար առաջարկում է հետևյալ կառուցվածքային բաղադրիչները [2]:

1. **Խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքի անամնեզը**՝ հարցազրույցը պետք է սկսվի դեպքերի ամփոփ ներկայացմամբ՝ նախքան խոշտանգման դեպքի մանրամասներին անցնելը: Այնուհետև իրականացվում է կատարվածի մանրակրկիտ հարցում, ինչը ինքնին դժվար փորձություն է հետազոտվողի համար: Ըստ այդմ, հարցման գործընթացը իրականացվում է պահպանելով հոգեբանական խորհրդատվության գլխավոր կանոնները՝ էմպաթիա, ապահով միջավայրի կառուցում, զգայուն կետերի զգուշավոր անդրադարձ և այլն:

2. **Հոգեբանական բնույթի ընթացիկ գանգատները**՝ այս գնահատումը փորձաքննության հիմնական մասն է կազմում: Հարկավոր է տալ որոշակի հարցեր՝ հետտրավմատիկ սթրեսային խանգարման երեք կատեգորիաների մասին (տրավմատիկ դեպքի վերապրում, խուսափողականություն կամ արձագանքելու ունակության բթացում, այդ թվում՝ հիշողության մասնակի կորուստ, և բարձր գրգռվածություն): Պետք է մանրամասն նկարագրել աֆեկտիվ, ճանաչողական և վարքային ախտանիշները, ինչպես նաև նշել մղձավանջների, հալյուցինացիաների և վախի ռեակցիաների հաճախականությունն ու դրանց օրինակները:

3. **Խոշտանգմանը հաջորդող ժամանակահատվածի անամնեզը**՝ փորձաքննության այս տեղեկություններն ստացվում են կյանքի ընթացիկ հանգամանքների, ներկա պահին սթրեսի աղբյուրների, աշխատունակության, ապրուստ վաստակելու, ընտանիքի մասին հոգալու հնարավորության և հասարակության կողմից աջակցության առկայության վերաբերյալ:

4. **Խոշտանգմանը նախորդող ժամանակահատվածի անամնեզը**՝ զոհի մանկության, դեռահասության շրջանի, վաղ չափահաս տարիքի, ընտանեկան ծագման, ընտանիքում բացահայտված հիվանդությունների և ընտանիքի կազմի, նախկինում ստացած բոլոր տրավմաների նկարագրությունն է: Խոշտանգմանը նախորդող ժամանակահատվածի անամնեզի նկարագրությունը կարևոր է՝ հետազոտվողի՝ տրավմատիկ

դեպքից առաջ հոգեկան առողջության վիճակի և հոգեւոյժիւլակկան ֆունկցիաների գնահատման համար:

5. **Առողջության անամնեզը, հոգեբուժական անամնեզը, ալկոհոլի և թմրանյութերի օգտագործման և չարաշահման դեպքերի անամնեզը** ներառում է բժշկական տվյալների նկարագրություն:

6. **Հոգեկան վիճակի հետազոտությունը**՝ հոգեբանական փորձաքննության հաշվետւոյթան մեջ պետք է ներառել փորձաքննության ժամանակ հետազոտւոլողի հոգեկան վիճակի բոլոր բաղադրիչների նկարագրությունը. ընդհանուր արտաքին տեսքը, շարժումները, խոսքը, տրամադրոյթունը և աֆեկտը, մտքերի բովանդակոյթունը, մտածողոյթոյթան գործընթացը, ճանաչողական ֆունկցիաների ցուցանիշները և այլն:

7. **Սոցիալական ֆունկցիայի գնահատումը**՝ գնահատւոլում է անձի ֆունկցիոնալոյթոյթոյթան ներկա մակարդակը՝ առօրյա գործողոյթոյթունների, սոցիալական դերի, հասարակական ու ժամանցային զբաղւոլունքների և սեփական առողջական վիճակի ընկալման մասին հարցեր տալոլով:

8. **Հոգեբանական թեստաւոլորումը և հարցարանների կիրառումը**՝ հոգեախտորոշիչ մեթոդիկաների միջոցոլով ստացւոլած տվյալների ներկայացում և մեկնաբանում:

9. **Կլինիկական եզրակացոյթոյթունը**՝ ողջ վերոնշյալ տեղեկատւոլոյթոյթան համապարփակ վերլոլումոյթոյթան ու մեկնաբանման միջոցոլով փորձաքննոյթոյթան առջև դրւոլած հարցերի պատասխանն է:

10. **Առաջարկոյթոյթունները**՝ առաջարկոյթոյթունները կարող են լինել լրացուցիչ հետազոտոյթոյթուններ անցկացնելու մասին, ինչպես, օրինակ՝ նյարդահոգեբանական թեստաւոլորում, թերապևտիկ կամ հոգեբուժական բուժման կամ անվտանգոյթոյթան, կամ ապաստանի անհրաժեշտոյթոյթան գնահատում [2]:

Ինչպես երևում է, Մտամբուլյան արձանագրոյթոյթունը լուրջ պահանջներ է ներկայացնում փորձագետին՝ իրականացնելու բազմակողմանի կլինիկական հետազոտոյթոյթուն ինչպես տեղի ունեցած դեպքի, այնպես էլ հետազոտւոլողի կյանքի լայն համատեքստում, քանի որ խոշտանգումների հոգեբանական ապացոյցների հասկացումը բխում է տրաւոլմատիզացիայի ժամանակակից կլինիկական պատկերացումներից և հանդիսանում է որպես վալեր ապացոյց դատարանում՝ նույնիսկ բժշկական ապացոյցների բացակայոյթոյթան պարագայում: Այս հանգամանքը էականորեն փոխում է քննոյթոյթուն իրականացնող մար-

մինների և դատարանի թերագնահատող վերաբերմունքը հոգեբանական փորձաքննության նկատմամբ, որը համակցվելով գրագետ իրականացված բժշկաիրավական փաստաթղթավարման հետ վերածվում է խոշտանգման և անմարդկային վերաբերմունքի հետաքննության գործում բացառիկ նշանակության և գիտականորեն հիմնավորված ապացուցողական մեխանիզմի: Այս իմաստով Ստամբուլյան արձանագրությունը գիտությունների խաչման ակնառու օրինակ է՝ ուղղված կոնկրետ դատաիրավական խնդիրների լուծմանը, ընդ որում հոգեբանությունը բժշկության հետ համատեղ ստանձնում է գերակայող դիսցիպլինի դերը:

Գրականություն

1. «Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ կոնվենցիա», ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1984 թ. դեկտեմբերի 10-ի 39/46 բանաձևով:<http://www.parliament.am/library/MAKkonvencianer/9.pdf>
2. «Ստամբուլյան արձանագրություն: Ձեռնարկ բժիշկների, հոգեբույժների և իրավաբանների համար», Եր., 2015 թ.:
3. **Нараев В. В.**, «Основы судебно-психологической экспертизы». Учеб. пособие для вузов. – М., 2000.

Давид Геворгян

Факультет философии и психологии ЕГУ
Ассистент кафедры социальной психологии

СТАМБУЛЬСКИЙ ПРОТОКОЛ КАК ПРАКТИЧЕСКИЙ ПРИМЕР ПЕРЕСЕЧЕНИЯ ПСИХОЛОГИИ, МЕДИЦИНЫ И ЮРИСПРУДЕНЦИИ

Ключевые слова: психологическая экспертиза, Стамбульский протокол, пытка, документирование, психологическое доказательство.

Статья посвящена обсуждению Стамбульского протокола как современного примера практического взаимодействия различных научных дисциплин – юриспруденции, медицины и психологии. Протокол ориентирован на решение судебно-следственных задач в области корректного сбора медицинских и психологических доказательств пыток и других способов нечеловеческого обращения, а также правильного документирования их последствий. Протокол на высоком научном уровне структурирует процесс психологической экспертизы возможной жертвы пыток, а также позволяет на основании детального научного анализа определить степень соответствия психологических показателей/симптомов с об-

тоятельствами предполагаемых пыток, тем самым, напрямую воздействовать на правовую оценку дела.

Davit Gevorgyan
Faculty of Philosophy and Psychology, YSU
Assistant of the Department of Social Psychology

**ISTANBUL PROTOCOL AS A PRACTICAL EXAMPLE OF THE INTERSECTION OF
PSYCHOLOGY, MEDICINE AND LAW**

Key words: *psychological expertise, Istanbul Protocol, torture, documentation, psychological evidence.*

The article is devoted to the discussion of the Istanbul Protocol as a modern example of practical cooperation between various scientific disciplines - law, medicine and psychology. The protocol is aimed at addressing the law enforcement tasks in the correct collection of medical and psychological evidence of torture and other inhuman treatment and proper documentation of their consequences. The protocol structures the process of psychological evaluation of possible victims of torture on the high scientific level and allows on the basis of detailed scientific analysis to determine the extent of correspondence of psychological indicators / symptoms with the circumstances of the alleged torture, thereby directly affect the legal assessment of the case.

Նեյի Հարոյան

*ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
սոցիալական հոգեբանության ամբիոնի դոցենտ, հ.գ.թ.
n.haroyan@mail.ru*

**ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻՈՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹՅԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹՅԱՆԵՐԻ ՎՐԱ
ՈՐՊԵՍ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑ**

*Բանալի բառեր՝ տեղեկատվական հասարակություն, հոգևոր կյանքը,
մանիպուլյատիվ ազդեցությունները:*

Տեղեկատվական հասարակության ձևավորումով վերաարժևորվում են ավանդական կողմնորոշիչներն ու արժեքները, փոխվում են մարդկային կեցության ամբողջականության, ճշմարտության ըմբռնումը, ձևափոխվում են արժեքային կողմնորոշումները: Այդ ամենը նկատելիորեն արտացոլվում են սոցիոմշակութային գործընթացներում: Մասնավորապես, անհնար է մերժել տեղեկատվական հասարակությունում առաջացող այն միտումները, որոնք խարխլում են հումանիստական արժեքները:

Հաճախ չկառավարվող հսկայական քանակի ձայնային, հեռուստատեսային և համակարգչային տեղեկատվական հեղեղը տարածվում է զանազան մշակութային միջոցներով և տեղետարափի նման թափվում է հասարակական գիտակցության վրա և հնարավոր չի լինում հասկանալ, զատել կարևորը՝ անկարևորից, էականը՝ երկրորդականից, որը առաջ է բերում սոցիալական անտարբերություն (ապատիա):

Տեղեկատվական այդ հեղեղը իր քառասականության, անընդհատության և անվերջության պատճառով անհնար է դարձնում տեղեկությունների հանգամանակից վերլուծությունը: Նման միտումները քայքայում են մշակույթի ամբողջականությունը (բարոյական, գեղագիտական ընկալումները, վարքային դիրքորոշումները) և հանգեցնում, մասնավորապես, այնպիսի սոցիոմշակութային երևույթի, ինչպիսին է «նեոտրայբալիզմը» (գլոբալային ցեղ): Վիրտուալ իրականության մեջ հայտնված մարդիկ գրկվելով նույնականությունից և կորցնելով մշակութային ինքնատիպությունը վերածվում են յուրահատուկ ամենակուլ, անդեմ զանգված-հասարակության: Նման գլոբալ փոփոխությունների պայմաններում ձևավորվում են մտածողության և գործունեության նոր ուղ-

դություններ, մասնավորապես մեծանում է սոցիումի կազմակերպման վրա մանիպուլյացիոն ազդեցությունների դերը [2]:

Ի դեպ, հասարակության կյանքում և մշակույթի մեջ մանիպուլյատիվ ազդեցությունները ակտիվանում են անցումային դարաշրջաններում, երբ տեղի է ունենում աշխարհայացքային ելակետային կողմնորոշիչների փոփոխություն, երբ հասարակության մեջ մեծանում է անվստահությունը վաղվա օրվա նկատմամբ, ապագան դառնում է անորոշ:

Ինչպես իրավացիորեն նշում է Դ. Վ. Կոնիշևսկին. «Մանիպուլյատիվ միջոցների կիրառումով ձեռք է բերվում սոցիումալիզմի նույնակերպության թվացողություն, ժամանակի հետ համաքայլ ընթանալու զգացողություն: Մանիպուլյատիվ սիմվոլները լցնում են սոցիումալիզմի իմաստների դուրս մղման հետևանքով առաջացած դատարկությունը և հող են պատրաստում նոր մշակութային կազմավորումների, միտումների և կարծրատիպերի ձևավորման համար» [3, էջ 3]:

Ժամանակակից զանգվածային հաղորդակցման միջոցների բացասական ազդեցության հետևանք է հասարակության հոգևոր կյանքի աղքատացումը, հետաճը: Տեղեկատվական հոսքը և փաստերի ամենօրյա աճի հետևանքով առաջացած տեղեկատվական ավելցուկը հանգեցնում է մտավոր գերլարման: Մարդու գիտակցությունը անընդհատ ենթարկվում է ինֆորմացիոն «գրոհի»՝ վերածվելով մանիպուլյացիոն թիրախի:

Որոշակի իմաստով հասարակությունը մանիպուլյացիաների անհրաժեշտություն է զգում: Բանն այն է, որ մանիպուլյատիվ ազդեցությունները ունակ են զանգվածային գիտակցության մեջ ստեղծել և տարփոդել պատկերներ ու առասպելներ: Մասնավորապես հասարակության մեջ առաջացած լարվածությունը, կախված հետապնդվող նպատակից, հնարավոր է մեղմել, թուլացնել կամ խորացնել գործադրելով մշակութային սիմվոլներ [2, 3]:

Մանիպուլյացիան պարտադրում է այնպիսի մեկնաբանություն, որը առաջարկում է իրականության մասին ցանկալի պատկերացում: Ժամանակակից հասարակության մեջ տիրապետողը, պատմամշակութային իմաստը որոշողը ոչ թե ճշմարտության, բարու, գեղեցիկի ու արդարի կատեգորիաներն են, այլ պրագմատիզմը՝ մերկ շահի և օգուտի գիտակցությունը: Նման իրադրության մեջ բախվում են դասական ու կեղծ մշակույթը: Իսկ վերջինիս առաջացումն ու զանգվածային տարա-

ծումը՝ աշխարհի ու մարդու կեցության ամբողջականության, կայունության կորստի գիտակցման անմիջական հետևանք է [2]:

Այդ համատեքստում արդի հասարակությունում առավել մեծ նշանակություն է ստանում տիրապետելու և սպառելու առանձնահատուկ ձևերի գիտակցության ձևավորման հիմնախնդիրը:

Ժամանակակից մարդուն կարելի է բնորոշել ոչ թե «Homo sapiens», այլ «Homo consumers». Homo consumers-ի (սպառող մարդու) հիմնական ցանկությունը սպառելն է՝ առանց արտադրելու մասին մտածելու: Սպառող մարդը նպատակապացորեն ստեղծվում է տիրապետող գաղափարախոսությամբ խիստ որոշակի նպատակով, այն է՝ կառավարելու: Ընդ որում, սպառող մարդը որպես սուբյեկտ նշանակություն, արժեք չունի, այն նշանակալից է միայն իբրև ստատիկ միավոր՝ որպես ազդեցության օբյեկտ: Ոչ բռնի կառավարում իրականացնելու համար պարզեցվում է անձնավորության կառուցվածքը, նրանից խլվում գիտակցությունը, փոխարենը խրախուսվում է սպառելու ձգտումն ու ցանկությունը հիմնարար և մեծամասամբ արհեստական պահանջումներին բավարարման համար [2, 3]:

Եթե դեռևս տասնամյակներ առաջ առկա էր «բարի-չար, լավ-վատ», երկրնտրանքը, ապա ժամանակակից հասարակությունը չի ենթադրում միասնական բարոյական կողմնորոշիչներ և հասարակության գործունեությունը կարգավորող արդի բարոյականությունը դարձել է հեղհեղուկ: Հասարակական շերտերը կողմնորոշված են դեպի հակասական բնույթի տարբեր արժեքներ: Ոչ կայուն արժեքային կողմնորոշումների ֆոնի վրա, որտեղ մտավոր զարգացածությունը զուգակցվում է հուզական հետամնացության հետ, չափազանց դժվար խնդիր է ձևավորել հասուն և բարձր բարոյական գիտակցությամբ օժտված անձնավորություններ, ովքեր ընդունակ կլինեն կատարելու բարոյական ընտրություն և տալու բարոյական խնդիրների համարժեք լուծումներ:

Անձը միշտ իր դարաշրջանի և երկրի կյանքի արդյունքն է, որից հետևում է, որ անհրաժեշտ է «պատրաստել» ապագայի մարդկանց, ովքեր օժտված կլինեն ճկուն հոգեկան կառուցվածքով, այլ ոչ թե անդեմ արժեքային համակարգի հարմարվողական միտումներով: Մարդիկ, ովքեր պատրաստ կլինեն ոչ թե իրականության կործանարար վերափոխմանը այլ՝ ստեղծագործական ակտիվությամբ արձագանքելու աշխարհում կատարվող փոփոխություններին, մարդիկ, ովքեր ոչ թե գիտելիք են կուտակում, այլ կարող են որոնել այն և մտածել դրա շուրջ:

Իհարկե, մենք տեսնում ենք, որ մարդկությունը հոգևորի գոհաբերումով գնում է տեխնոկրատիայի ճանապարհով, մոռանալով, որ հենց հոգևորն է, որ բանական մարդուն տարբերում է կենդանուց: Հոգևոր կյանքը, ներառյալ փիլիսոփայությունը, կրոնը, արվեստը, գրականությունը, առհասարակ մշակութային այն բոլոր արժեքները, որ ստեղծել է մարդկությունը իր պատմության ընթացքում, և եթե դրանց լրջորեն, ակնածալի վերաբերմունք չի լինելու, ապա ժամանակակից մարդկության համար չի կարող լինել «լուսավոր» ապագայի հեռանկար:

Մարդկության պատմական փորձը վկայում է, որ բարոյական գիտակցությունը ձևավորվում և զարգանում է գրքերի ընթերցումից, խելացի և հոգևոր բարձր զարգացում ունեցող մարդկանց հետ շփվելիս, գեղեցիկ ու վեհ երաժշտություն լսելիս: Մարդու հոգևոր ոլորտը միակն է, որը չկա այլ էակների մոտ:

Չպետք է մոռանալ, որ, հիրավի, գիտությունը աշխարհի մասին, այն աշխարհի, որում մենք ապրում ենք, տեղեկություններ քաղելու առավել հզոր միջոց է, բայց հոգևորը անհրաժեշտ է որպես կյանքի իմաստի աղբյուր:

Եվ հոգեբանության կարևորագույն խնդիրներից մեկն էլ հենց մարդկային կեցության իմաստի որոնման և հայտնաբերման մեջ է: Բնագիտությունը չի լուծում որոշ էկզիստենցիալ և փիլիսոփայական հարցեր: Վերջիններս վերաբերում են հոգևոր-բարոյական արժեքներին: Բանն այն է, որ գիտատեխնիկական առաջընթացը և հոգևոր-բարոյական զարգացումը համընթաց չեն գնում: Ավելին, այսօր ակնհայտ է ճշմարտության և բարու տարամիտում, մինչդեռ էության մեջ, ճշմարիտն ու բարին նույնական են. իրական ճշմարիտը անպայմանորեն բարի է, և ընդհակառակը: Բանականության նվաճումները պետք է ամրապնդվեն բարոյական հաղթանակներով: Այո, ինչպես, Վազգեն Ա Հայրապետն էր ասում իր քարոզներից մեկում. «Արմատրոնգի քայլը պետք է կատարվի նաև մարդու հոգևոր-բարոյական տիեզերքին մեջ»: Ասել կուզի, թե մարդկային կյանքի ամենաամուր վեմը մարդու իմացական հանճարը բարոյական հանճարի ձեռքբերումներով լրացնելն է: Այստեղ նաև տեղին է մեջբերել 20-րդ դարի նշանավոր ֆիզիկոս, նոբելյան մրցանակի դափնեկիր Վ. Հայզենբերգի հետևյալ խոսքերը. «Բնագիտության բաժակից ըմպած մեկ կումը մեզ դարձնում է աթեիստ, բայց չպետք է մոռանալ, որ բաժակի հատակում մեզ Աստված է սպասում»:

Ժամանակակից հոգեբանության խնդիրն է թույլ չտալ արժեզրկելու, ապամարդկայնացնելու մարդկային կյանքն ու նրա իմաստը: Ահա թե ինչու գիտության սրընթաց զարգացման պայմաններում աննախադեպ աճում է հումանիտար գիտելիքի դերը: Արվեստը, գրականությունը, հոգեբանությունը և հումանիտար գիտություններն ամբողջությամբ կոչված են անձի մոտ ձևավորելու պատասխանատվության գիտակցություն այն ամենի հանդեպ, ինչ մարդկային է:

Գրականություն

1. «Էջմիածին», 1969 թ., Ժ-ԺԱ, էջ 5-6:
2. **Конишевский Д. В.**, Манипулятивное воздействие на социокультурные процессы как средство тотальной деконструкции / Д. В. Конишевский // Омский научный вестник. Сер. Общество. История. Современность. Омск, 2010. № 6 (92). С. 235 – 238.
3. **Конишевский Д. В.**, Манипулятивное воздействие на социокультурные процессы Автореферат, Омск, 2011.

Нелли Ароян

Факультет философии и психологии ЕГУ

к.п.н., доцент кафедры социальной психологии

МАНИПУЛЯТИВНОЕ ВЛИЯНИЕ НА СОЦИОКУЛЬТУРНЫЕ ПРОЦЕССЫ КАК ПРОБЛЕМА СОВРЕМЕННОЙ ПСИХОЛОГИИ

***Ключевые слова:** Информационное общество, манипулятивное влияние, духовная жизнь.*

В статье рассматриваются вопросы возникновения информационного общества и манипуляции массовым сознанием, которые активизируются в переходные периоды, связанные со сменой мировоззренческих и парадигмальных систем, и трансформации ценностных ориентаций общества.

Nelli Haroyan

Faculty of Philosophy and Psychology, YSU

PhD, Associate Professor of the Department of Social Psychology

THE INFLUENCE OF MANIPULATION ON SOCIAL-CULTURAL PROCESSES AS A PROBLEM OF MODERN PSYCHOLOGY

***Key words:** information society, manipulative influence, the spiritual life.*

The article examines questions of emergence of the information society and manipulation of the mass consciousness, which is activated during the transition period associated with the change of philosophical and paradigmatic systems and the transformation of value orientations of society.

**ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՆԵՐԱԳՂԵՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
ՀՈԳԵՍԵՄԱՆՏԻԿ ՄՈՏԵՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

***Բանալի բառեր՝** հոգեսեմանտիկա, ներագղեցություն, նշանակություն,
«աշխարհի պատկեր», սեմանտիկ տիրույթներ:*

Հոգեբանական ներագղեցության ֆենոմենը ուղղակիորեն առնչվում է անձի հոգեկան գործնեությունն ու վարքը կառավարող առանցքային հիմնահարցերի հետ, որի ուսումնասիրումը հոգեբանության կարևոր մեթոդաբանական խնդիրներից է հանդիսանում: Այն, թե ինչպես է գործառնում և ինչ մեխանիզմներով է միջնորդավորված հոգեբանական ներագրման գործընթացը, ներկայացված է գիտական տարբեր ուսումնասիրություններում (Տ. Ս. Կաբաչենկո, Վ. Պ. Շեյնով, Ֆ. Զիմբարդո, Գ. Ա. Կովալև, Է. Արոնսոն և այլք): Մակայն, հոգեսեմանտիկ մոտեցման համատեքստում այս հիմնախնդրի դիտարկումը ուսումնասիրությունների նոր հնարավորություններ է ստեղծում, որը թույլ է տալիս ի հայտ բերել հոգեկան վիճակների և գործընթացների կառավարման սեմանտիկ տեսանկյունները: Ուստի, հարկավոր է նախ ներկայացնել հոգեսեմանտիկայի ուսումնասիրության ոլորտը:

Այն հոգեբանության համեմատաբար նոր բնագավառ է, որի կարևորագույն խնդիրներից է նշանակությունների անհատական համակարգի կազմավորումը, վերակառուցումն ու գործառնությունը, որի պրիզմայի միջով սուբյեկտն ընկալում է աշխարհը, այլ մարդկանց և իրեն [9]:

Ինչպես տեսնում ենք, «նշանակություն» հասկացությունը, որն ավանդաբար ուսումնասիրվում է լեզվաբանության, մասնավորապես՝ իմաստաբանության դաշտում, կենտրոնական տեղ է զբաղեցնում հոգեսեմանտիկայի կոնցեպտուալ համակարգում, հետևաբար հարկ է անդրադառնալ դրա սահմանմանը: Այսպես, եթե լեզվաբանական իմաստաբանության շրջանակներում այն դիտարկվում է որպես նշանի և դրան համապատասխանող բովանդակության միջև գոյություն ունե-

ցող կապը, որն արտացոլում է հասարակական գիտակցության մեջ պրակտիկ գործունեության ընթացքում պատմականորեն ձևավորված նորմերը, ապա հոգեբանության մեջ նշանի և նշանակելի բովանդակության միջև հարաբերակցությունը այդքան էլ միանշանակ չէ: Մասնավորապես, հոգեւեմանտիկայի համատեքստում առանձնահատուկ գիտական հետաքրքրություն է ներկայացնում այդ հասարակական նորմերի յուրացման մեջ կրնկրետ սուբյեկտի անհատական գործնեության դերը, այլ կերպ ասած՝ անհատի գործնեության ընթացքում նշանակությունների ընտրողական յուրացումն ու փոխակերպումը անհատական գիտակցության մեջ [10]:

Եվ, որպես այնպիսի կառուցվածք, որն իրենում ամփոփում է սուբյեկտի անհատական նշանակությունների համակարգը և միջնորդավորում է շրջապատող աշխարհի հետ նրա հարաբերությունների ողջ համալիրը, ընդունվում է «աշխարհի պատկեր» հասկացությունը: Վերջինիս բնորոշման շուրջ սահմանումները տարբեր են, սակայն ինչպես է այն մեկնաբանվում հոգեւեմանտիկ մոտեցման հայեցակարգում:

Վ. Ֆ. Պետրենկոն համարում էր, որ «աշխարհի պատկերը» արտաքին իրականության պարզ կադապարը չէ, նրանում ամփոփված են գիտական գիտելիքները, անձի առօրեական փորձը, տվյալ մշակույթի կենսական արժեքները, բուն սուբյեկտի անձնային իմաստները, որոնք անհատականացնում են նրա աշխարհընկալումը [8, էջ 57]:

Աշխարհի պատկերի կառուցվածքի ու գործառնության վերաբերյալ համապարփակ մոդել է առաջարկել Ե. Յու. Արտեմևան: Ըստ նրա, աշխարհի պատկերը հանդիսանում է հոգեկան գործնեությունը կարգավորող բազմամակարդակ կազմավորում, որն իրենում ամբողջապես կրում է սուբյեկտի անցյալ և ընթացիկ գործնեության հետքերը: Աշխարհի պատկերի կառուցողական նյութն ու կարգավորիչն է հանդիսանում անձի սուբյեկտիվ փորձը, որն իրենում կուտակում է նրա կենսագործունեության ամբողջ պատմությունը: Ընդ որում, այն աշխարհի պատկերի համանմանությամբ ունի բազմաշերտ կառուցվածք, որի մակարդակներից յուրաքանչյուրը առանձնանում է իր որակական յուրատիպությամբ [3, էջ 18]:

Առաջին մակերեսային շերտի բովանդակությունը ներկայացնում է Յու.Կ. Ստրելկովի առաջարկած «պերցեպտիվ աշխարհ» հասկացությունը, որը բնութագրվում է ընկալվող երևույթներին և առարկաներին

վերագրվող նշանակությունների և իմաստների համակարգով: Շնորհիվ իր կառուցվածքում նշանակությունների և իմաստների ներկայացվածության պերցեպտիվ աշխարհը դուրս է գալիս զգայական ընկալման տիրույթից: Հետևաբար, դա պարզապես ընկալում չէ, այլ նաև դրավրա «կառուցված» միտք [4]:

Սուբյեկտիվ փորձի հաջորդ շերտը *սեմանտիկ տիրույթն է*, որը կենտրոնական տեղ է զբաղեցնում Ե. Յու. Արտեմևայի ուսումնասիրություններում: Այդ տիրույթի կառուցվածքային տարրերն են հանդիսանում «իմաստները», որոնք հեղինակի կողմից սահմանվում են որպես իրականության տարբեր երևույթներին, օբյեկտներին, իրավիճակներին ուղղված այն կայուն վերաբերմունքը, որը ձևավորվել է նրանց հետ փոխհարաբերության արդյունքում: Այս շերտը զգայական ընկալումներից և պատկերացումներից բացի, իրենում կրում է անձի վերաբերմունքային համակարգը, այսպես կոչված «իմաստային» տիրույթը: Աշխարհի պատկերի կառուցվածքի հետ համադրելիս, այն կարելի է ասել անցումային տեղ է զբաղեցնում մակերեսային և խորքային հարթությունների միջև: Նշենք, որ Ե. Յու. Արտեմևան չի նույնացնում «իմաստ» հասկացությունը Ա. Ն. Լեոնտևի գործունեության տեսության «անձնային իմաստ» հասկացության հետ, քանի որ համարում է, որ դրանց ծագման և ձևավորման միջև կան նուրբ տարբերություններ. կա լրացուցիչ օղակ, որը տվյալ «իմաստը» վերափոխում է «անձնային իմաստի»: Իմաստների համակարգերը նա անվանում է սեմանտիկա, իսկ ընդգծելու համար դրանց հարաբերակցությունը անձի անհատական գործունեության պատմության հետ՝ անվանում է սուբյեկտիվ սեմանտիկա: Ի վերջո, սուբյեկտիվ փորձի խորքային շերտը հարաբերակցվում է աշխարհի պատկերի միջուկային կառուցվածքների հետ, որոնք կազմավորվում են սեմանտիկ տիրույթի «վերամշակման» գործընթացում: Դրա հիմնարար բաղադրիչներն են հանդիսանում *անձնային իմաստները*, որոնք իրենցում ամփոփում են աշխարհի հանդեպ ընդհանրացված վերաբերմունքը: Այդպիսով, ըստ Ե. Յու. Արտեմևայի, աշխարհի պատկերը տվյալ անհատի իրականացրած գործունեության անձնային պատմության «խտացումն» է, իսկ սուբյեկտիվ փորձի յուրաքանչյուր շերտ իրեն մենահատուկ ձևով պահում է այդ գործունեության հետքերը. պերցեպտիվ աշխարհը կրում է զգայական, մոդալային երանգավորում ունեցող բովանդակություններ, սեմանտիկ տիրույթում ձևավորվում են օբյեկտների իմաստները՝ սեմանտիկ ծածկագրերի տեսքով, իսկ անձ-

նային իմաստների տիրույթում ամփոփված է աշխարհի հանդեպ ընդհանրացված վերաբերմունքը: Ինչ վերաբերվում է այդ կառուցվածքային շերտերի փոխհարաբերակցության հարցին, ապա հեղինակը հատուկ ընդգծում է սեմանտիկ տիրույթի կապակցող դերը: Սեմանտիկ շերտը, իրենում բովանդակելով անմիջականորեն ընկալվող օբյեկտների հանդեպ համապարփակ վերաբերմունքը, մի կողմից «կառուցողական նյութ» է ստանում «պերցեպտիվ աշխարհից», հետևաբար սերտորեն կապված է ընկալման, այդ թվում և նրա մոդալ ասպեկտների հետ, իսկ մյուս կողմից՝ դեկլարվում է աշխարհի պատկերի խորքային կառուցվածքների կողմից [3, էջ 21-30]:

Հետևաբար, կարելի է ասել արտաքին աշխարհից եկող ցանկացած ազդեցություն բեկվում է սեմանտիկ տիրույթի միջով և հանգեցնում է համապատասխան փոփոխության շնորհիվ դրա արդյունքում կատարվող իմաստային վերակառուցումների: Սակայն, հարց է ծագում. Հոգեբանական ներազդեցության իրագործման ինչպիսի՞ հնարների միջոցով են իրականացվում այդ սեմանտիկ վերակառուցումները: Այս հարցի պատասխանը պահանջում է նախ բազմակողմ վերլուծության ենթարկել հոգեբանական ներազդեցության գործընթացը: Մասնավորապես, Տ. Ս. Կաբաչենկոն համարում էր, որ այն կարելի է դիտել և՛ որպես գործընթաց, որը հանգեցնում է անձի կոնկրետ ակտիվությունը կարգավորող հոգեկան գործոնների փոփոխությանը, և՛ որպես արդյունք, այսինքն՝ բուն փոփոխությունը [6, էջ 23]: Իր հերթին, դասակարգելու համար հոգեբանական ներազդեցության մեթոդները, նա առաջարկում է տարբերակել անձի ակտիվությունը կարգավորող հոգեկան գործոնների հետևյալ խմբերը՝

- գործոններ, որոնք ապահովում են իրականության մեջ կողմնորոշումը, այլ կերպ ասած՝ իրականության սուբյեկտիվ մոդելներ
- գործոններ, որոնք ապահովում են որոշակի ակտիվության իթանումը. պայմանականորեն դրանք կարելի է անվանել ակտիվության աղբյուրներ
- գործոններ, որոնք ազդում են կոնկրետ վարքային ակտիվության իրագործման կամ խոչընդոտման վրա
- ֆոնային գործոններ, մասնավորապես՝ գիտակցության վիճակը և ֆունկցիոնալ վիճակները [6, էջ 218-219]:

Ըստ այդմ էլ, հիմնվելով անձի ակտիվությունը կարգավորող վերոնշյալ գործոնների վրա, նա հոգեբանական ազդեցության մեթոդները

բաժանում է հետևյալ խմբերի՝ իրականության սուբյեկտիվ մոդելների վրա ազդեցության մեթոդներ, ակտիվության աղբյուրների վրա ազդեցության մեթոդներ, ակտիվության տվյալ տեսակի դրսևորումը կարգավորող գործոնների վրա ազդեցության մեթոդներ, ֆոնային վիճակների վրա ազդեցության մեթոդներ: Ընդ որում, այդ մեթոդներից յուրաքանչ-յուրի արդյունավետությունը պայմանավորված է որոշակի հոգեբանական հնարների հաջող կիրառումից: Մասնավորապես, իրականության սուբյեկտիվ մոդելների վրա ազդեցության պարագայում՝ առանցքային նշանակություն ունեն անհրաժեշտ տեղեկատվության փոխանցման ձևերն ու հնարները, որոնք գլխավորապես միտված են կառուցելու ներազդող կողմի համար շահավետ իրադրության պատկերը: Ինչ վերաբերվում է անձի ակտիվության աղբյուրների (պահանջմունքներ, հետաքրքրություններ, համոզմունքներ, զգացմունքներ) վրա ազդեցության մեթոդներին, ապա դրանք հիմնականում միտված են՝ մի կողմից նոր իմաստների կազմավորման և նպատակադրման գործընթացների ակտիվացմանը, իսկ մյուս կողմից՝ նախկինում կազմավորված իմաստների, ներքին «հենարանների» տարրալուծմանը: Ազդեցության մեթոդների երրորդ խումբն էլ տվյալ ակտիվության դրսևորման «կարգավորիչ-գործոններ»-ին է ուղղված, որոնք նպատակ ունեն ձևավորելու նոր դիրքորոշումներ, կոտրելու արդեն իսկ կազմավորված դիրքորոշումներն ու կարծրատիպերը, ներազդելու «Ես»-պատկերի վրա՝ գլխավորապես խմբային գործունեության կազմակերպման տարբեր հնարների օգնությամբ: Ի վերջո, մեթոդների չորրորդ խումբն էլ ուղղված է՝ գիտակցության փոփոխված վիճակների և անհրաժեշտ հոգեկան վիճակների առաջացմանը, որոնք կապահովեն պահանջվող գործունեության համար նպաստավոր տրամադրվածություն և կպայմանավորեն անձի ակտիվության ուղղությունն ու դինամիկան [6]:

Անձի ակտիվությունը կարգավորող գործոնների նման տարբերակումը, ճիշտ է, թույլ է տալիս հնարավորինս բազմակողմ ներկայացնել ներազդեցության գործընթացի բոլոր կողմերը, սակայն այն ունի պայմանական բնույթ: Իրականում դրանք սերտորեն փոխկապակցված են և ամփոփված են իրականության սուբյեկտիվ մոդելի կամ հոգեբանական տիպիկայի տերմինաբանությամբ՝ «աշխարհի պատկերի» վերոհիշյալ տիրույթներում: Իր հերթին ներազդեցության արդյունքում վերջինիս փոխակերպման գործում առանցքային նշանակություն ունեն տեղեկատվության մշակման և փոխանցման հնարները, որոնք ուղղակիորեն

առնչվում են իմաստների կազմավորման գործընթացների հետ: Ընդ որում, այդ հնարները հաճախ կառուցվում են լեզվական մանիպուլյացիայի հենքի վրա: Չէ որ բառերը դրանք առաջին հերթին իմաստային հասկացություններ ու բովանդակություններ են, և բառիմաստի (մասնավորապես, լեզվական միավորների կոնոտատիվ նշանակության)* ծրագրավորված փոփոխությունը կարող է որպես ներագդեցության հզոր գործիք ծառայել: Դրա իրագործման ձևերից է սովորական բառերին նոր և լրացուցիչ նշանակություններ վերագրելը: Մասնավորապես Ե. Ն. Վոլկովը քննարկում է կրոնական աղանդներում այս հնարի կիրառման հետևյալ օրինակը, երբ «բանականություն» բառը աստիճանաբար սկսում է գուգորդվել մարդու ներսում եղած չար մտքերի հետ, որոնք հեռացնում են նրան Աստծուց և Ճշմարիտից [5]: Լեզվական մանիպուլյացիայի հաջորդ հնարներից է «հատուկ» բառապաշարի գործածումը, որը հասկանալի է միայն տվյալ խմբի անդամներին: Դա արվում է խմբում հանդիպող հնարավոր բարդ իրադրությունները որոշակի պիտակներով նշանակելու միջոցով: Ամեն այդպիսի պիտակ այդ «հատուկ լեզվի» արտահայտումն է և տեղեկատվության գտման ու իմաստավորման ուղեցույց է ծառայում: Դրանք ծրագրավորում են մարդու մտածողությունը՝ յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում նախապես պարտադրելով մտածողության կարծրատիպեր: Օրինակ Տ. Լիբին նշում է, որ մունիստները, խմբում տարբեր ստատուս ունեցող անդամների փոխհարաբերությունների հետ կապված, ցանկացած կոնֆլիկտ նշանակում են որպես «Կայենի և Աբելի խնդիր»: Դա ինքնատիպ ծածկագիր է, որը ինքնաբերաբար թելադրում է, թե ինչպես է պետք այդ խնդիրը լուծել: Կայենը պետք է ենթարկվի Աբելին և հետևի նրան, այլ՝ ոչ թե սպանի, ինչպես նկարագրված է Հին կտակարանում: Իր հերթին, նորեկները հասկանալու համար խմբի անդամներին, աստիճանաբար, սկսում են յուրացնել այդ «հատուկ» գիտելիքները, որպեսզի սովորեն ըմբռնել «Ճշմարտությունը» [7]:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք ասել, որ հոգեբանական ներագդեցության ուսումնասիրման հոգեսեմանտիկ մոտեցումը՝ դրա

* Բառի կոնոտատիվ նշանակությունը բնութագրում է արտահայտող հասկացության ոչ էական, սակայն կայուն հատկանիշները, որոնք իրենցում կրում են իրականության, իրերի և երևույթների նկատմամբ՝ տվյալ լեզվական հանրությունում ընդունված վերաբերմունքն ու գնահատականը: Դրանք անմիջականորեն չեն մտնում բառի լեզվական նշանակության մեջ և ուղղակիորեն չեն բխեցվում դրանից [2]:

իրագործման մեխանիզմ է դիտում ընկալման, մտածողության գործընթացները միջնորդավորող իմաստների, նշանակությունների անհատական համակարգի վերակառուցումը, որն ուղղակիորեն միջնորդավորված է տեղեկատվության մշակման և փոխանցման լեզվական հնարներով: Այդ իմաստով, կարելի է ասել բառերի նշանակությունը և իմաստը միայն լեզվաբանական հայեցակարգում դիտարկելը սահմանափակում է դրանց էության լիարժեք պարզաբանումը: Ինչպես գրում է ակնանավոր լեզվաբան Գ. Բ. Ջահուկյանը. «Իմաստաբանական բոլոր կարգի ուսումնքների հատուկ է այն թերությունը, որ նրանք փորձում են լեզվականը լուծել լեզվականով, լեզվական իմաստների բնույթի հետ կապված բոլոր հարցերը պարզել՝ մնալով լեզվի սահմաններում, մինչդեռ լեզուն ստեղծված է արտալեզվական աշխարհի առարկաները, երևույթներն ու հարաբերությունները արտահայտելու համար...» [1, էջ 13]: Հետևաբար, հատուկ ուսումնասիրության է արժանի, մասնավորապես, բառերի, հասկացությունների լեզվական նշանակության հոգեբանական իմաստափոխության մեխանիզմների հիմնահարցը, որի հետազոտության մեթոդաբանությունը պետք է կառուցվի հոգեբանության և լեզվաբանության համատեղ հենքի վրա:

Գրականություն

1. **Ջահուկյան Գ. Բ.**, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն. -Եր.: ՀԽՍՀ ԳՍ հրատ., 1989. – 319 էջ:
2. **Апресян Ю. Д.**, Лексическая семантика. Синонимические средства языка. М., 1974.
3. **Артемяева Е. Ю.**, Основы психологии субъективной семантики. Издательства: Наука, Смысл, 1999.-350 с.
4. **Артемяева Е. Ю., Стрелков Ю. К., Серкин В. П.**, Описание структур субъективного опыта: контекст и задачи // Мышление, общение, опыт. / Под ред. Ю.К. Корнилова. Ярославль, 1983. с. 99-118
5. **Волков Е. Н.**, Методы вербовки и контроля сознания в деструктивных культах // Журнал практического психолога. М.: Фолиум. 1996. No 3., с. 76-82
6. **Кабаченко Т. С.**, Методы психологического воздействия.-М., 2000. -544 с.
7. **Лири Т., Стюарт М.**, Технологии изменения сознания в деструктивных культах. СПб: «Экслибрис», 2002.-224 с.
8. **Петренко В. Ф.**, Многомерное сознание: психосемантическая парадигма. - Москва.- Новый хронограф, 2009.-440 с.
9. **Петренко В. Ф.**, Основы психосемантики. -3-е изд. -М.: Эксмо, 2010. -480 с.

10. **Шмелев А. Г.**, Введение в экспериментальную психосемантику: теоретико-методологические основания и психодиагностические возможности. М.: Изд-во Моск. ун-та, 1983. - 158 с.

Феня Базоян
Факультет философии и психологии ЕГУ
Преподаватель кафедры социальной психологии

**ПРОБЛЕМА ПСИХОЛОГИЧЕСКОГО ВЛИЯНИЯ В КОНТЕКСТЕ
ПСИХОСЕМАНТИЧЕСКОГО ПОДХОДА**

Ключевые слова: *психосемантика, влияние, значение, «образ мира», семантическое поле.*

Рассмотрение проблемы психологического влияния в контексте психосемантического подхода открывает новые перспективы исследования. Это дает возможность выявить семантические аспекты управления психических состояний и процессов. В статье подробно обсуждается реконструирование семантических структур «образа мира» как механизм психологического влияния, также отмечается роль лексических приемов обработки и передачи информации в этом процессе.

Fenya Bazoyan
Faculty of Philosophy and Psychology, YSU
Lecturer of the Department of Social Psychology

**THE PROBLEM OF PSYCHOLOGICAL INFLUENCE IN THE CONTEXT OF
PSYCHOSEMANTIC APPROACH**

Key words: *psychosemantics, influence, meaning, “image of the world”, semantic field.*

The investigation of the psychological influence in the context of psychosemantic approach opens new perspectives for research. It gives the chance to identify the semantic aspects of the management of mental states and processes. Particularly, a restructuring of semantic structures of the “image of the world” are discussed in the article as a tool of psychological influence. Besides, the issue referring to the role of lexical methods of the information development and transmission is mentioned.

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Քանայի բառեր՝ քաղաքական հոգեբանություն, մեթոդներ, քաղաքական տեխնոլոգիաներ:

Քաղաքական հոգեբանությունը հոգեբանության այն ուղղություններից է, որոնք առաջացել են հոգեբանության և այլ գիտությունների հատման կետում: Ուստի, խոսելով նրա մեթոդաբանության և տեսական հիմքերի մասին, անխուսափելիորեն առնչվում ենք մեթոդների կիրառման տիրույթների բախման հետ: Օրինակ, եթե քաղաքական հոգեբանությունը սոցիալական գիտությունների շարքին ենք դասում, ապա մեթոդները, համապատասխանաբար, վերցնում ենք տվյալ ոլորտի գործիքակազմից: Մակայն, վտանգն այս իրավիճակում սոցիոլոգիական վիճակագրության դաշտում հայտնվելն է, այն է՝ ընտրանքում ուսումնասիրվող երևույթների սոկոսային բաշխվածության դուրս բերումը: Այս հոդվածում փորձելու ենք հասկանալ, թե քաղաքական հոգեբանության մեթոդաբանությունը որքանով է բացատրում հոգեբանական երևույթները, որոնք տեղի են ունենում քաղաքական համակարգերում: Նախևառաջ, դիտարկենք այն տեսությունները, որոնք բացատրում են հասարակության անդամների և քաղաքական համակարգի փոխհարաբերությունները:

Քաղաքական հոգեբանությունը որպես առանձին գիտական ճյուղ հայտնի է 1968 թ., երբ Ամերիկյան Հոգեբանական Ասոցիացիայում ստեղծվեց քաղաքական հոգեբանության առանձին բաժին: Մակայն քաղաքական-հոգեբանական հայացքների զարգացումը սկսվել է դեռ հնագույն ժամանակներից. Պլատոնի, Արիստոտելի, Ցիցերոնի և այլոց աշխատություններում, որտեղ դուրս էին բերվում քաղաքական համակարգի գործունեության խնդիրները, դրա կառավարման առանձնահատկությունները: Այս գաղափարները շարունակվեցին Գ. Լեբոնի, Գ. Տարդի, Մ. Վեբերի աշխատություններում, որոնցում շեշտադրվեցին քաղաքական լիդերի դերը և գործառույթները [1, 2]:

20-րդ դարի սկզբին բիհեյվիորիզմի և հոգեվերլուծության հայացքները ներթափանցեցին նաև սոցիալ-քաղաքական ոլորտ. Հատկանշական է Ջ. Լասուելի «Հոգեախտաբանությունը և քաղաքականությունը», որտեղ ընդգծվեց քաղաքականության սուբյեկտների վարքի խորը վերլուծության անհրաժեշտությունը: Այդ մասին էին վկայում նաև Կ. Յունգի, Է. Ֆրոմի աշխատությունները: Երկու համաշխարհային պատերազմները, որպես մարդկության պատմության մեջ տեղի ունեցած մեծագույն ողբերգություններ, ստիպեցին հոգեբաններին փնտրել դրանց հոգեբանական պատճառները, որոնց մի մասը, իհարկե, ընկած էր գերտերությունների ղեկավարների հոգեախտաբանական դիմանկարների հիմքում:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո քաղաքական համակարգերի գործառնության հետազոտությունները բերեցին մի շարք նոր հայեցակարգերի ձևավորման, որոնցում մարդը, որպես քաղաքական համակարգի հիմնական սթրեսոր, նույն համակարգի «խաղի կանոնները» ընդունելով՝ ցուցաբերում է հավատարմություն ու լոյալություն և ստանում է պաշտպանություն: Մեկ այլ մոտեցման մեջ քաղաքական համակարգում մարդը նույնականանում է քաղաքական համակարգի որոշ ինստիտուտների հետ և գործում դրանց համապատասխան դերերում: Քաղաքական համակարգերի զարգացման հետ մեկտեղ զարգանում էին նաև դրանց գործունեությունը բացատրող տեսությունները: Այսպես, օրինակ, 20-րդ դ. 80-90-ական թթ. քաղաքական համակարգերի բարդացումը, սոցիալական շերտավորման ավելացումը, այսպես կոչված «սպառողների հասարակության» ձևավորումը հիմք հանդիսացան այնպիսի հայեցակարգերի ձևավորմանը, ինչպիսիք են քաղաքական բիհեյվիորիզմը, կոգնիտիվիստական ուղղությունը, որը շեշտադրում էր քաղաքական մտածողության զարգացումը, հումանիստական ուղղությունը, որն առաջնային էր համարում մարդկանց պահանջմունքները և հույզերը քաղաքական գործընթացներում և այլն [3]:

Նշված հայեցակարգերը տարբեր կողմերից բացատրում են անձի և քաղաքականության փոխհարաբերությունները, մասսայական վարքի, քաղաքական լիդերների գործառնության մեխանիզմները: Սակայն քաղաքական հոգեբանության մեթոդների զարգացումը, մեր կարծիքով, ձևավորեց մակերեսային մոտեցում քաղաքական գործընթացների նկատմամբ: Անձնային հարցարանների կիրառումը (MMPI, Չ. Այզենք, Յ. Քեթթել և այլն) հնարավորություն ստեղծեց կառուցելու քաղաքական

գործիչների անձնային պրոֆիլներ, փորձագիտական գնահատականների մեթոդը, որի շնորհիվ իրականացվում էր անձի հնարավոր վարքի կանխատեսում: Ավելի ուշ, քաղաքական հոգեբանության մեջ սկսեցին կիրառվել հետազոտության որակական մեթոդներ՝ կոնտենտ-վերլուծություն, ֆոկուս-խմբեր, սեմանտիկ տիրույթի կառուցման, հոգեկենսագրական մեթոդներ և այլն [5]: Արդյունքում հետազոտողները ունենում էին մեծ քանակությամբ տեղեկատվություն քաղաքական գործընթացների բոլոր մասնակիցների մասին՝ ընտրողներ, լիդերներ, կուսակցություններ, ակտիվիստներ և այլն: Սակայն, մեր կարծիքով, խնդիրն այն էր, որ հիմնականում այդ արդյունքները ենթարկվում էին վիճակագրական վերլուծության շատ քիչ տեղ թողնելով հոգեբանական մեկնաբանությունների համար: Արդյունքում մենք ունենք բազմաթիվ վիճակագրականորեն ճշգրիտ վերլուծություններ, որտեղ բացահայտվում են մարդկանց, խմբերի տիպաբանությունը, վարքային ձևերը, նույնիսկ՝ կոգնիտիվ սխեմաները ու պատկերացումները: Ստեղծվում է տպավորություն, որ ամեն ինչ մանրամասն ուսումնասիրված է, ստացված են քաղաքական – հոգեբանական երևույթները բացատրող սպառիչ պատասխաններ: Իսկ ի՞նչ ունենք մենք արդյունքում. հետզհետե բարդացող քաղաքական իրավիճակ համաշխարհային մասշտաբով, անկանխատեսելի քաղաքական-ոազմական կոնֆլիկտներ, հոգեբանական խնդիրներով լիդերների կայուն քանակի պահպանում: Ավելին, Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների տրավմատիկ փորձը կորցրել է իր նշանակությունը այնքանով, որ ժամանակակից սերունդը կանգնած է հերթական համաշխարհային պատերազմի վտանգի առջև (հիշենք ամբողջ 2014 թ. ընթացքում ռուսական հեռուստապրոպագանդայի առաջնորդ Ե. Կիսելյովի կոչերը և սպառնալիքները միջուկային զենքի հնարավոր կիրառման մասին): Այսպիսով, և ոչ մի հոգեբանական մեթոդ արդյունքում չի բացահայտում այսօրվա տիրող իրավիճակը: Առանձին ազդեցություն են թողնում քաղաքական գործընթացների ընթացքի վրա այսպես կոչված տեղեկատվական պատերազմները, որոնք իրական բախումներ են առաջացնում վիրտուալ տիրույթում: Տեղեկատվական պատերազմի առաջնային գործառույթն է հոգեբանական ներգործությունը, որը կատարվում է տեղեկատվական գրոհների, մանիպուլյացիաների, կիսասուտ տեղեկատվությունների տարածման, ահաբեկումների միջոցով: Գ. Պոչեպցովը նշում է, որ տեղեկատվական պատերազմները գնալով ավելի մեծ տեղ են գրավելու, և հաղթող են ճա-

նաչվելու սոցիալ-հոգեբանական ներգործության հմտություններ ունեցող կողմերը [4]: Պարզ է դառնում, որ քաղաքական հոգեբանության մեթոդաբանությունը բացատրելու և մեկնաբանելու դաշտից տեղափոխվում է ներգործելու և ազդելու դաշտեր: Քաղաքական հոգեբանին դիտարկում են որպես քաղաքական տեխնոլոգ շեշտադրելով մասնագետի ոչ թե մեթոդաբանական, այլ տեխնիկական զինվածությունը: Հաշվի առնելով տեղեկատվության տարածման արագությունը և բազմակողմանիությունը (համացանց, սոցիալական ցանցեր, հեռուստատեսություն, ռադիո) բոլոր մեր կողմից նշված մեթոդները վերածվում են ծանր գործիքների: Արդյունքում, մեր խորին համոզմամբ, բոլոր քաղաքական-հոգեբանական հետազոտությունները՝ քանակական և որակական՝ ժամանակավրեպ են. նրանք մեծ ճշգրտությամբ բացատրում և մեկնաբանում են երևույթներ, որոնք արդեն քաղաքական տեխնոլոգների, քարոզիչների, ցանցահեռնների գործառնության դաշտում են: Մենք, հետազոտողներս, վերածվում ենք post factum վերլուծողներ: Որպես օրինակ, կարող ենք բերել մեր կողմից թեկնածուական աստենախոսության շրջանակներում իրականացված հետազոտությունը քաղաքական գործչի կերպարի վերաբերյալ ընտրազանգվածի պատկերացումների մասին [6]: Այն իրականացվել է 2011-2012 թթ., իսկ երբ աստենախոսության հրապարակային պաշտպանությունն էր (2014), քաղաքական գործիչների մի մասը, որոնց մասին խոսքը գնում էր հետազոտության մեջ (Վահան Հովհաննիսյան, Պարույր Հայրիկյան), արդեն մեկ տարուց ավելի էր, որ դուրս էին մղվել քաղաքական ասպարեզից, չէին զբաղվում ակտիվ գործունեությամբ: Դեռ Ն. Մաքիավելլիի կողմից առաջ քաշած կարգախոսը՝ «Թվալ, այլ ոչ թե լինել», մեր օրերում նոր թափով վերածնունդ է ապրում՝ տարածվելով ոչ միայն քաղաքական լիդերների իմիջի, այլ ընդհանրապես՝ տեղեկատվության, փաստերի և, նույնիսկ, գիտելիքների վրա:

Այսպիսով, քաղաքական հոգեբանությունը այսօր վերածվել է քաղաքական տեխնոլոգիաների և հնարների վերաբերյալ գիտելիքների ու հմտությունների պաշարի: Դասական դասագրքային մոտեցումը քաղաքական ոլորտին թույլ չի տալիս մասնագետին ակտուալ հիմնախնդիրներ առաջադրել: Մեր կարծիքով, հետազոտությունները այս ոլորտում պետք է քայլ առ քայլ ուղղվեն ընթացիկ գործընթացների ուսումնասիրմանը, որպեսզի քաղաքական հոգեբանը փաստեր արձանագրողից և մեկնաբանողից դառնա այդ փաստերի ետևում կանգնած

մարդկանց առկա հոգեվիճակները գնահատող և դրանց փոփոխման եղանակները ստեղծող մասնագետ:

Գրականություն

1. **Կазарян И. А.**, Динамика развития представлений об образе политического деятеля в архаическом мире. Изд-во ЕГУ, 2006 г. – стр.142-147.
2. **Կазарян И. А.**, От образа к имиджу: казаться, а не быть (историко-философский обзор взглядов на проблему). – Ереван, изд-во «Асогик», 2009 г.- стр. 235-243.
3. Политическая психология:колл. авторов. Учебное пособие для высшей школы рекомендовано в качестве учебного пособияУчебно-методическим объединением вузов РФ «Академический Проект»: – 2001 г.
4. **Почепцов Г.**, Информационная война: определения и базовые понятия.- <http://psyfactor.org/psyops/infowar25.htm>.
5. Социальная психология: учебное пособиепод ред. А.Н. Сухова.- Юнити-Дана. 2012 г. 615 с.
6. Քաղաքական գործչի վերաբերյալ պատկերացումները՝ որպես քաղաքական իմիջի ձևավորման գործոն: Ատենախոսության սեղմագիր: Երևան, 2014 թ:

Изабелла Казарян

**Факультет философии и психологии ЕГУ
Ассистент кафедры социальной психологии**

МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ЗАДАЧИ ПОЛИТИЧЕСКОЙ ПСИХОЛОГИИ

Ключевые слова: *политическая психология, методы, политические технологии.*

В статье представлены теории и методы политической психологии и пределы их применения. Автором указываются количественные и качественные методы исследования, а также их связь с методами воздействия на политические процессы.

Izabella Ghazaryan

**Faculty of Philosophy and Psychology, YSU
Assistant of the Department of SocialPsychology**

METHODOLOGICAL PROBLEMS OF POLITICAL PSYCHOLOGY

Key words: *political psychology, methods, political technologies.*

The article presents the theories and methods of political psychology and the limits of their application. The author points out the quantitative and qualitative research methods, as well as their connection with the methods of influence on political processes.

Նելլի Հարոյան

*ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
սոցիալական հոգեբանության ամբիոնի դոցենտ, հ.գ.թ.
n.haroyan@mail.ru*

Մարի Ավետիսյան

*ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
սոցիալական հոգեբանության ամբիոնի ավագ լաբորանտ
avemari88@gmail.com*

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Բանալի բառեր՝ հոգեբանության կարգավիճակ, բնական գիտություններ, գիտափորձ, հումանիտար ոլորտներ:

*21-րդ դարը կամ լինելու է հումանիտար դար
կամ այն բոլորովին չի լինելու
Լևի-Մորոս*

Գիտությունների համակարգում հոգեբանության կարգավիճակի հարցի քննարկումը, մասնավորապես բնագիտական և հումանիտար դիսցիպլինների հետ նրա առնչությունների դիտարկմանը անցնելուց առաջ, նախ, անհրաժեշտ է մատնանշել դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունը: Հանրահայտ է, որ բնական գիտությունների համար պարտադիր են գիտափորձերը, այն է՝ գիտելիքների փորձնական ստուգումները, իհիստ տրամաբանական ապացույցների ուղղակի կամ անուղղակի կիրառումով:

Գիտափորձը որպես գիտական իմացության հիմնական եղանակներից մեկը կիրառվում է նաև հոգեբանական հետազոտությունների և հոգեկան երևույթների բացատրության ժամանակ:

Իսկ ինչ վերաբերում է մաթեմատիկային, ապա որոշ հեղինակներ գտնում են, որ մաթեմատիկան գրավում է հատուկ տեղ և չպետք է դասել բնական գիտությունների դասին, քանի որ հետազոտում է երևակայական մտային, նշանային օբյեկտներ, համակարգեր և գործընթացներ, և խստորեն չի համապատասխանում բնագիտության բնորոշմանը, սակայն բնագիտության մեջ մտածողության վճռական գործիքներից է [5]:

Միաժամանակ հայտնի է, որ ցանկացած ուսմունք, տեսություն գիտական է այնքանով, որքանով իր մեջ մաթեմատիկա է պարունակում: Ասել է, թե մաթեմատիկական մտածողության կիրառման աստիճանը տեսության գիտական լինելու չափանիշ է:

Այսպիսով, բնական գիտությունների հեղինակությունը, մի կողմից, պայմանավորված է գիտական ճշգրտությամբ և հետևողականությամբ, որ ներմուծվում է մաթեմատիկական մտածողության կիրառմամբ, մյուս կողմից, գործնական նշանակությամբ որպես բնության նվաճման կամ յուրացման միջոց [5]:

Մակայն անձի ստեղծագործական և սիմվոլիկ մտածողության, հոգեբանական բարդ մեխանիզմները ուսումնասիրող գիտությունը ինչպիսին հոգեբանությունն է ակնհայտորեն չի կարող «տեղավորվել» բնական գիտության կարգավիճակում:

Այսպես, օրինակ, այնպիսի երևույթներ, ինչպիսին են ինտուիցիան, պայծառատեսությունը և հոգևորն առհասարակ հնարավոր չէ գիտական ճշգրտությամբ նկարագրել, քանի որ ժամանակակից գիտության մեթոդներով այդ երևույթները չեն բացատրվում, որովհետև գիտականության հիմնական պահանջները երեքն են. ստուգելիություն, կրկնություն և ստատիստիկական արժանահավատություն (ճշգրտություն):

Այսինքն՝ եթե գիտնականը ստացել է ինչ-որ փաստեր, նկարագրել և հրապարակել է գիտական լուրջ պարբերականներում, ապա մեկ ուրիշ գիտնական պետք է կարողանա կրկնել դրանք և ստանալ միևնույն արդյունքը: Իսկ եթե խոսքը գնում է եզակի երևույթի, օրինակ, պայծառատեսության մասին, որը ոչ մի կերպ հնարավոր չէ «բռնել», ամրագրել:

Դեռևս հինդուիստական ավանդույթում համարվել է, որ բացարձակ ռեալությունը թաքնված է հասարակ մահկանացուներից պատրանքի թանձր քողով, քանի որ իրականությունը պատրանք է և հնարավոր չէ ճանաչել եմպիրիկ գիտակցությամբ: Իսկ փիլիսոփա Է.Կանտը նշում էր, որ մեր ողջ իմացությունը սկսվում է փորձից, բայց չի բխում փորձից [2, 4]:

Վ. Լայբնիցը իր համաձայնությունն էր հայտնում սենսուալիստ փիլիսոփաներին, ովքեր պնդում էին. «որ մեր մտքի մեջ չկա ոչինչ, որ նախօրոք տրված չլինի զգայություններում: Մակայն, ըստ Լայբնիցի, փորձը, և, հետևաբար զգայությունները, չեն կարող բացատրել իմացության մեջ գլխավորը՝ որոշ ճշմարտությունների անհրաժեշտությունն ու համընդհանրությունը: Ոչ փորձի տվյալների ընդհանրացումը, ոչ ինդուկ-

ցիան չեն կարող աղբյուր լինել այդպիսի ճշմարտությունների համար: Համընդհանրություններն ու անհրաժեշտությունը դրանք մտքի սեփականություն են և ոչ թե զգայությունների: Ուստի ընդունելով էմպիրիզմի նշանավոր բանաձևը, Լայբնիցը պնդում էր, որ մտքի մեջ չկա ոչինչ, որ նախապես չլիներ զգայության մեջ, բացառությամբ հենց մտքից» [1, էջ 231-232]:

Անշուշտ, նման պնդումը իմացաբանական բարդ խնդիրների առաջ է կանգնեցնում, բայց նաև հիմք է տալիս եզրակացնելու, որ հոգեբանությունը նույնպես կարող է հավակնել համընդհանուր և անհրաժեշտ գիտելիքի. դրա օգտին է խոսում նաև մաթեմատիկական մեթոդների արդյունավետ կիրառումը հոգեբանության մեջ:

Շատ հաճախ շեշտադրվում է, որ հումանիտար գիտելիքին է բնորոշ իմացության օբյեկտի և սուբյեկտի համընկնումը, որի բնութագրիչ գիծը սուբյեկտիվությունն է, երբ գիտելիքի մեջ արտացոլվում են հասարակական շահերը, գիտնականի համոզմունքները, արժեքային կողմնորոշումները: Այդ չափանիշները հոգեբանական գիտության բաղկացուցիչներն են և բնորոշում են դրա յուրահատկությունը: Մյուս կողմից, դժվար է միանշանակորեն համաձայնել այդ թեզի հետ, քանի որ ընդհանուր իմացաբանական տեսանկյունից դիտարկելիս, հումանիտար գիտելիքին բնորոշ համարվող սուբյեկտիվությունը դրսևորվում է նաև բնական գիտությունների, մասնավորապես տեսական ֆիզիկայի մեջ [3]:

Այսպիսով, վերոհիշյալից հետևում է, որ արմատապես փոխվում է իմացությունը բնագիտական և հումանիտար ոլորտների բաժանելու ավանդական մոտեցումը, քանզի իմացությունը միասնական գործընթաց է, որի հաստատումը գիտությունների ինտեգրացիան է:

Բայց և այնպես, մեզ թվում է, այսօր ավելի կարևոր է դիտարկել ոչ թե հոգեբանության կարգավիճակը գիտությունների համակարգում որպես այդպիսին, այլ այնպիսի հարցեր և խնդիրներ, որոնք ծառայած են ժամանակակից հոգեբանության առջև:

Այդ հիմնահարցը արդեն ժամանակին նախանշել էր Է. Ֆրոմը, շեշտելով, որ հոգեբանության, մասնավորապես սոցիալական հոգեբանության առաջընթացը՝ դա ժամանակակից բժշկագիտության, ֆիզիկայի և տեխնիկայի առաջընթացով պայմանավորված սպառնալիքի կանխումն է [6]:

Այդ սպառնալիքները ակնհայտորեն դրսևորվում են այսօր արհեստական գիտակցության, վիրտուալ իրականության, տեղեկատվական միջավայրի և նորագույն տեխնիկայի զարգացումով, քանի որ տեղեկատվական հասարակության ձևավորումով փոխվում են մարդկային կեցության ամբողջականությունը, վերարժևորվում են ավանդական կողմնորոշիչները և բարոյականությունը դառնում է հեղհեղուկ՝ խարխալելով մարդասիրական արժեքները: Իսկ մարդասիրական և հոգևոր արժեքների պահպանման գործընթացում իր ուրույն տեղն ու դերն ունի հոգեբանությունը:

Գրականություն

1. «Փրիխոփայության պատմության համառոտ ակնարկ»: Ուս. Ձեռնարկ: Խմբ. Մ. Տ. Իովյուկ, Տ. Ի. Օյգերման, Բ. Շչիպանով: Թարգ. Հ. Ղ. Միրզոյան, Թ. Վ. Դիլանյան,- Եր.: ԵՊՀ., 1979, էջ 231-232:
2. «Боги, брахмани, люди».М., "Наука", 1969.
3. **Гейзенберг В.**, «Физика и философия». Часть и целое. М., 1990.
4. **Кузнецов В. Г., Кузнецова И. Д.**, Философия: Учебник «Эмпиризм или рационализм?» Теорияпознания Иммануила Канта http://society.polbu.ru/kuznecov_philosophy/ch37_all.html
5. **Савченко В. П.**, Смагин, «Начала современного естествознания». Тезаурус. — Ростов-на-Дону В. Н., 2006.
6. Фромм Эрих: «Бегство от свободы», Издательство: АСТ, 2009 г.

Нелли Ароян

**Факультет философии и психологии ЕГУ
к.п.н., доцент кафедры социальной психологии**

Мари Аветисян

**Факультет философии и психологии ЕГУ
Лаборант кафедры социальной психологии**

ПРОБЛЕМА СТАТУСА ПСИХОЛОГИИ В СИСТЕМЕ ЕСТЕСТВЕННО-НАУЧНЫХ И ГУМАНИТАРНЫХ НАУК

***Ключевые слова:** статус психологии, естественные науки, эксперимент, гуманитарные сферы.*

В статье обсуждается статус психологии в естественно-научных и гуманитарных дисциплинах и подчеркивается важность рассмотрения проблем современной психологии, в частности, опасность развития искусственного сознания, виртуальной реальности, техники, информационной среды, а возникновение информационного общества привело к изменению сущности бытия, его целостности, трансформации ценностных ориентаций, что заметно отразилось на социокультурных процессах.

Nelli Haroyan
Faculty of Philosophy and Psychology, YSU
PhD, Associate Professor of the Department of Social Psychology
Mari Avetisyan
Faculty of Philosophy and Psychology, YSU
Research Assistant of the Department of Social Psychology

**THE PROBLEM OF THE STATUS OF PSYCHOLOGY IN THE SYSTEM OF NATURAL
SCIENCES AND HUMANITIES**

Key words: status of psychology, natural sciences, experiment, humanitarian spheres.

The article discusses the status of psychology, in the disciplines of natural sciences and humanities and highlights the importance of examining the current issues of modern psychology and particularly, the risk of developing of artificial consciousness, virtual reality, technology and information environment, as the emergence of the information society has led to the change of the essence of being, its integrity, the transformation of value orientations, which are significantly reflected in the socio-cultural processes.

**ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐԿԱԴՐԱՆՔ, ԹԵ՞ ԹԵՐԱՊԻԱ: ԿՐՈՆԱԿԱՆ
ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԹԵՐԱՊԵՎՏԻԿ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ
ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՏԵՍԱՆԿՑՈՒՆԻՑ**

Բանալի բառեր՝ հոգեբանական խնդիրներ, կրոն, հոգեթերապևտիկ միջամտություն:

Մինչև 22 տ-ը ես եղել եմ անհավատ, վարել մեղավոր կենսակերպ՝ խմել եմ, գողացել եմ, խուլիզանություններ արել, քնել եմ նկուղներում: Հարազատներս, հարևաններս, ուստիկանության աշխատակիցները նախատում էին ինձ, փորձում ուղղել, բայց ապարդյուն: Ես ինքս տանջվում էի իմ վիճակից, բայց ոչինչ չէի կարող անել: Ծանոթներիցս մեկը ինձ խորհուրդ տվեց օգնության համար դիմել Աստծուն: Եվ ահա, մի անգամ ես հուսահատ աղոթեցի. «Աստված իմ, աստված իմ, էթե դու գոյություն ունես, լսիր իմ ձայնը և ազատիր ինձ մեղքից»: Դա ինձ համար եղավ Աստծու գոյության ապացույց:

Մինչև 1953 թ. ես եղել եմ արեհատ: Բնավորությամբ շատ չոր էի ու պահանջկոտ: Աշխատում էի հիվանդանոցներից մեկում որպես գլխավոր բժիշկ և աշխատակիցներին համար հաստատել էի համարյա զինվորական կարգուկանոն: Ամուսնացա, ունեցա երկու երեխա, բայց նրանց շատ չէի սիրում: Կինս հեռացավ ինձնից: Ես շատ ծանր տարա դա... Սկսեցի շատ մտածել իմ մասին, ճանաչել ինքս ինձ: Եվ տեսա իմ մեջ բազմաթիվ թերություններ: Ես համոզեցի ինձ ազատագրվել դրանցից: Սակայն ուղղվել չկարողացա: Մի անգամ պատահաբար ծանոթացա երկու աղջիկների հետ, որոնք ինձ հրավիրեցին բապտիստների հավաքույթ... Ես որոշեցի մտնել: Եվ մտնելուն պես, լսեցի մեկը մյուսին սիրելու հորդորներ, կարդացի գրությունը. «Աստված սեր է» (Ա. Հովհաննես 4:8) [1, էջ 6]: Ինչ-որ բան կոտրվեց իմ ներսում, աչքերիս առաջ մի պահ անցավ ողջ կյանքս իր բոլոր խոցերով, և ես արտասովեցի, գնացի տուն և ջանադրաբար սկսեցի աղոթել, որպեսզի աստված ինձ հասկանա, ների և ընդունի: Տարի ու կես անց, 1954 թ., ես միանգամայն զիտակցաբար ընդունեցի ջրի մկրտություն... Ես ինձ զգում եմ ազատ,

քանզի ձերբազատվեցի արատներից և մշտապես վայելում եմ աստծու սերն ու պաշտպանությունը» [3, էջ 6]:

Քիչ չեն մարդիկ, ովքեր անկեղծորեն կարծում են, որ կրոնն օգնում է հաղթահարել հոգեբանական խնդիրները: Որպես ապացույց՝ նրանք վկայակոչում են բազմաթիվ դեպքերը, երբ տարբեր անձինք, ունենալով այնպիսի վարքային խնդիրներ, ինչպիսիք են՝ թմրանյութային, ալկոհոլային և այլ կախվածությունները, սեռական անչափավորությունը, քրեածին վարքը (գողություն, բռնություն և այլն), կարողացել են հաղթահարել դրանք՝ դարձի գալով դեպի Աստված: Նրանք հանել են իրենց «հին մարդը», ինչպես նշվում է Ավետարանում, և հագել՝ նորը, «որն Աստուծոյ պատկերին պէս ստեղծուած է՝ ճշմարտութեան արդարութիւնովը եւ սրբութիւնովը» (Եփեսացիս 4:22-24) [1, էջ 6]:

Այո, առաջին հայացքից տպավորությունը կարող է այնպիսին լինել, որ «բարձր բարոյական չափանիշներ» քարոզող կրոնական կազմակերպության մեջ մարդիկ վերջ են դնում իրենց նախկին «վատ սովորություններին» և, եթե կողմնորոշված լինենք սուկ դեպի արդյունքը, ապա կհանգենք այն հետևության, որ կրոնական կազմակերպությունն անում է այն, ինչ հոգեբերապետը կամ հոգեբան-խորհրդատուն պետք է աներ: Ի՞նչ տարբերություն՝ ի՞նչ ուժի կամ ու՞մ միջոցով է հաղթահարվում խնդիրը: Սակայն կա իսկապես տարբերություն:

Կրոնական կազմակերպություններում, որպես կանոն, խնդիրները հաղթահարվում են *հոգեբանական հարկադրանքի* միջոցով: Նորահավատի առջև դրվում են նախապայմաններ, որ որոշակի ժամանակահատվածում նա պետք է հաղթահարի «մեղավոր սովորությունները», այլապես «վերջին օրերի» ավարտին չի հասցնի իր վարքում մտցնել բոլոր այն անհրաժեշտ փոփոխությունները, որոնք նրան հնարավորություն կտան վերապրել «Աստծու բարկության օրը»: Իսկ հարկադրանքի այդպիսի և, ընդհանրապես, ցանկացած ձև, ինչպես նշում է Հորնին, ի գործ է կառուցողական էներգիային հաղորդելու ոչ կառուցողական, ավելին՝ ապակառուցողական ուղղվածություն: «Կասկած չկա, որ այդպիսի կարգապահական մեթոդները կարող են օգտակար լինել՝ անցանկալի գործոնները ճնշելու իմաստով, բայց դրանք, միանշանակ, վնասում են մեր անձնային աճին: Մենք դրանց կարիքը չենք զգում, քանզի տեսնում ենք ներքին ապակառուցողական ուժերից ձերբազատվելու լավագույն ուղին՝ վերաճելը դրանցից: Այդ նպատակին առաջնորդող ճանապարհը գիտակցության աճն է և ինքնահասկացումը:

Ինքնիմացությունը այստեղ ինքնանպատակ չէ, այլ ծառայում է ինքնաբուխ աճին խոչընդոտող ուժերից ձերբազատող միջոց», - գրում է Հորնին [5]: Թե որքանով են վերոնշյալ խնդրականները ներկայացված կրոնական խմբերում, որտեղ սովորեցնում են, որ սեփական սրտին վստահելը հիմարություն է, այն խորամանկ է և ապականված, ուր մարդիկ հատկանշվում են գերկախյալությամբ, բարձր տազնապայնությամբ, սեփական ուժերի հանդեպ անվստահությամբ (թե վստահությունն էլ կա, ապա գործնականում միայն որպես քարոզիչ), դատեք ինքներդ:

Կոնֆլիկտային ընտանեկան հարաբերությունները նույնպես նպաստավոր հող են ստեղծում կրոնական շարժումների «թերապևտիկ միջամտության» համար: Չունենալով ընտանեկան ճգնաժամերը հաղթահարելու անհրաժեշտ գիտելիքներ, անձնային որակներ և հմտություններ, կամ այն, ինչ ՌԷՎԹ-ում կոչվում է «բարձր ճգնաժամային հանդուրժողականություն», [6, էջ 7] շատերը փորձում են իրենց հոգեկան տառապանքը մեղմել խմիչքի, սեռական անչափավորության, թմրամոլության և այլ բացասական սովորությունների միջոցով, ումանք էլ կուլ են տալիս սեփական խնդիրները «հաջողությամբ հաղթահարելու»՝ կրոնական կազմակերպությունների առաջարկած «իմաստուն առաջնորդության» խայծը: Այսպես, ամուսինները վիճում են միմյանց հետ և հայտարարում, որ բաժանվում են իրարից: Հանկարծ, այդ պահին նրանց տան դուռը թակում են Եհովայի վկաները՝ ձեռքներին «Ընտանեկան երջանկության գաղտնիքը» վերնագրով գիրքը: Ամուսինները նրանց ներս են հրավիրում: Այ քեզ հրա՛ջբ... Ընտանիքը փրկված է: Վկաները նրանց հայտնում են ամուսնական տարաձայնությունները հաջողությամբ հարթելու բանալին: Ամուսինները համաձայնվում են «Աստվածաշնչի տնային ուսումնասիրություն» սկսել: Մի քանի ամիս անց նրանք մկրտվում են և ապրում ուրախ ու երջանիկ:

Դիտարկենք դեպք հենց «Ընտանեկան երջանկության գաղտնիքը» գրքից. «Իսպանիայում բնակվող մի տնային տնտեսուհի պատմում է. «Ընդամենը մեկ տարի էր, ինչ ամուսնացել էի, երբ մեր ընտանեկան կյանքում լուրջ պրոբլեմներ առաջ եկան»: Պարզվեց, որ ինքն ու ամուսինը ընդհանուր շատ քիչ բան ունեին և, չհաշված վեճերը, հազվադեպ էր պատահում, որ գրուցեին իրար հետ: Թեպետ արդեն փոքրիկ աղջիկ ունեին, բայց որոշել էին ամուսնալուծվել: Դեռ չէին հասցրել այդ քայլին դիմել, երբ ամուսիններին խորհուրդ տրվեց ծանոթանալ Աստվածաշնչին: Իմանալով, թե ինչ խորհուրդներ է Սուրբ Գիրքը պարունակում

ամուսնացած անհատների վերաբերյալ՝ նրանք որոշեցին դրանք գործի դնել կյանքում: Շատ ժամանակ չէր անցել, երբ այդ ամուսիններն արդեն կարող էին հանդարտ ու խաղաղ հաղորդակցվել իրար հետ. Երջանկությունը, ի վերջո, մուտք էր գործել իրենց փոքրիկ ընտանեկան օջախը» [2, էջ 6]:

Ճիշտ է, լինում են, իհարկե, դեպքեր, երբ ամուսնական խնդիրները խորը կոնֆլիկտաձին հիմքեր չեն ունենում և, «Աստվածաշնչի իմաստուն առաջնորդությամբ», զույգին իսկապես հաջողվում է հաղթահարել իրենց տարաձայնությունները և կանխել ամուսնալուծությունը: Մակայն, օրինակ, Եհովայի վկաների շրջանում կատարած մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «այն, որ աստված միավորեց մեկ լծի տակ, թող մարդը չբաժանի» կամ «Եհովան ատում է ապահարգանք» սկզբունքները, որոնք հիմնավորվում են ամուսնալուծությունների թվացյալ կանխարգելիչ նշանակությամբ, իրականում, չեն չեզոքացնում խնդիրը, այլ միտված են շոյելու կոնֆլիկտող ամուսինների տագնապներն ու անվճռականությունը՝ համարժեք լուծում տալու իրենց հարաբերություններում առկա ճգնաժամին, երբ համատեղ կյանքն արդեն բացահայտել է միմյանց միջև հոգեբանական անհամատեղելիությունը, ինչպես նաև օբյեկտիվորեն գոյություն ունեցող այլ անհամապատասխանություններ: Այդ «սկզբունքները» օգնում են նորահավատներին՝ ապաստան գտնել իրականության ժխտման և ռացիոնալիզացիայի պաշտպանական մեխանիզմների մեջ, որոնց գործառնության դեպքում, նրանք, խնդիրները լուծելու փոխարեն, պարզապես շրջանցում են դրանք՝ ջանալով, ինչպես վկաներն են սիրում ասել, «չկենտրոնանալ խնդիրների վրա»: Նման միտումները, այսպես ասենք, պարզապես ստիպում են կոնֆլիկտող ամուսիններին իրավաբանորեն չբաժանվել՝ այն դեպքում, երբ դրան հանգեցնող ներհոգեկան շարժիչ ուժերը շարունակում են պահպանել իրենց կենսունակությունը: Մտացվում է այնպես, որ վարքի մակարդակում, կարծես, ամեն ինչ կարգին է, մինչդեռ ներհոգեկան պլանում խնդիրները շարունակում են հանդես գալ նույն սրությամբ: Այդ երկատվածությունն էլ, իր հերթին, անխուսափելիորեն հանգեցնում է տարաբնույթ հոգեբանական խնդիրների:

Կրոնը հաճախ միայն թմրեցնում է ներքին հակասությունների հետևանքով առաջացող հոգեկան տառապանքը, և անգիտակցական մակարդակում կոնֆլիկտը պահպանվում է: Հասկանալու համար կրոնի միջոցով «մեղավոր վարքից ազատագրված» և հոգեթերապևտիկ միջա-

մտության արդյունքում իր ներքին խնդիրները հաղթահարած մարդկանց տարբերությունները՝ դիտարկենք օրինակ: Կրոնավորը, եթե նախկինում ունեցել է, ասենք, խաղամոլության խնդիր, նախընտրում է հեռու մնալ այն վայրերից, որտեղ կան բուքմեյքերական գրասենյակներ, քանզի կարող է տրվել գայթակղությանը: Նա գիտի, որ «խորամանկ է սիրտն ամենից ավելի և ապականված» և, որ սատանան «վարպետ մոլորեցնող է», ուստի նախընտրում է հեռու մնալ ցանկացած իրադրությունից, որոնք, նրա կարծիքով, հղի են մեղք գործելու հնարավորությամբ: Իսկ ահա հոգեթերապևտիկ միջամտությամբ խաղամոլությունը հաղթահարած մարդը կարող է հանգիստ անցնել բուքմեյքերական գրասենյակի կողքով, անգամ մտնել այնտեղ, զարեջուր խմել, ֆուտբոլ դիտել և դուրս գալ՝ առանց տրվելու գայթակղությունների, քանզի նա թերապևտիկ աշխատանքի արդյունքում հասկացել է ինքն իրեն, գիտակցել «գայթակղության» առաջ իրեն անգոր դարձնող, կոնկրետ իրեն հատուկ ներքին ապակառուցողական ուժերի էությունը և, ճանաչելով խաղամոլությանը տրվելու իր իռացիոնալ հակումների մասին «ճշմարտությունը», ազատագրվել դրանցից: Ինչ վերաբերում է կրոնի միջոցով իրեն թմբեցրած ներոտիկին, նա, ըստ էության, չի հաղթահարել իր ներքին խնդիրները, չի գիտակցում իրեն որպես անհատականություն, խիստ ընդհանրացված պատկերացումների ունի «մեղքի» մասին և գլխավորապես այն բացատրում է մարդկային անկատարությամբ: Նա ինքնօտարացված է և անօգնական: Ուստի պատահական չէ, որ նա «հայր» է փնտրում: Նրան պետք է հոգ տանել, գուրգուրել, հուշել իր անելիքը, վախեցնել պատիժներով, հուսադրել ապագայով: Ահա, թե ինչ է նշում Ֆրոյդը այս կապակցությամբ. «...Եթե մարդը մի կողմ նետի գերհոգատար հայրական աստծու պատրանքը, եթե նա գիտակցի իր միայնությունը և տիեզերքում իր աննշան լինելը, ապա կնմանվի երեխայի, որը լքել է իր հայրական տունը: Բայց մարդկային անհատականության զարգացման խնդիրը հանդիսանում է հենց այդ ինֆանտիլ կախվածության հաղթահարումը: Մարդը պետք է սովորի գործ ունենալ իրականության հետ: Եթե նա հասկանա, որ, սեփական ուժերից բացի, չի կարող որևիցե այլ բանի վրա հենվել, ապա կսովորի դրանք ճիշտ տնօրինել: Միայն և միայն ազատ մարդը՝ մարդը, որն ազատվել է հեղինակությանը իռացիոնալ ենթարկվածությունից, այն իշխանությունից, որը նրան միաժամանակ և՛ սպառնում է, և՛ պաշտպանում, կարող է ճիշտ գործադրել բանականությունը և հասկանալ իր տեղը անձայրա-

ծիր տիեզերքում, չտրվելով պատրանքների և զարգացնելով իրեն ընձեռված հնարավորությունները: Միայն այդ դեպքում մենք անձնապես կաճենք ու կդադարենք երեխաներ լինելուց՝ վախվորած և հեղինակություններից կառչած, միայն այդ դեպքում մենք կհամարձակվենք ինքնուրույն մտածողության, ստեղծագործական որոնումների, ներքին ազատության և ինքներս մեզ հետ ներդաշնակության...» [4, էջ 6]:

Մի բան պարզ է: Կրոնական ներգործությունը առաջին հերթին բխում է կոնկրետ կրոնական կազմակերպության ռազմավարական շահերից և այստեղ թերևս պարզամտություն լինի կարծելը, որ ղեկավար մարմինը հետապնդում է խմբի անդամների հոգեբանական առողջության ամրապնդման նպատակներ: Ներոտիզմը կրոնական ոգու և իշխանության պահպանման անկյունաքարն է: Ուստի, բնական է, որ կրոնական ներգործության դեպքում խնդիրները արմատապես չեն լուծվում, այլ, պարզապես, փոխարինվում են նորերով, իսկ վարքի մակարդակում փոփոխությունները խիստ կոսմետիկ բնույթ են կրում: Ընդ որում, մշտապես առկա է վտանգը, որ «շունը կարող է ետ դառնալ դեպի իր փսիսածը, և լվացված խոզը՝ ցեխի մեջ թավալվելուն» (Բ. Պետրոս 2:22) [1, էջ 6]: Ճիշտ է, «ճշմարտության խոսքը» սկզբնապես գուցե մխիթարում է ընկճված և հուսահատ վիճակում գտնվող մարդկանց, սակայն կրոնական ճշմարտությունների հաղորդած «թերապևտիկ» էֆեկտը սոսկ ժամանակավոր երևույթ է: Վաղ թե ուշ ավելի նոր ուժով են մուլեգնում «ողջամիտ բացատրությունների» միջոցով նիրհեցված ներքին հակասությունները, և օբյեկտիվ իրականության բացասական գործոններին տրվող վարքային պատասխանները դառնում են է՛լ ավելի ապակառուցողական:

Այստեղից էլ հետևում է հոգեբանական ծառայությունների քարոզչության անհրաժեշտությունը: Թե ինչպիսի ինտենսիվությամբ են իրականացվում կլինիկական հոգեբանության տեսության և պրակտիկայի ոլորտում հետազոտությունները, որքանով են արդյունավետ աշխատում հանրային առողջության ամրապնդման ինստիտուտները և որքանով բնակչությունն ունի ժամանակակից միջազգային չափորոշիչներին համապատասխանող որակյալ հոգեբանական աջակցություն ստանալու հնարավորություն, դա էլ կկանխորոշի, թե տվյալ հասարակության անդամները ինչպես կփորձեն լուծել սեփական հոգեբանական խնդիրները՝ կրոնական ներգործություն ենթադրող ապակառուցողական ուղիների, թե՞ ներքին ազատության արժեքի վրա կառուցված հոգեթերապևտիկ միջամտության:

Գրականություն

1. Աստվածաշունչ. Արարատ թրգմ.
2. Հնտանեկան երջանկության գաղտնիքը, հրատ. WATCHTOWER BIBLE AND TRACT SOCIETY OF NEW YORK, с. 11
3. **Угринович Д. М., Яблоков И. Н.**, Изучение религиозного сознания верующих в социалистическом обществе и задачи атеистического воспитания. — Общественная психология и коммунистическое воспитание. М., 1967, с. 158–159.
4. **Фромм Э.**, Психоанализ и религия, изд. Сумерки богов. М., ”Полиздат”, 1990, пер. С английского А. А. Яковлева, стр. 75.
5. **Хорни К.**, Невроз и личностный рост, Восточно-Европейский институт психологического анализа Санкт-Петербурга 1997, стр. 19.
6. Dryden, Windy. Windy&Branch Rhena, The fundamentals of rational emotive behaviour therapy : a training handbook – 2nd ed. 2008, p. 8.

Торосян Ашот Робертович

Факультет психологии и социальной педагогики ЕГПУ

ПСИХОЛОГИЧЕСКОЕ ПРИНУЖДЕНИЕ ИЛИ ТЕРАПИЯ. РАЗЛИЧИЯ МЕЖДУ РЕЛИГИОЗНЫМ ВОЗДЕЙСТВИЕМ И ПСИХОЛОГИЧЕСКИМ ВМЕШАТЕЛЬСТВОМ В ПРЕОДОЛЕНИИ ПСИХОЛОГИЧЕСКИХ ПРОБЛЕМ

***Ключевые слова:** психологические проблемы, религия, психотерапевтическая интервенция.*

Существует широко распространенное убеждение, что с точки зрения преодоления психологических проблем религиозное воздействие по сути ни чем не отличается от психологического вмешательства. В статье автор пытается представить их существенные различия.

Ashot Torosyan

Faculty of Psychology and Social pedagogy, ASPU

PSYCHOLOGICAL COMPULSION OR THERAPY. THE DIFFERENCES BETWEEN RELIGIOUS IMPACT AND PSYCHOLOGICAL INTERVENTION IN OVERCOMING OF PSYCHOLOGICAL PROBLEMS

***Key words:** psychological problems, religion, psychotherapeutic intervention.*

There is a widespread belief that in terms of overcoming of psychological problems, there are no any differences between religious impact and psychological intervention. In the article the author tries to present their significant differences.

Խաչատուր Գասպարյան
ԵՊԲՀ բժշկական հոգեբանության ամբիոնի վարիչ, հ.գ.թ., դոցենտ
kvgaspar@yahoo.com

Անահիտ Տեր-Ստեփանյան
ԵՊԲՀ բժշկական հոգեբանության ամբիոնի ասիստենտ

ԿՈԳՆԻՏԻՎ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ ՇԻԶՈՖՐԵՆԻԱՅՈՎ ՀԻՎԱՆՂՆԵՐԻ ՄՈՏ RBANS ՄԵԹՈՂԻԿԱՅԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

Բանալի բառեր՝ RBANS մեթոդիկա, շիզոֆրենիա, կոգնիտիվ ֆունկցիաներ:

Ներածություն: Վերջին ժամանակաշրջանում մեծ նշանակություն ունի կոգնիտիվ դիսֆունկցիաների ուսումնասիրությունը, քանի որ այն դիտվում է որպես շիզոֆրենիայի դրսևորման հիմնական հոգեբանական առանձնահատկություն, բացի այդ կոգնիտիվ գործունեության լավացումը հանդիսանում է շիզոֆրենիայի բուժման հիմնական կլինիկական նպատակներից մեկը [11, 13]: Դեռևս 1974 թ. իրականացված հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ ճանաչողական գործընթացների խանգարումները մեծ հետք են թողնում անձի նորմալ գործառնության վրա: Միևնույն ժամանակ անդրադառնում են հիվանդության պատկերին, առանձնացնելով ինքնուրույն կենսագործունեության անցնելու հիմնական դժվարությունները՝ սոցիալական և աշխատանքային անլիարժեքության, մասնագիտական պարտականությունների մեջ թերացման, ամենօրյա կենցաղում անհրաժեշտ գործունեության խաթարում [4]:

Չնայած մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեցող շիզոֆրենիայով հիվանդների հոգեախտորոշիչ հետազոտությունների տվյալներին, այնուամենայնիվ, այս հիվանդության պաթոմորֆոզը և արդի հետազոտությունների ուսումնասիրությունները պահանջում են առանձին հոգեկան գործընթացների գործառնության առանձնահատկությունների ճշգրտում և հստակեցում [5, 6]: Այդ իմաստով Հայաստանում նույնպես անհրաժեշտ են համապատասխան ուսումնասիրություններ:

Նշված նախադրյալները պայմանավորեցին շիզոֆրենիայով հիվանդների պաթոհոգեբանական հետազոտության անցկացման անհրա-

ժեշտությունը: Տարբեր հեղինակներ ընդգծում են, որ շիզոֆրենիայի հոգեախտորոշման խնդիրը մինչ օրս մնում է կարևորներից մեկը ժամանակակից բժշկական հոգեբանության և հոգեբուժության պրակտիկայում: Հոգեախտորոշման բարդությունը կապված է տվյալ պաթոլոգիայի ժամանակ զարգացող խանգարումների տարանջատման հետ, ինչպես նաև նմանատիպ կլինիկական դրսևորումներ ունեցող այլ հիվանդություններից տարբերակման հետ [1, 8, 9]: Բացի այդ կարևոր նշանակություն ունի նաև պաթոհոգեբանական հետազոտությունը, որն էապես մեծացնում է տարբեր տիպի պաթոլոգիաների ժամանակ հիվանդների հոգեկան գործառույթների վիճակի մասին պատկերացումները [2, 3, 7]:

Հայտնի է Հայաստանում Ա. Ազիզյանի և համահեղինակների կողմից իրականացված շիզոֆրենիայով հիվանդների կոգնիտիվ ֆունկցիաների ուսումնասիրությունը RBANS թեստի միջոցով: Նշված հետազոտության արդյունքները հաստատում են, որ ի տարբերություն հոգեպես առողջ հետազոտվողների, շիզոֆրենիայով հիվանդների կոգնիտիվ ֆունկցիաները ծայրահեղ վատթարացած են: ԱՄՆ-ի և Հայաստանի շիզոֆրենիայով հիվանդների կոգնիտիվ ֆունկցիաների տարբերությունների ուսումնասիրության արդյունքների համաձայն հայաստանաբնակ հիվանդների մոտ նկատվել է լեզվական ճկունության և ուշադրության դեֆիցիտի ավելի բարձր ցուցանիշ, քան ԱՄՆ-ի շիզոֆրենիայով հիվանդ հետազոտվողների մոտ [10]:

Նյութը և մեթոդները

Հետազոտությունը անց է կացվել Նորքի հոգեբուժական բժշկական կենտրոնում: Հետազոտվողների հիմնական խումբը կազմում են պարանոիդ շիզոֆրենիա ախտորոշում ունեցող 46 հիվանդներ՝ 18-50 տարեկան, 26 տղամարդ և 20 կին: Ստուգիչ խումբը կազմված է հոգեպես առողջ 46 մասնակիցներից՝ 18-50 տարեկան, 16 տղամարդ և 30 կին: Ստուգիչ խմբի հետազոտությունը անց է կացվել Մ. Հերացու անվ. Երևանի պետական բժշկական համալսարանում:

Կիրառել ենք Փիրսոն Էդուրթեյշն Կորպորացիայի Նեյրոհոգեբանական վիճակի գնահատման կրկնվող թեստ /RBANS/:

Այս թեստի միջոցով ուսումնասիրվում են մարդու նեյրոկոգնիտիվ ֆունկցիաները, այն բաղկացած է հետևյալ ենթաթեստերից՝

- Անմիջական հիշողություն, ներառում է ցուցակից սովորելը, պատմության վերհիշում,

- Տեսողատարածական/կառուցողական, ներառում է պատկերի կրկնօրինակում, գծերի կողմնորոշում,
- Լեզվական, ներառում է նկարի անվանում, խոսքի ճկունություն
- Ուշադրություն, ներառում է թվերի հերթականություն, կողավորում,
- Հետաձգված հիշողություն, ներառում է ցուցակի վերհիշում, ցուցակի ճանաչում, պատմության վերհիշում, պատկերի վերհիշում:

Յուրաքանչյուր սանդղակ բաղկացած է կոնկրետ առաջադրանքներից, վերջում հաշվարկվում են ընդհանուր միավորները և համադրվում սանդղակային աղյուսակների հետ [12]:

Արդյունքները

Արդյունքների մշակման նպատակով կիրառել ենք վիճակագրական վերլուծության մեթոդը, օգտագործելով SPSS 16.0 for Windows 2007 ծրագիրը, մասնավորապես ուշադրություն դարձնելով կորելյացիոն վերլուծություններն ըստ Փիրսոնի և Սպիրմանի:

RBANS-ի ընդհանուր միավորները, ցուցանիշային միավորները և ենթաթեստերի միավորները ընդհանրացվել են և նույնպես ենթարկվել վիճակագրական վերլուծության: Շիզոֆրենիայով հիվանդների անամիջական հիշողության միջինացված միավորները (67.52 ± 19.02), համեմատած այլ ենթաթեստերի միավորների, ցածր են: Հետազոտվողների 71.6%-ը (33 հիվանդ) հավաքել են անամիջական հիշողության միջինից ցածր միավորներ, ինչը խոսում է կարճատև հիշողության վատթարացման մասին:

Մասնավորապես, թեստի անցկացման ժամանակ նրանք դժվարանում էին սովորել և հիշել ցուցակից չորս անգամ ընթերցված 10 բառերը, վերհիշել երկու անգամ ընթերցված կարճ պատմությունը:

Տեսատարածական ընկալման միավորները (78.43 ± 18.78) առավել բարձր են, համեմատած մնացած այլ սանդղակների միավորների հետ: Հետազոտվողների 53.5%-ը (20 հիվանդ) հավաքել է տեսատարածական ընկալման ենթաթեստից միջին և միջինից բարձր միավորներ (80+), ինչը ենթադրում է, որ պատկերի կրկնօրինակման և գծերի կողմնորոշման առաջադրանքները ի տարբերություն մյուս ենթաթեստերի առաջադրանքների ավելի բարձր ցուցանիշներ ունեն:

Լեզվական ճկունության միջինացված միավորները համեմատաբար ցածր են (69.86 ± 15.07): Հետազոտվողների 78.1%-ի (35 հիվանդ)

միավորները միջինից ցածր են, ինչը վկայում է նրանց մոտ լեզվական ճկունության ցածր մակարդակի մասին: Նրանք դժվարանում էին անվանել ցուցադրվող նկարները և կատարել խոսքի ճկունության առաջադրանքը, որի ժամանակ անհրաժեշտ է 60 վայրկյանի ընթացքում հիշել հնարավորինս շատ մրգերի և բանջարեղենի անուններ: Այս առաջադրանքի ընթացքում հիշողության պրոցեսները դանդաղում են, ավելանում են կրկնողությունները:

Ուշադրության միավորները (61.39 ± 12.25) համեմատաբար ցածր են: Հետազոտվողների 91.2%-ը (42 հիվանդ) հավաքել է միջինից ցածր միավորներ, ինչը վկայում է ուշադրության վատթարացման մասին: Հիվանդները կողավորման առաջադրանքը և դանդաղ, և սխալներով էին կատարում, ինչը վկայում է կենտրոնացման դժվարությունների մասին, և թվով քիչ նիշերի լրացնելը վկայում է ուշադրության համեմատաբար փոքր ծավալի մասին:

Ցածր միավորներ են նկատվում նաև հետաձգված հիշողության ենթաթեստից (70.63 ± 19.52): Հետազոտվողների 60.8%-ը (28 հիվանդ) հավաքել է միջինից ցածր միավորներ, ինչը փաստում է տեղեկատվության թույլ պահպանման և վերարտադրման մասին: Հիմնականում հիվանդները դժվարանում էին կատարել ցուցակի վերհիշման, ցուցակի ճանաչման, պատմության վերհիշման, պատկերի վերհիշման առաջադրանքները: Ենթադրում ենք, որ հետաձգված հիշողության ցածր ցուցանիշները պայմանավորված են մի կողմից անմիջական հիշողության և մյուս կողմից ուշադրության ցածր ցուցանիշներով:

Ցուցանիշային ընդհանուր միավորը կազմում է 63.86 ± 14.75 , ինչը, համաձայն թեստի համադրման աղյուսակների, համապատասխանում է 3.91 ± 6.98 տոկոսային աստիճանի:

Այսպիսով, ստուգիչ խմբում, ի տարբերություն հիմնական խմբի, անմիջական և հետաձգված հիշողության միավորները բարձր են (համապատասխանաբար 106.63 և 101.82), բարձր են նաև տեսատարածական ընկալման միավորները (105.26 ± 14.52): Համեմատելով այս ենթատեստերի միավորների հետ, ավելի ցածր են լեզվական ճկունության (86.47 ± 15.29) և ուշադրության (82.23 ± 14.15) միավորները: Ցուցանիշային ընդհանուր միավորը կազմում է 94.97 ± 13.04 , իսկ տոկոսային աստիճանը՝ 40.6 ± 26.37 :

Ըստ ուսումնասիրված սուբթեստային գործոնների միջև կորելյացիոն վերլուծությունների անմիջական հիշողության և հետաձգված հի-

շողության միջև ակնհայտ է նշանակալի ուժեղ կապ ($r=.738$ ", $p<0.001$): Վերջինս նշանակում է, որ անմիջական հիշողությունը սերտորեն կապված է հետաձգված հիշողության հետ, և շիզոֆրենիայով հիվանդների մոտ վատթարացած անմիջական հիշողությունը հանգեցնում է նաև հետաձգված հիշողության վատթարացմանը: Այսպես, օրինակ՝ եթե հիվանդը բառերի ցուցակը կամ պատմությունը չի կարողանում լավ հիշել և անմիջապես վերարտադրել, որոշ ժամանակ անց դրանց վերարտադրումը ևս թույլ է լինում: Կորելյացիոն կապը ուժեղ է նաև լեզվական ճկունության և անմիջական հիշողության միջև ($r=.570$ ", $p<0.001$), ինչպես նաև լեզվական ճկունության և հետաձգված հիշողության միջև ($r=.558$ ", $p<0.001$): Դա պայմանավորված է նրանով, որ լեզվական ճկունության առաջադրանքները սերտորեն կապված են հիշողության հետ, օրինակ՝ պատկերները անվանելու համար հետազոտվողը պետք է ճանաչի և հիշի առարկայի, կամ մրգերի ու բանջարեղենների անունները, որը նույնպես պահանջում է հիշողություն: Որքան թույլ է հիշողությունը, այնքան դա բացասաբար է ազդում լեզվական ճկունության վրա:

Կորելյացիոն դրական ուժեղ կապ է նկատվում անմիջական հիշողության և ուշադրության միջև ($r=.498$ ", $p<0.001$): Սա խոսում է այն մասին, որ ուշադրության և անմիջական հիշողության գործընթացները փոխազդում են միմյանց վրա. այսպես, ուշադրությունը կենտրոնացնելու դժվարությունները հաճախ ազդում են անմիջական հիշողության վրա և հանգեցնում վերջինիս վատթարացմանը: Ուշադրության առաջադրանքները ևս պահանջում են անմիջական հիշողության տարրեր, օրինակ՝ կողավորման առաջադրանքները կատարելիս, որքան շատ սիմվոլ և իրենց համապատասխան թիվ մտապահվի, այնքան ավելի շատ կկարողանա հետազոտվողը կողավորել 90 վայրկյան ժամանակահատվածում: Ուշադրության մյուս առաջադրանքը ևս սերտորեն կապված է անմիջական հիշողության հետ, օրինակ՝ թվերի հերթականության կրկնողությունը, թույլ անմիջական հիշողության դեպքում, նույնպես դժվարանում է:

Եզրակացություն: Համաձայն RBANS մեթոդիկայից ստացված արդյունքների, շիզոֆրենիայով հիվանդների մոտ ենթաթեստերի միավորները և ընդհանուր ցուցանիշային միավորը զգալիորեն ցածր են՝ ի տարբերություն առողջ մասնակիցների մոտ ստացված միավորների. միավորները տատանվում են 16.61-39.11 միջակայքում, առանց ստան-

դարս 2եղումների հաշվառման: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ.

- Հետազոտությունից ստացված տվյալները կարող են օգտագործվել Հայաստանում որպես հոգեախտորոշման նորմատիվային ցուցանիշներ:
- Մեթոդիկան ունի նաև կիրառական նշանակություն. այն կարելի է կիրառել շիզոֆրենիայով հիվանդների հետ ինտերվենցիայից առաջ և հետո, կոգնիտիվ ֆունկցիաների փոփոխությունները գրանցելու նպատակով:

Գրականություն

1. **Александровский Ю. А.**, Энциклопедия психиатрии. – М.: РЛС-2004, 2003. – 544 с.
2. **Бурлачук Л. Ф.**, Психодиагностика. – СПб.: Питер, 2003. – 351 с.
3. **Карвасарский Б. Д.**, Клиническая психология. – СПб.: Питер, 2002. – 960 с.
4. **Поляков Ю. Ф.**, Патология познавательной деятельности при шизофрении. Москва «Медицина» 1974г. стр. 10-135
5. **Пушкина Т. П.**, Медицинская психология. – (Методические указания). /Автор-составитель Т. П. Пушкина. – Новосибирск: Научно-учебный центр психологии НГУ, 1996. стр. 38.
6. Руководство по психиатрии / Под ред. А. С. Тиганова. – М.: Медицина, 1999. – т. 1. – 712 с.
7. **Собчик Л. Н.**, Психология индивидуальности. Теория и практика психодиагностики. – СПб.: Речь, 2003. – 624 с.
8. **Ткаченко С. В., Бочаров А. В.**, Нейропсихологический анализ дефекта при шизофрении и аффективных психозах // Шизофренический дефект / Под общ. ред. М. Н. Кабанова. – СПб.: Психоневрол. ин-т им. В. М. Бехтерева, 1991. – с. 95-123.
9. Шизофрения / А. П. Коцюбинский, А. И. Скорик, И. О. Аксенова и др. // СПб.: Гиппократ+, 2004. – 336 с.
10. **Azizian A., Yeghyan M., Ishkhanyan B., Manukyan Y., Khandanyan L.**, (2011). Clinical validity of the Repeatable Battery for the Assessment of Neuropsychological Status among patients with schizophrenia in the Republic of Armenia. *Archives of Clinical Neuropsychology*, 26(2), 89-97.
11. **Green M. F.**, What are the functional consequences of neurocognitive deficits in schizophrenia? *American Journal of Psychiatry*. 1996;153:321-330. [[PubMed](#)]
12. Randolph C: RBANS Manual - Repeatable Battery for the Assessment of Neuropsychological Status. San Antonio, TX: The Psychological Corporation (Harcourt); 1998.
13. **Sharma T.**, Quetiapine—efficacy in different domains. *EurNeuropsychopharmacol* 2001;11(Suppl 4) : S385-90

Гаспарян Х. В.
Зав. кафедрой медицинской психологии ЕГМУ, к.п.н., доцент
Тер-Степанян А. Г.
Ассистент кафедры медицинской психологии ЕГМУ

**ИССЛЕДОВАНИЕ КОГНИТИВНЫХ ФУНКЦИЙ С ПОМОЩЬЮ RBANS
МЕТОДИКИ У БОЛЬНЫХ ШИЗОФРЕНИЕЙ**

Ключевые слова: методика RBANS, шизофрения, когнитивные функции.

Статья посвящена проблеме диагностики когнитивных функций больных шизофренией. В статье представлены результаты исследования когнитивных функций больных и психически нормальных испытуемых с помощью методики RBANS, которая выявляет такие когнитивные функции, как кратковременная и долговременная память, визуальное-пространственное восприятие, внимание и речевая гибкость.

Gasparyan KH. V.
Head of the Department of Medical Psychology, Phd, Associate Professor of YSMU
Ter-stepanyan A.G.
Assistant of the Department of Medical Psychology, YSMU

**STUDY OF COGNITIVE FUNCTIONS WITH RBANS METHOD
AMONG PATIENTS WITH SCHIZOPHRENIA**

Key words: method RBANS, schizophrenia, cognitive functions.

The article refers to the diagnosis of cognitive functions of patients with schizophrenia. It represents the results of study of cognitive functions of sick and psychologically normal participants with the help of the RBANS method which reveals cognitive functions such as Immediate and Delayed Memory, Visuospatial/Constructional, Attention and Language.

Մարի Ավետիսյան

*ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
սոցիալական հոգեբանության ամբիոնի ավագ լաբորանտ
avemari88@gmail.com*

Նելլի Հարոյան

*ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
սոցիալական հոգեբանության ամբիոնի դոցենտ, հ.գ.թ.
n.haroyan@mail.ru*

ԱՌՏԱԲԱՆԱԿԱՆ ՎՇՏԻ ՖԵՆՈՄԵՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

***Բանալի բառեր՝** հոգեկանի գիտելիքի ձևեր, ֆենոմենոլոգիական վեր-
լուծություն, կորուստ, ախտաբանական վիճույթ:*

Հոդվածում քննարկել ենք հոգեկանի վերաբերյալ գիտելիքի երեք ձևերը և հիմնավորել ախտաբանական վշտի ուսումնասիրման մեջ ֆենոմենոլոգիական վերլուծության առաջնայնությունը որպես որակական հետազոտության մեթոդ:

Կլինիկական հոգեբանության և հոգեթերապիայի բնագավառում վերջին տասնամյակում առանձնակի ուշադրություն է հատկացվում նշանակալի անձի կորստին որպես հոգետրավմա և բարդեցված վշտի խանգարման ուսումնասիրմանը և հոգեթերապևտիկ օգնությանը: Նըշված խնդիրն ուսումնասիրող կլինիկական հոգեբանները փորձում են մշակել դրա հետազոտման մեթոդական արդյունավետ եղանակներ: Եվ վերջին ժամանակաշրջանում նշված խնդրի հետազոտական պարադիգմայի վերաբերյալ քննարկումները հաստատում են այնպիսի մեթոդաբանությունների կարևորությունը, որոնք ունեն բավականաչափ սենզիտիվություն, որպեսզի թույլ տան ուսումնասիրել անձի վերապրած սուբյեկտիվ փորձը և միևնույն ժամանակ կհամապատասխանեն գիտականության չափանիշներին [3]:

Գիտական հետազոտության մեթոդի ընտրության հիմքում ընկած են գիտական հետազոտությունների իրականացման և գիտության զարգացման հայեցակարգերը՝ կապված իրականության և երևույթների ճանաչման, ճշմարտության և իմաստի բնութագրման հետ: Այսպես, պոզիտիվիստական հայեցակարգի համաձայն, իրականությունը գոյություն ունի մարդու մտքից և Ես-ից անկախ և այն ունի իր առանձնահատուկ

հատկանիշներն ու ներքին օրինաչափությունները: Եվ այս հայեցակարգից ելնելով՝ գիտական հետազոտությունը ենթադրում է տրամաբանության օրենքների կիրառում, որը թույլ է տալիս համընդհանուր օրենքներ ու օրինաչափություններ բացահայտել: Այսինքն, այս դեպքում մենք ձեռք ենք բերում «օբյեկտիվ» գիտելիքներ, որոնք արտացոլում են ուսումնասիրվող օբյեկտի նշանակությունը, այլ ոչ թե հանդիսանում են օբյեկտին վերագրված որոշակի իմաստներ: Գիտական այս հարացույցն ընկած է բնական գիտությունների հիմքում, որի համաձայն՝ կատարելով գիտափորձ, մենք կարող ենք բազմիցս ստուգել ստացված արդյունքների ճշգրտությունը:

Հոգեբանության մեջ ճանաչողության օբյեկտը և սուբյեկտը համընկնում են և մենք գործ ունենք հումանիտար գիտելիքի հետ, որտեղ հետազոտությունը միայն գիտափորձի մեթոդով սահմանափակում է իմացության գործընթացը, իսկ որոշ դեպքերում դառնում է ոչ կիրառելի: Այդ իսկ պատճառով այսօր հոգեբանական գիտության՝ հատկապես կլինիկական հոգեբանության մեջ մեծ կիրառություն ունեն ֆենոմենոլոգիական և էքզիստենցիալ հայեցակարգերը:

Է. Հուսսերլի ֆենոմենոլոգիական մոտեցմամբ մարդու գիտակցության բովանդակությունների էական ճշմարտությունները հասկանալու համար հարկավոր է վերացարկվել առօրյա նյութական իրականությունից՝ մաքուր ռեֆլեքսիայի և մտքի օգնությամբ: Սակայն Մ. Հայդեգերը հակադրվեց՝ նշելով, որ մարդը չի կարող վերացարկվել աշխարհից, քանի որ մարդուն բնորոշ է «կեցությունն աշխարհում» և նրա միտքը շրջապատված է մշակութային և նյութական իրականությունով, որում ապրում է անձը: Նա էքզիստենցիալիստական դիրքերից դիտարկեց խնդիրը՝ նշելով, որ ճշմարտությունը հարաբերական է: Եվ եթե օբյեկտիվիստական տեսանկյունից հետազոտողն ընդամենը գործիք է, ով բացահայտում է ուսումնասիրվող երևույթները՝ նվազագույնի հասցնելով հետազոտողի դերն այդ արդյունքների մեկնաբանման մեջ, ապա հարաբերականության (ռելյատիվիզմի) մոտեցմամբ գիտելիքը հետազոտողի և հետազոտվողի փոխազդեցության արդյունքում է ձևավորվում: Հետազոտողի խնդիրը անձի մտքերի, վերաբերմունքների, զգացմունքների ճշգրիտ ներկայացումն է [3]:

Հոգեբանության մեջ, որպես հումանիտար գիտություն, մարդու հոգեկան իրականությունը ճանաչելու և հոգեկանի վերաբերյալ գիտելիքի 3 տեսակ է առանձնացնում Կ. Ռոջերսը, որը նա համապատասխանաց-

րել է հոգեբանության ուղղություններին՝ *օբյեկտիվ գիտելիք*, որը Ռոջերսը համապատասխանեցրել է վարքաբանական ուղղությանը և դիտարկում է վարքը որպես օբյեկտիվ երևույթ, որը կարելի է հետազոտել օբյեկտիվ մեթոդներով և ակնառու կերպով դիտել ստացված արդյունքները: *Սուբյեկտիվ գիտելիք*, ըստ որի ճանաչողության համար մենք ստեղծում ենք սուբյեկտիվ վարկածներ, որոնք ստուգելու և ճշգրտելու համար մենք հիմնվում ենք մեր ներքին փորձի և ապրումների վրա՝ որպես արտաքին և ներքին իրադարձությունների սուբյեկտիվ փոխազդեցության արդյունք: Ճանաչողության այս ձևը մարդու առօրյա կյանքի ֆունդամենտալ հիմքն է: Թեև արտաքին ազդակները կարող են ազդել վարկածի ձևավորմանը, սակայն անձի խնդիրը ոչ թե տվյալ ազդակի նշանակության, այլ իր ներքին ապրումների հիմքում ընկած իմպլիցիտ իմաստներից բխող կոնցեպտուալ վարկածների ճշգրտումն է: Գիտության զարգացման հիմքում ընկած են սուբյեկտիվ ներքին վարկածները, որոնք հետագայում ենթարկվում են ճշգրտման և ստուգման: Այս դեպքում անձը էմպաթիան ուղղում է իր նկատմամբ՝ հասկանալու համար իր փորձի իմպլիցիտային իմաստները՝ ի տարբերություն օբյեկտիվ գիտելիքի ոլորտի, որտեղ էմպաթիկ հասկացումն ուղղված է որոշակի իմբի: Սուբյեկտիվ գիտելիքը Ռոջերսը համապատասխանեցրել է հոգեդինամիկային՝ *ֆենոմենոլոգիական կամ միջանձնային գիտելիք*, որը համապատասխանում է ֆենոմենոլոգիական-էքզիստենցիալ ուղղությանը և այն միջանկյալ դիրքում է վերոնշյալ երկու գիտելիքների միջև: Այս դեպքում անձի էմպաթիկ վերաբերմունքն ուղղված է դեպի այլ անձի ռելևանտ ֆենոմենոլոգիական դաշտը՝ հասկանալու անձի անձնային իմաստները և պարզելու, թե որքան ճշգրիտ է մեր հասկացումը: Անձի ֆենոմենոլոգիական աշխարհից ստացված գիտելիքների ստուգման համար մենք ուղղորդում ենք էմպաթիկ վերաբերմունքն անձի ներքին կոորդինատների համակարգին (frame of reference)՝ ամբողջական և ճշգրիտ պատկեր ստանալու համար և այս եղանակով ստացված գիտելիքը նպաստում է անձի վերաբերյալ հոգեբանական սկզբունքների ձևավորմանը: Այս եղանակով ճշգրիտ գիտելիքի ստացման նախապայմանն անձի էմպաթիկությունը և հնարամտությունն է [6]: Հոգեթերապիայում առավել արդյունավետ է համարվում այս ուղղությունը: Եվ ինչպես Ռոջերսն է նշում, «յուրաքանչյուր մարդու ֆունդամենտալ էությունը կառուցողական է և արժանի վստահության» [1, էջ 28]: Սա նշանակում է, որ եթե վարքն ուսումնասիրելու համար մենք

կարող ենք գիտափորձով ստանալ օբյեկտիվ գիտելիքներ մարդու վարքի մասին և տարածել այդ արդյունքները որոշակի խմբի նկատմամբ, ինչպես նաև կրկնել այդ գիտափորձը բազմակի անգամ, ապա հոգետրավմայի ուսումնասիրման պարագայում այդ մեթոդաբանությունը կլինի ոչ տեղին և անձի վերապրած հոգետրավմատիկ փորձի և ապրումների հասկացումը ենթադրում է էմպաթիկ վերաբերմունքի հասկացման ճանապարհով գիտելիքի ստացում: Ինչպես Մ. Քրոթթին է նշում, այս դեպքում հետազոտողի դերը ոչ այնքան օբյեկտիվության, որքան ռեֆլեքսիվության մեջ է և նրա կողմից հետազոտական գործընթացի մի մասը լինելու գիտակցումն է [7, էջ 290]: Հետևաբար, կորստի և վշտի ուսումնասիրման դեպքում առաջնային նշանակություն է ստանում ֆենոմենոլոգիական մոտեցման կիրառումը հետազոտության մեջ:

Ի մի բերելով ախտաբանական վշտի վերաբերյալ տեսական և հետազոտական առկա արդյունքները, պարզ է դառնում, թե ինչպիսի դժվարությունների է բխվում հետազոտողը նշված խնդիրն հետազոտելիս, ինչն էլ հիմնավորում է ֆենոմենոլոգիական մոտեցման կարևորությունն այս ոլորտում:

Կորուստը (bereavement) և վիշտը (grief) ուսումնասիրող տեսություններում կատարվել է վշտի ախտանիշների և հոգեկան գործունեության վրա ունեցած անբարենպաստ հետևանքների նկարագրություն, փորձ է արվել վերլուծել և բացահայտել ախտաբանական վիշտը պայմանավորող գործոնները՝ հաշվի առնելով վիշտ ապրող անձի միջանձնային հարաբերությունների առանձնահատկությունները (օբյեկտային հարաբերություններ, կապվածության ոճեր, կոգնիտիվ սխեմաներ, համոզմունքներ և այլն), վերլուծել ռիսկի այլ գործոններ և անձի հարմարման առանձնահատկությունները հաղթահարման գործընթացում: Նշանակալից անձի կորուստը այն տրավմատիկ իրադարձություններից, որը խաթարում է անձի համոզմունքային համակարգը և աշխարհայացքը՝ առաջ բերելով ոչ կոնգրուենտ վիճակ, թե ինչպիսին «պիտի» լինի աշխարհը և ինչպիսին այն «կա» (Ք. Մ. Պարկս). Բացի այդ, կորուստից հետո առաջ է գալիս անձնային և սոցիալական նույնականության վերահաստատման խնդիր, որը դառնում է ակտուալ և ստիպում անձին վերաիմաստավորելու հոգետրավմատիկ փորձը և ձևավորելու անձնային նոր նույնականություն: Ռ. Նայմեյերը նշում է, թե որքան կարևոր է իմաստի ձևավորումը անձնային պատմությունների (personal narrative) վերակառուցման եղանակով, որն օգնում է հաղթահարել հոգետրավ-

ման: Լ. Քալիունը և Ռ. Թեդեշին, որոնց հետազոտություններն ուղղված են հոգետրավմայի և անձնային աճի կապի ուսումնասիրմանը, նշում են, որ կորստի հոգետրավմայի հաղթահարումը շատերի մոտ հանգեցնում է անձնային աճի՝ կապված Ես-ի զգացման փոփոխության, ինքնառեֆլեքսիայի և ինքնագիտակցման մեծացման, էկզիստենցիալ և հոգևոր աճի հետ [2]:

Հաշվի առնելով, որ վշտի ապրումը բարդ գործընթաց է և դրա ուսումնասիրումը դասվում է սենզիտիվ հետազոտությունների շարքին, ուստի դրա վերաբերյալ ֆունդամենտալ ասպեկտների և կոնցեպտուալիզացիաների դուրսբերումը բախվում է հետազոտման մի շարք դժվարությունների՝ կապված հետազոտական մեթոդաբանության, մեթոդի ընտրության և էթիկական խնդիրների հետ: Վշտի հոգեախտորոշման ոլորտում ներկայումս մշակվել են մի շարք ինքնագնահատման հարցաբաններ, որոնք թույլ են տալիս դուրս բերել ախտաբանական վշտի ախտանիշները, դրանց ինտենսիվության չափը և անբարենպաստ հետևանքները, դիսկի գործոնները և այլն: Սակայն այս խնդրի ուսումնասիրման համար ստանդարտիզացված մեթոդիկաների կիրառումը խիստ սահմանափակում է առավել բովանդակային ասպեկտների ուսումնասիրումը: Եվ այդ դեպքում որակական մեթոդների կիրառման կարիք է զգացվում: Դրանք թույլ են տալիս վշտի ապրման գործընթացի անձնային իմաստների, գործընթացի դինամիկ փոփոխությունների վերաբերյալ ամբողջական տեղեկություն ստանալ, վերլուծել և կատարել համապատասխան մեկնաբանություններ:

Այդ նպատակով կիրառվում են կլինիկական գրույցի, անհատական դեպքերի վերլուծության մեթոդը (case study), բովանդակային վերլուծությունը (content analyze) և էթնոգրաֆիան: Վերջիններս թույլ են տալիս բացահայտել որոշակի անձի կամ մշակույթային խմբի վշտի հակազդումների հիմքում ընկած եզակի իմաստներն ու նշանակությունները: Նշված հանգամանքներն հաշվի առնելով, պարզ է դառնում, թե որքան արդյունավետ են նմանատիպ խնդիրների հետ աշխատանքում որակական մեթոդների իրականացումը, որտեղ կարևոր նշանակություն ունի հետազոտողի անձը և հոգեթերապևտիկ հմտությունները փորձարկվողի հետ փոխազդեցության ընթացքում [5]: Այս ոլորտում լայն կիրառություն է ստացել կլինիկական գրույցի մեթոդը (կառուցվածքային, կիսակառուցվածքային և ոչ կառուցվածքային), որը թույլ է տալիս դուրս բերել առավել խորքային պատճառահետևանքային կա-

պեր: Այն թույլ է տալիս վշտի ապրման գործընթացի ամենատարբեր ասպեկտներ հետազոտել և ժամանակի ընթացքում հետևել դրանց ընթացքին, ֆիքսել վշտի ապրման գործընթացում փոփոխությունները և գնահատել նաև հոգեթերապևտիկ աշխատանքն այդ գործընթացում [5]: Այսպես, վերջին ժամանակաշրջանում կորստի, վշտի և պահլատիվ ինամքի ոլորտում լայն տարածում է գտել մեկնաբանողական ֆենոմենոլոգիական վերլուծությունը (IPA) որպես որակական հետազոտական մեթոդ: Վերջինիս հիմքում ընկած են Հուսսերլի ֆենոմենոլոգիական, Հայդեգերի էքզիստենցիալ և Գադամերի հերմենևտիկական փիլիսոփայական հայեցակարգերը: Այսինքն, այն հանդիսանում է ֆենոմենոլոգիական և էքզիստենցիալ գաղափարների սինթեզ, որի դրույթները կիրառվում են գիտական հետազոտական դաշտում, մասնավորապես, հումանիտար գիտությունների ոլորտում: Այն իդիոգրաֆիկ մոտեցում է, որի նպատակը անձի վերապրած փորձի վերլուծությունն է նրա կյանքի սոցիալ-մշակութային և միջանձնային հարաբերությունների համատեքստում: Եվ այս գործընթացը նպաստում է անհատական դեպքերի վերլուծությամբ ուսումնասիրվող խնդրի վերաբերյալ ֆենոմենների դուրսբերմանը և դրանց էության՝ իմաստի հասկացմանը: Այստեղ կենտրոնական նշանակություն ունի այն, թե ինչ իմաստ է վերագրում անձը իր կյանքի իրադարձություններին և դա հնարավոր է «չափել» միայն մեկնաբանման գործընթացում: Այս դեպքում հետազոտողի գլխավոր խնդիրը ուսումնասիրվող ֆենոմենների բացատրումը և պատճառահետևանքային կապերի մեկնաբանումն է [4]: Կորուստի և վշտի հետազոտման ոլորտում ֆենոմենոլոգիական վերլուծության մեթոդը լայնորեն կիրառվում է՝ բացահայտելու կորուստ վերապրած անձի կողմից մահվան ընկալումը, վերապրված հոգետրավմայի ազդեցությունը նրա համոզմունքների և էքզիստենցիալ փոփոխությունների վրա, հոգետրավմատիկ փորձի իմաստավորումը նրանց կողմից, այսինքն, ընդգծում է մարդկային իմաստների և գործողությունների մեկնաբանությունը՝ մահվան, կյանքի, սեփական անձի, աշխարհի ընկալումները վերլուծելիս և այլն: Ֆենոմենոլոգիական վերլուծությունը հաճախ կատարվում է կիսակառուցվածքային կլինիկական գրույցի մեթոդով ստացված արդյունքների՝ ձայնագրությունների և տեքստերի վերլուծման և մեկնաբանման համար [3]: Հետևաբար, մեծ նշանակություն է տրվում հետազոտողի կողմից ուսումնասիրվող ֆենոմենի հետազոտման, մեկնաբանման, ներկայացման եղանակներին, քանի որ հետազո-

տողի համոզմունքները, դիրքորոշումները և անձնական փորձը՝ կապված նմանատիպ խնդրի հետ, մեծապես կարող են ազդել ստացված արդյունքների մեկնաբանման վրա [7]:

Ֆենոմենոլոգիական վերլուծությունը ենթադրում է անձի սուբյեկտիվ փորձին հնարավորինս մոտ լինել՝ նրա ամենօրյա դիսկուրսից այն կողմ գտնվող հոգեբանական իմաստների բացահայտման համար: Հետազոտողն անձնապես ներգրավված է այցելուի նյութի՝ պատմության մեջ և նրա փոխազդեցությունը այդ գործընթացում էական դեր է խաղում՝ ի տարբերություն օբյեկտիվ հետազոտողի: Այս դեպքում զրույցով ստացած տեղեկությունը մանրամասն վերլուծում է՝ նշելով առաջացած զուգորդումները, կատարելով վաղ մեկնաբանություններ, գտնելով ընդհանրություններ և հակադրություններ:

Վերլուծության հաջորդ փուլում հետազոտողի նպատակը այցելուի տեսակետը հասկանալն է ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ: Այս փուլը ենթադրում է գլխավոր թեմաների (superordinate themes) դուրսբերում: Երրորդ փուլում վերլուծողը կատարում է ռեդուկցիա՝ բացահայտելով էական կապերը և դուրս բերելով ենթաթեմաները (clustering themes), որին հաջորդում է յուրաքանչյուր նշված թեմայի բացատրությունը և մեկնաբանությունը հետազոտողի կողմից: Հետազոտողը կատարում է նյութի նկարագրողական, լեզվաբանական և հայեցակարգային ասպեկտների վերլուծություն [4]:

Հիմնվելով վերոնշյալի վրա՝ կարող ենք փաստել, որ ֆենոմենոլոգիական և էքզիստենցիալ մոտեցումներն ապահովում են մեթոդաբանական հիմքեր և արդյունավետ եղանակներ հարազատի կորուստի և վշտի վերապրման ուսումնասիրման համար:

Գրականություն

1. **Шавердян Г. М.**, Основы психотерапии, Питер, 2007, 208 стр.
2. **Broadbent J. R.**, 'The bereaved therapist speaks'. An interpretative phenomenological analysis of humanistic therapists' experiences of a significant personal bereavement and its impact upon their therapeutic practice: An exploratory study, *Counselling and Psychotherapy Research*, p. 263-271, 2013, DOI: 10.1080/14733145.2013.768285
3. **Seymour J., Clark D.**, Phenomenological approaches to palliative care research, *Palliative Medicine*, V. 12, Issue 2, p. 127-131, 1998
4. **Simonsen G., Cooper M.**, Helpful aspects of bereavement counselling: An interpretative phenomenological analysis, *Counselling and Psychotherapy Research*, V. 15, Issue 2, p.119-127, 2015, DOI: 10.1002/capr.12000

5. **Stroebe M., Stroebe W., Schut H.**, Bereavement research: methodological issues and ethical concerns, *Palliative Medicine*, V. 17, p. 235-/240, 2003
6. **Rogers C.**, Toward a Science of the Person, *Journal of Humanistic Psychology*, V. 3., Issue 2, 1963, p. 72-92
7. **Rolls L., Relf M.**, Bracketing interviews: addressing methodological challenges in qualitative interviewing in bereavement and palliative care, *Mortality: Promoting the interdisciplinary study of death and dying*, V. 11, Issue 3, p. 286-305, 2006, DOI:10.1080/13576270600774893

Мари Аветисян
Факультет философии и психологии ЕГУ
Лаборант кафедры социальной психологии
Нелли Ароян
Факультет философии и психологии ЕГУ
к.п.н., доцент кафедры социальной психологии

ФЕНОМЕНОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ ПАТОЛОГИЧЕСКОГО ГОРЯ В ПРОЦЕССЕ ЕГО ИССЛЕДОВАНИЯ

Ключевые слова: формы психологического знания, феноменологический анализ, утрата, патологическое горе.

В статье рассматриваются три формы психологического знания и подтверждается первичность феноменологического анализа в исследовании патологического горя как метод качественного исследования.

Mari Avetisyan
Faculty of Philosophy and Psychology, YSU
Research Assistant of the Department of Social Psychology
Nelli Haroyan
Faculty of Philosophy and Psychology, YSU
PhD, Associate Professor of the Department of Social Psychology

PHENOMENOLOGICAL ANALYSIS OF PATHOLOGICAL GRIEF IN THE PROCESS OF ITS INVESTIGATION

Key words: forms of psychological knowledge, phenomenological analysis, loss, pathological grief.

The article discusses three forms of psychological knowledge and justifies the priority of phenomenological analysis of studying pathological grief as qualitative research method.

ՔԱՂՑԿԵՂԻ ՄԱՍԻՆ ԽՈՍԵԼՈՒ ԵՆՈՐ ԼԵԶՈՒ

Բանալի բառեր՝ հոգեուռուցքաբանություն, քաղցկեղ, հոգեւոցիալական:

Քաղցկեղ տերմինը միավորում է հիվանդությունների խումբ, որոնք բնորոշվում են բջիջների աստիպիկ աճով՝ այլ օրգաններ ներթափանցելու կամ դրանց վրա տարածվելու հետագա վտանգով [2]: Այս գուտ ֆիզիոլոգիական նկարագրությունը ենթադրում է հոգեւոցիալական ոլորտի բազմաթիվ խնդիրներ: Անցյալ դարի 50-ական թվականներին հայտնվեցին այս թեմայով առաջին հոգեբանական հոդվածները, իսկ 70-ականներին Ջիմի Հոլանդը կամ, ինչպես նրան անվանում են, «հոգեուռուցքաբանության մայրը» բժիշկներին ուղղեց իր հարցը՝ իսկ ինչ են զգում քաղցկեղով հիվանդները իրենց իրավիճակի հետ կապված: Պետք է նշել, որ այն տարիներին ԱՄՆ-ում բժիշկները չունեին ժամանակ՝ մտածելու այս հարցի շուրջ [7]: Այսօր հոգեուռուցքաբանությունը իր անվիճելի տեղն է զբաղեցնում քաղցկեղով հիվանդների խնամքի մոդելում՝ ոչ միայն ԱՄՆ-ում, այլ մի շարք այլ զարգացած պետություններում:

Այս հոդվածում մենք կդիտարկենք հոգեուռուցքաբանություն հասկացությունը՝ ինչ է այն ենթադրում, որոնք են դրա նպատակները, ինչպես է այն կապված հոգեբանության հետ և ի վերջո, ինչպես ստացվեց, որ հիվանդությունների մեկ խմբի շուրջ կառուցվեց մի ամբողջ գիտական դիսցիպլին: Այս հարցադրումներին պատասխանելու համար անխուսափելիորեն պետք է անդրադառնանք ուռուցքաբանության զարգացման պատմության վերջին դարերի ընթացքում:

19-րդ դարում քաղցկեղի միակ հումանիշը մահն էր: Մարդիկ սարսափում էին այդ ախտորոշումից, դրա մասին ընդունված չէր խոսել, իսկ հիվանդից այդ ախտորոշումը առհասարակ թաքցնում էին, քանի որ համարվում էր չափազանց անգույթ նրան «հասցնել նման հուսալքության»: Հիվանդներից նաև հաճախ խուսափում էին, քանի որ տարածված էին քաղցկեղով վարակվելու վերաբերյալ միջերը: Քաղցկեղը գու-

գորդվում էր խարանի, ամոթի, հուսալքության հետ [4, էջ 207, 5, էջ 253, 6, էջ 3]:

20-րդ դարի սկիզբը նշանավորվեց բժշկության մեջ մի շարք կարևորագույն հայտնագործություններով: Քաղցկեղի որոշ տեսակների վաղ փուլերի համար հնարավոր դարձան բարեհաջող վիրահատական միջամտությունները, ինչպես նաև, սկսվեց կիրառվել ճառագայթային թերապիան: 40-ականներին գրանցվեց լեյկիմիայի բուժման առաջին դեպքը, իսկ 50-ականներին սկսեցին կիրառել քիմիոթերապիա:

Քաղցկեղի բուժման գործում նորանոր հաջողությունները թույլ տվեցին ուշադրություն դարձնել երևույթի հոգեւոցիալական կողմին. սկսեց կարևորվել ոչ միայն կյանքը, այլև դրա որակը: Իսկ արժանապատիվ կյանքը ենթադրում է նաև արժանապատիվ մահ: Այդ պատճառով զարմանալի չէ, որ պայքար սկսվեց ոչ միայն քաղցկեղ վերապրողների, այլև տերմինալ փուլում գտնվողների հոգեբանական և սոցիալական կարիքների համար: 60-ականներին Էլիզաբեթ Կյուբլեր-Ռոսը ձեռնոց նետեց հիվանդության տերմինալ փուլում գտնվող անձանցից իրենց ախտորոշումը թաքցնելու սովորույթին, իսկ Մեսիլ Մոնդերսը Միացյալ Թագավորությունում սկսեց պալիատիվ շարժումը [6, էջ 7]:

Խոսելով մարդկային արժանապատվության մասին ուղղակիորեն հանգում ենք ընտրության և հետևապես գիտակցվածության թեմաներին: Ինչպես նշվեց, երկար ժամանակ ընդունված չէր բարձրաձայնել քաղցկեղի ախտորոշումը, հետևապես հիվանդը զրկվում էր գիտակցման, ապրման, ընդունման հնարավորություններից: Հոգեուռուցքաբանության ծնունդը ընդունված է հաշվարկել 70-ականների կեսերից, երբ ի լրումն այլ նվաճումների, խախտվեց քաղցկեղի մասին լրության մթնոլորտը. հիվանդներին սկսեցին հայտնել իրենց ախտորոշումը [3, էջ 3, 4, էջ 207]: Այս փոփոխության կարևորությունը դժվար է գերազնահատել. ախտորոշման բացահայտ քննարկումը հիվանդին բուժման պասիվ օբյեկտից դարձրեց սուբյեկտ, որը լիիրավ մասնակցում է իր կյանքին անմիջականորեն վերաբերող որոշումների կայացմանը:

Այսպիսով, հոգեուռուցքաբանության զարգացումը սերտորեն կապված է ուռուցքաբանության ոլորտի զարգացման հետ: Այսօր այն համարվում է ուռուցքաբանության ենթաբաժիններից մեկը, որը 21-րդ դարում ներառված է ուռուցքաբանության գրեթե ողջ կոնսինիումում՝ քաղցկեղով հիվանդանալու ռիսկի իջեցմանը ուղղված կենսատճի և սովորությունների ձևավորման վերաբերյալ վարքաբանական հետազո-

տություններ, վաղ ախտորոշմանը նպաստող վարքի և վերաբերմունքի ձևավորում, գենետիկական ռիսկերի և տեստավորման հոգեբանական խնդիրներ, ակտիվ բուժման ընթացքում ախտանիշների վերահսկում (տագնապ, դեպրեսիա, դելերիում, ցավ և հոգնածություն), վերապրածների մոտ հոգեբանական հետևանքների վերահսկում, պալիատիվ խնամքի և կյանքի ավարտի խնամքի հոգեբանական ասպեկտների վերահսկում: Հոգեբանական և ֆիզիոլոգիական ոլորտների կապը քաղցկեղով հիվանդանալու ռիսկի, կյանքի որակի և վերապրման երևույթների հետ գտնվում է ժամանակակից հետազոտությունների ուշադրության կենտրոնում: Հոգեուռուցքաբանության ուշադրության կենտրոնում են նաև հիվանդի մտերիմները, ինչպես նաև օնկոլոգիական հիվանդների հետ աշխատող բուժանձնակազմը [6, էջ 3]:

Հոգեուռուցքաբանության գլխավոր ձգտումը հիվանդակենտրոն խնամքի ապահովումն է: Այս դեպքում հիվանդի հետ աշխատող թիմը կառուցում է իր գործունեությունը ելնելով տվյալ անձի կարիքներից և պահանջմունքներից, իսկ հիվանդը հանդիսանում է բուժման և ապաքինման գործընթացի ակտիվ մասնակիցը: Բոլոր իրավիճակներում անձը հանդիսանում է իր կյանքի լավագույն էքսպերտը և միակ պատասխանատուն, և հիվանդությունը, կամ դրա հանդեպ հանրության վերաբերմունքը չպետք է փոխի այս իրականությունը:

Երրորդ հազարամյակի սկզբում հոգեուռուցքաբանությունը դարձավ ուռուցքաբանության առավել երիտասարդ ենթաբաժինը և միաժամանակ հոգեբանության և հոգեմարմնական բժշկության առավել հստակ սահմանված և նեղացված ենթաբաժինը [6, էջ 3]:

Հայաստանում հոգեուռուցքաբանությունը գտնվում է սաղմնային վիճակում: 2014 թ. ԵՊՀ Կիրառական հոգեբանության կենտրոնում ստեղծվեց «Հոգեուռուցքաբանության զարգացումը Հայաստանում» առխաձեռնող թիմ, որը աշխատանքներ է տանում Հայաստանում հոգեուռուցքաբանության ներդրման, ուռուցքաբանության և հոգեբանության միջև համագործակցության ստեղծման, քաղցկեղով հիվանդի կյանքի որակի վերաբերյալ նոր տեսլականների մշակման ուղղությամբ: Ինչպես և միջազգային փորձի պարագայում առաջնային աշխատանքները կապված են լրության մթնոլորտի խախտման հետ: 2012 թ. իրականացված հետազոտությունը ցույց տվեց, որ ուռուցքաբանների մեծամասնությունը (հետազոտվածների 85%) համարում է, որ քաղցկեղով հիվանդը իրավունք ունի իմանալ իր ախտորոշումը [1]: Չնայած դրան,

փաստացի, քաղցկեղի ախտորոշումը որպես կանոն թաքցվում է հիվանդից: Նման իրավիճակին նպաստում է այն յուրահատուկ ստիգման, որով բնորոշվում է քաղցկեղը մեր իրականության մեջ: Վերոհիշյալ հետազոտության սահմաններում իրականացված ազատ զուգորդությունների մեթոդը ցույց տվեց, որ հիվանդության հետ անմիջական առնչություն ունեցող անձանց խմբում քաղցկեղը զուգորդվում է առաջին հերթին մահվան հետ [1]: Մյուս կողմից, դեռևս արդիական են հոգեբանական կարիքների՝ որպես ոչ կարևորների մասին պատկերացումները: Ինչպես նշում է Ջիմմի Հոլանդը, հոգեուռուցքաբանության կայացման մեծագույն խոչընդոտներից մեկը եղել է այն միտքը, որ հոգեկան առողջությունը տեղ չունի քաղցկեղով հիվանդների խնամքում [7]: Այս ամենը մի կողմից վկայում է, Հայաստանում հոգեուռուցքաբանության սաղմնային վիճակի մասին, մյուս կողմից հուշում է, որ մենք գտնվում ենք զարգացման ճիշտ ճանապարհի վրա:

Գրականություն

1. **Ասրիբաբայան Ե., Գևորգյան Ղ.,** Քաղցկեղի հանդեպ վերաբերմունքի առանձնահատկությունները հիվանդների, հիվանդության հետ առնչվող անձանց և հասարակության մոտ.- Երևանի պետական համալսարան, 2012 թ.:
2. "Defining Cancer". National Cancer Institute. Retrieved 10 June 2014.
3. Grassi Luiggi, Riba Michelle, Clinical Psycho-Oncology: An International Perspective.- John Wiley and Sons, May 2012, 337pages.
4. Jimmie C. Holland, History of Psycho-Oncology: Overcoming Attitudinal and Conceptual Barriers- Psychosomatic Medicine 64:206–221 (2002).
5. Jimmie C. Holland, Psychological Care of Patients: Psycho-Oncology's Contribution, American Cancer Society award lecture- jco.ascopubs.org, August 27, 2014.
6. Jimmie C. Holland, William S. Breitbart, Psycho-Oncology, Second Edition- Oxford, 22 March 2010, 685 pages.
7. Rabiya S. Tuma, 'Mother of Psycho-Oncology' Discusses Field's Need for Parity and People Power- Oxford Journals, Volume 96, Issue 1, Pp. 8-10.

Асрибабаян Ева
Факультет философии и психологии ЕГУ
Аспирант кафедры и истории философии

НОВЫЙ ЯЗЫК ДЛЯ РАЗГОВОРА О РАКЕ

Ключевые слова: *Психо-онкология, рак, психосоциальный.*

Психо-онкология является сравнительно молодой научной дисциплиной, которая образовалась на стыке онкологии и психологии и призвана способствовать улучшению качества жизни онкологических больных. В данной статье рассматриваются история развития, цели и задачи психо-онкологии, а также актуальная ситуация данной научной сферы в Армении.

Yeva Asribabayan
Faculty of Philosophy and Psychology, YSU
PhD student of the Department of Social Psychology

THE NEW LANGUAGE OF SPEAKING ABOUT CANCER

Key words: *Psycho-oncology, cancer, psychosocial.*

Psycho-oncology is a new field created on the crossroads of oncology and psychology and aiming at improving the cancer patients' quality of life. In this article, the development history of psycho-oncology, its principal goals and objectives and situation of this scientific field in Armenia are discussed.

**ՀՈԳԵՍՈՍԱՏԻԿԱՆ ՈՐՊԵՍ ԲԺՇԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ
ԱՐԴԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՀԻՄՆԱՀԱՐՑ**

Բանալի բառեր՝ հոգեսոմատիկա, հոգեմարմնական բժշկություն, հոգեմարմնական հարաբերակցություններ, մարմնական խանգարումներ:

